



Шумлук
чиляфлаврагъни


1259

Mit freundlichen Grüßen

ՏՊ. ՍԵՒԱՆ
ՓՈՍՏԱՐԿՂ. 2600
ՊԼՅՈՒՐ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ


Աղուկը վաճառքի գնայ



«ՍԵՒԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏՈՒՆ, 1963

Մեծ Կոմիտասի ողբերգական կեանքին եւ անմահ գործին է նուիրուած Պարոյր Սեւակի «Ճնլուեի Չանգակատուն» պոեմը:

Հեղինակը չի սահմանափակուել իր հերոսի կենսագրական տուեալների նկարագրութեամբ. նա ձգտել է տալ Կոմիտասի դերն ու նշանակութիւնը հայ ժողովրդի կեանքում, ժողովրդի պատմական ճակատագրի, նրա կենցաղի ու սովորութիւնների, հայ քնաշխարհի պատկերման ֆոնի վրայ:



ԿՈՄԻՏԱՍ

ՆԿԱՐ՝ ՄԵԼՔԻՆ ՔԵՊԱՊՃԵԱՆԻ



ԿՈՄԻՏԱՍԻ

ԾՆՆԴԵԱՆ 90-ԱՄԵԱԿԻ ԱՈՒԹԻՒ

ՅԱՅԳԱԼՈՅՍԻ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ԱԽԵՏԻՍԻ

Հազար ութ հարիւր վաթսունինն թուին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տուին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,—
Դժուար է ասել:

Սակայն այդ թուին Մայր Հայաստանի
Արդանդը եղաւ սրբօրէն բեղուն:
Մի մանուկ ծնուեց Լոռուայ Դսեղում...
Նա յետոյ պիտի դառնայ պատանի,
Ե՛ւ երիտասարդ, ե՛ւ այր իմաստուն,
Անբախտ Մարոյին՝ լացով՝ ապանի,
Մեր Հառաչանքը հասցընի Աստծուն:
Մրմունջից դալուստ նրա բերանով
Մարոյի նանը պիտի ողբ ասի,
Մարայ ղօրքի հետ Դաւիթը խօսի,
Գիքորը կանչի. «Էսաի՛ համեցէք...»:
Նա պիտի երգի՝
Ինչ է կամեցել
Իր մոխրակալած–հրակէզ հոգին,
Եւ՝ որքան տրտում, նոյնքան կենսալից՝
Տարիները յետոյ նա պիտի դառնայ
Մի ժողովրդի աղնիւ կենսագիր...

Միեւնոյն թուին, Լոռուց չատ հեռու՝
Անատոլուի մթին խորքերում,

Մէկ ուրիշ մանուկ լոյս աշխարհ եկաւ։
Մինչ հայրը նրա՝ Գեւոն կօշիկակար,
Գոպնոցը հանեց, արխաթուղ հագաւ,
Հարեւան–դրկից՝ մի–մի չիչ օղով՝
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի։
Ցեղոյ հերթն եկաւ կանանց հոսանքին.
Մի քաս խաւիծով կամ ձուածեղով՝
Ծննդկանի շուրջ նստեցին նրանք՝
Որպուն մաղթելով արեւշատութիւն,
Նորատի մօրը՝
Շուտ ապաչխարանք,
Աղուորիկ մի հարս,
Բարի տատութիւն...
. . . . . .
Երեւի այդ օր —
Եթէ ոչ մարդկանց,
Գէթ ամենալուր եւ ամենապօր բնութեան համար —
Տօն էր անսովոր.
Չէ՞ որ նա պիտէր, թէ ում է ծնել,
Լսում էր չէ՞ որ,
Թէ ի՛նչ նուագներ եւ ի՛նչ անհամար,
Ի՛նչ հայաչխարհիկ երգեր են հնչում
Այդ երկու թխլիկ նորածիններին
Դեռ ոչինչ չասող առաջին ճիչում...

Երեւի այդ օր ցերեկը ճգուեց՝
Ինչպէս նոր զարթնած կարիճի նման,
Իսկ առուներները՝
Չարուած ապատող չնիկների պէս
Պոչերը քաշած՝ լուռ կծկըւեցին...

Երեւի ահեղ ջրվէժներն այդօր
Հոսեցին անճայն՝ ինչպէս նկարում,
Եւ լոյսը երգեց,
Քարը պար եկաւ...

Անատոլուի աւազուտներուն երեւի այդօր
Մարդիկ — քնի մէջ —
Լառուայ ձորերի ստուերն ըմպեցին,
Ջահել այրու պէս ծարաւ արտերը եւ այդին պատակ
Յաղաւրդ ստացան կրքոտ Դեբեդի ջրից անապակ...
Իսկ Լառուայ ձորում քուն մտած մարդկանց
Երա՛զ այցելեց,
Մի հրաշալի՛ց — անսովո՛ր երազ.
Հարաւից չուած Հազարան մի հաւք,
Սոխակի ձայնով — ուժով անզըգի,
Աքլորների հետ լուսայոյս չեփորեց
կառուրներն ի վար,
Յետոյ զարաւոր կաղնու վիշակը կտցով քչփորեց
Եւ — մէկ էլ յանկարծ —
Իր կտցի վրայ այնտեղից հանեց
Շողեր ծալծլուած,
Շողեր զարսիղարս՝
Օձունի վանքի Շարակնոցի պէս:
Մինչ այդ շողերը, ծալ-ծալ բացուելով,
Հէնց այն է պիտի —
Ծլի՛նք հա ծլի՛նք — գնդային կարմիր,
Հազարան հաւքը հրթիռուեց — գնաց՝
վերեւ ուրացող աստղի նման,
Եւ...թառի՞ց արդեօք Լուսաստղի վրայ,
Թէ՞ ինքը դարձաւ Լուսաստղ մի նոր...

...Երեւի այդօր — քանի՛ դար յետոյ —
Երկինք ու երկիր հաչտուեցին նորից...
...Երեւի այդօր — քանի՛ դար յետոյ —
«Հայաստան» բառից պոկուեցին ընկան
«Ռուսա»-ն ու «Տաճկա»-ն...

ՂՕՂԱՆՋ ՈՐԲՈՒԹԵԱՆ

Թէ ժողովրդի գաւակն իսկական՝
Ժողովրդի պէս ինքն էլ որբ մնաց.
Նա նոյնիսկ չկար եւ մի տարեկան,
Երբ... մայրը գնաց:

Ա՛խ, եթէ գնաց՝
Նրա լոյս հոգին թող որ համբառնայ
Արժանի դառնայ
Իր հաւատացած երկնային գահին:

Բայց ինչո՞ւ գնաց Հայոց թագուհին:

Մնար
Ու ծիծ տար
Իր Սողոմոնի՛ն — մեր Կոմիտասի՛ն:
Մնար
Ու հոգար
Մեր մինուճարի՛ — իր որդո՛ւ մասին:

Մնար ու նրան մայրութիւն անէր.
Ցուսահատութեան, տրտմութեան պահին
Նրա ճակատի
Ամպերը վանէր,
Նախ՝ նրա ոտի
Ու յետոյ սրտի
Փշերը հանէր:

Մնար, որ յետոյ,
Շա՛տ ու չա՛տ յետոյ,
Երբ որդին քալեց մութ ապահետով,
Որ անդարձ եղաւ ու եղաւ անել,
Թերեւս նա իր մայրական սրտով
Իր մինուճարի
Ու մեր հանճարի
Սեւ ցաւը տանէր...

Մնար, որ նրան մի ողջ ժողովուրդ
«Մեծ մա՛յր» անուանէր,
«Վեհամա՛յր» կոչէր.
Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
Իր բերնին տանէր,
Փչե՛րը պաչէր...

Մնա՛ր... Ձմնա՛յ:

Գէթ հայրը մնար...
Բայց նա էլ գնաց,
Երբ որդին չկար դեռ տաս տարեկան:
Իր ժողովրդի զաւակն իսկական՝
Ժողովրդի պէս նա որբուկ մնաց:
Նա մնաց անտուն, մնաց բնաւեր:
— Տօ լաւն տնաւե՛ր...
Եղաւ անդադար, եղաւ քնաւեր:
— Տօ լաւն տնաւե՛ր...

Գրկանոց հասակ, վիրաւոր սրտիկ,
Աչքերում՝ արցունք, ճակատին՝ քրտինք,
Աչնան պաղ քամուն եւ ձմրան ցրտին
Որբուկն ո՞ւր մնայ, որբուկն ո՞ւր գնայ,
Որտե՞ղ տաքանայ, ո՞ւմ թոնրան չրթին:
— Տօ լաւն տնաւե՛ր...

Որբուկի սիրտը՝ ապակի փշուր,
Ա՛խ, դրսից կարմիր — ներսից փուշ մասուր,

Ոչքը՝ մոլոր գառ, աչխարհքը՝ մսուր, —
Մ'վ նայի վրան կամ ո՞վ տայ նրան
Մի պատառ ծպխա, չոյանք մի փշուր:
— Տo լաճ տնաւե՛ր...

Դռնէդուռ երդեց — ձայնը՝ կլկլան,
Բերանն էր կ'երգէր, աչքերը կու լան:
Դաւնչիկից կ'ելնէր ծխի տաք քուլան, —
Սրտիկն էր էրում, չէր տեսնում ոչ ոք,
Ցաւերն էին փուքս, անճիկն էր քուրան...
— Տo լաճ տնաւե՛ր...

Երկու ձիպ տարի նա այսպէս պիտի
Ման գայ երդելով ու չուրջը դիտի
Մի հացի յոյսով կամ մի հաւկիթի,
Մխոքը՝ հազար տեղ, աչքը՝ մի կէտի...
Սկիզբըդ խոց էր, վերջդ՝ ո՞վ դիտի...
— Տo լաճ տնաւե՛ր...

ՂՕՂԱՆՋ ՅՆԾՈՒԹԵԱՆ

Ֆեւոն չթողեց որդուն ապարանք,
Ոչ էլ թապուհին թողել էր գանձեր,
Բայց ինչ ունէին–չունէին նրանք՝
Իրենց որբացած որդուն էր անցել:

Իսկ ի՞նչ ունէին: Լոկ ձա՛յն կլկըլան.—
Մէկ այնպէս մեղմիկ,
Ասես թէ գինով լցնում են կուլան.
Մերթ այնպէս գնդուն,
Ասես թէ կիրճում հովն է չընկչընկում.
Մերթ այնպէս խաղաղ,
Կաքաւն է ասես սալմոսում «կղա».
Մերթ այնպէս յորդուն,
Ասես ընկել ես ջաղացի ջրառուն...

Նրանք գիտէին իրենց Կուտինան՝
Անատոլուի խաւար խորքերում:
Բայց նրանք,դէհյուք, նայնիսկ գիտենան,
Թէ իրենց պապի պապին ու քեռուն
Գաղթի ճամբան է բերել Կուտինա
Ինչ–որ ժամանակ, ինչ–որ ցղնայից:

Այսքանը թէկուզ եւ իմանային:
Ո՞վ պատմէր սակայն, որ գիւղն այդ ցղնայ
Եւ Մասեաց փէչը Գողթանն է չքնաղ:

Արդէն կ'սահակոյը Թուրքախաւարիս՝
Ո՞վ պատմէր նրանց Գողթան դաւառից,
Գողթան դաւառի երդասաններից՝
Վիպող — վիպասան մեր դուսաններից։

... Փանդխուռը դրկած ու վինը ծնկան՝
Դուռ-դարպասների սալքարին նստել,
Երդել են նրանք վէպը Սաթինկան,
Աչքերն են դողել Ալանաց դաշտը,
Եւ խօսքը խելօք, եւ մէջքը բարակ,
Եւ Արտաչիսի սիպալը արագ՝
Ձեռքին չիկափոկ-ոսկէօղ պարան...
Իսկ Արտաւա՛ղդը, որին եւ տարան
Քաջերը ի վեր Ազատն ի Մասիս...
Իսկ հապա հպարտ Տրդատի՛ մասին,
Որ սէգ սիրալով՝
Իր հուժկու քայլով
Գետերի թմբեր եւ ամբարտակներ
աւերեց տարաւ...
Իսկ Շամիրա՛մը պատչոտ
ու տաքդող,
Գեղեցիկ ապրած, գեղեցիկ մեռած
Գեղեցիկ Արա՛ն...

Յաճախ կոյր ծնուած, անուս ու թերուս,
Բայց մէջտ ողողուած, կրակով ներքին,
Իրենց եօթնատի տաւիղը ձեռքին՝
Նրանք են երգել ծնունդն այն աստծու,
Որ հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս —
Երբ երկնում էր ծով, երկիր ու երկին,
Երբ ծուխ էր ելնում եղեգան փողից,
Երբ բոց էր ելնում եղեգան փողից...

Երգել են նրանք
Մեր պատած հողից,

Գինուց, խաղողից,
Մեր սրտի դողից.
Երգել են նրանք
Մեր ցորեն հացից,
Մեր խինդ ու լացից,
Մարտում ընկածից.
Նորհել՝ երգելով,
Նուագով ցաւել,
Երգել ձեռքերով՝
Պարել–կաքաւել...

Ո՞վ է մեզ տուել, եթէ ոչ նրանք,
Փող ու թմբուկին խաղացող մատները,
Լեռն ի վար վարդող եղնիկի ոտները,
Եւ նաւասարդեան թարմ առաւօտները,
Եւ առաւօտները վառ Վարդավառի,
Եւ ծուխ ծխանի՝ հայրենի կրակ, —
Ո՞վ է մեզ տուել, եթէ ոչ նրանք՝
Վիպասանները Գողթան գաւառի:

... Ո՞ւմ մտքով կ'անցնէր, թէ Գողթնից գաղթած
Գերանը ջարդած ու սիւնը խախտած
Ինչ-որ տնակի կիսախաւարում,
Գողթնից չաւ հեռու, մի խորթ գաւառում,
Որտեղ վարակը օտար չարաւի
Ուտում էր մարմին ու հոգի կրծում, —
Ո՞ւմ մտքով կ'անցնէր, եւ ո՞վ էր կարծում,
Թէ պիտի չորայ Գողթան չառաւիղ,
Պիտի բոցկլտայ Գողթան պայտատ՝
Նո՛յնքան հարատատ,
Նո՛յնքան հայ ազատ,
Որքան եւ նրանք —
Արժանի ժառանգ
Գողթան գաւառի հայ դուսաններին,
Փողհար–փանդռահար վիպասաններին՝

Օտարի չնչից դանդաղանալի,
Այդքանով՝ նաեւ անհասանելի...

Ո՞վ է հասկացել քմայքը բախտի
Եւ այն էլ... հայոց.
Յանկարծ կեռմանը ապրուեր դարի՝
Կածանը վայոց,
Դառնում է ճամբայ համահաւաքման, —
Ոտյանք է դառնում թռիչքը անկման...

Ո՞վ է հասկացել քմայքը բախտի
Եւ այն էլ... հայոց:

ՂՕՂԱՆՋ ՅՈՒՍՈՅ

Ութը հարիւր ութսունմէկ թիւ էջմիածին։
Միրզ ու փոչի։ Անխիղճ արեւ։
Շողամբոյտ Մասիսների, Արագածի։
Սրբատործուած հին–հին քարեր։
Եւ Մայր Արաքս, եւ Մայր Տաճար,
Տաճարի չուրջ սուրբ–սուրբ վանքեր,
հնչո՛ղ,
չնչո՛ղ,
կանչո՛ղ զանգեր...

Եւ ձնմարան՝ մոքի կաճառ —
Ուսումնատենչ երդոների
Սառցակալում եւ տաքացում...

Ձնմարանի բակում արձակ՝
Խօսուածքների, տարազների
Խայտաբղէտ հաւաքածու։
Ամէն մէկը՝ մի գաւառից,
Եւ բոլորը՝ դեռ ապուամազ։
Ամէն մէկը խիտ խաւարից՝
Երազում է լոյսի մի մաս։
Լոյս է ուզում —
Ուսո՛ւմ, ուսո՛ւմ...

— Ո՞վ կ'ընդունուի,
Ում կը ղբնի

Ձեմարանի դեռ փակ չէմքին,
Յաչդոզ կը տայ ո՞վ քննութիւն:

Մանուկներէ յուզուած դէմքին՝
Վա՛խ, սպասո՛ւմ, անքնութի՛ւն,
Խօսուն հետքե՛ր երդոններէ:

Որեղ էլ որ աչք ես ածում՝
Խօսուածքներէ, տարազներէ
Զարմանալի հաւաքածու:

Եւ նրանց մէջ սրա՛ն նայիր՝
Հագին հալաւ տառճկահայի.
Կարմիր չասլիկ, կանաչ վարտիք՝
Վրան պնդած մագէ գօտիկ,
Նախշուն գուլպայ՝ վրան գոլեր,
Ու պոչաւոր մաչուած սոլեր:
Դէմքը՝ դունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայեացքը՝ քէյ՛ֆ-ցոլքե՛ր...

Ամէնքն իրար՝ մօտիկ-մօտիկ,
Իսկ նա՝ անվերջ մէն ու մենակ:

Թէ զարնէին սրտին դանակ՝
Մի պռատ արիւն դուրս չէր հոսի:
Ո՞նց չմնայ նա մեկուսի,
Ո՞նց խառնուի, ասէ-խօսի,
Թէ... հայերէն վատ է խօսում:
Բայց նա, մէկ էլ Աստուած դիտի,
Թէ ինքն ինչպէ՛ս, ո՛նց է ուզում
Ուսո՛ւմ, ուսո՛ւմ:

Սակայն նրան
Ո՞վ կ'ընդունի, այն էլ... որտե՛ղ —
Մի հոգեւոր ուսումնարան,

Որի սանը մի օր պիտի
Դառնայ Հայոց ժամտան տէրտէր,
Հաղնի վեղար վարդապետի:
Իսկ նա...
Եւ նա վաղը պիտի
Երգի ի լուր եւ ի վճիռ
Համայն Հայոց Հայրապետի...

ՂՕՂԱՆՋ ՆԵՐՄԱՆ

Եւ նա սկսեց... Թուրքերէն երգել։

Մանկական ձայնը, սկըզբում կերկեր,
Վայրկեաններ յետոյ ինքն իրեն պատաւ,
Հունի մէջ մտաւ
Ու դնա՛ց—գնա՛ց։
Կաթողիկոսը մթագնեց մնաց։

Մինչ յանկարծահաս պայրոյթի ծնած
Կրակը վառուեց ծեր աչքերի մէջ՝
Հէնց նոր սկսուղ ժպիտը հանգաւ։
Առաջի՛ն անգամ, առաջի՛ն անգամ
Ա՛սա՝ Վեհարանի հին պատերի մէջ,
Սրբապղծօրէն Թուրք երգ է մխում...
Ա՛սա՝ հայոց հօտի այս սուրբ փարախում,
Հովուապետն ինքը ականջ է կախում
Ինչ—որ մի մանկան անօրէն երգի...
Ա՛սա, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
«Հայր մեր», «Տէր կեցո», «Արեգակն արդար»,
«Բարեխօսութեամբ» կամ «Խորհուրդ խորին»,
Ուր պրաբարն է հնչել դարէդար,
Եւ չարականն է յուզել բոլորին, —
Ա՛սա՝ Վեհարանի հին պատերի մէջ,
Առաջի՛ն անգամ, առաջի՛ն անգամ

Սրբապղծութեան մանանեխ ընկաւ...

Բայց վեհափառը իր վեհ դերի մէջ՝
Ինչպէս վայել է՝ անայլայլ մնաց:
Իսկ մանկան երդը...թա՛փ առաւ–վնաց:
Գնաց–բարձրացաւ,
Եկաւ–ցածրացաւ,
Քարէքար ընկաւ, պատէպատ խփուեց
Եւ յետոյ՝ կրկին պոկուեց ու վնաց,
Մի վայրկեան օդում կախ ընկաւ մնաց՝
Մի անտես թելով կարծես թէ կապուեց
Եւ, մի պահ յետոյ յանկարծ ցած թափուեց.
Թափուեց՝ նշենու ծաղկաթերթի պէս,
Հին վանքի ծեփի ճաքած չերտի պէս...

Բառերը... եղո՛ւկ: Իսկ ձայնը... պուլա՛լ.
Այդպէս լեռնային վտակն է կարող
Քարերի վրայ ծիծաղել ու լալ:
Բառերը... եղո՛ւկ: Իսկ ձայնը... դերո՛ղ.
Մերթ բողոքում է ու դանդաղ անում,
Մերթ՝ զառնում այնպէս վսեմ ու բարի,
Կարծես հինաւուրց այս Մայր Տաճարի
Երկինք խոյացող գանգակատընում
Կախել են մի նոր՝ անլեզուակ մը զանգ—
Մի համա՛կ յուզանք...

Թուաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թուաց՝ երկինքը չողեր է չաղում,
Թուաց, թէ չողը յանկարծ կոտըրուեց,
Թուաց, թէ մի հին երդում կատարուեց...

Կաթողիկոսի ծեր եպիսկոպոսում
Աչես սրսկուեց ջահել տաք արիւն՝
Անցած օրերի արիւն վարակիչ —
Երբ աննիւթ հոգուն մարմինն էր այրում՝

Մարմինը մեղսոտ, սատանայակիր:
Եւ հին լկանքով կրկի՞ն չարչարել...
(— Տէ՛ր, ողորմեա ինձ, փրկեա ի չարէ)...

Իսկ երդող տղա՞ն,
Մորմոքող տղա՞ն:
Իրենց ամէնքի աչքերի առաջ,
Աստ հեքիաթի դիւցազուն դառաջ,
Նա միանգամից աճե՛ց, զօրացա՛ւ...

Կաթողիկոսը մի պահ մոռացաւ,
Թէ ինքը որտե՞ղ եւ ի՞նչ է անում,
Ովքե՞ր են չուրջը՝ իր վեհարանում, —
Եւ այդքանի մէջ,
Աստ քնի մէջ,
Նա դանդաղ ժպտաց
Աչքերով իր թաց:
Յետոյ ժպիտը սկսեց հալուել
Ու հետզհետէ անհետ վերացաւ,
Մինչդեռ աչքերի թացն աւելացաւ,
Թացն աւելացա՛ւ ու աւելացա՛ւ...

Փղձկացող վեհը հազիւ բարբառեց.
— Որդեա՛կ իմ, ո՛րբ իմ...
Ու ձայնը մարեց:

ՂՕՂԱՆՋ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ

Ես վարանումից, վէհերից յետոյ,
Իբրեւ եզակի մի բացառութիւն,
Կանոնադրքի մի պանցառութիւն,
Անյայտ օրէնքի չդրուած կէտով՝
Լոկ ձայնի համար —
Համարուեց նա սան:

Դեռ չեկած ամառ՝
Նոր բօթեր հասան:

Սուլթան Համիտը, ի փառս ալլահի,
Ի նշան ահի
Ամէն մի հայի
Եւ ի պիտութիւն
Իր երկար քթով ամէն տեղ մտնող
Այդ Եւրոպայի, —
Սուլթան Համիտը տարաւ ու բերեց
Եւ —
ապտակի տեղ,
ապտակի նման —
Շրը՛խկ՝
«Հայաստան» բառը արդելեց —
Լեզուի՛ց, քարտէզի՛ց, դրքերի՛ց քերեց:
— Ջնջում եմ, չկա՛յ,
Ալլա՛հը վկայ:

Եւ չի՛ էլ եղել, —
Այդ ո՞ւմ էք նեղել:
Եւ չի՛ լինելու, —
Եւ չի՛ լինելու, —
Քանդողը ես եմ,
Ո՞վ է չինելու...

Իսկապե՛ս. քանդածն ո՞վ պիտի չինէր,
Թէ Ալեքսանդը ցարն էլ իր հերթին՝
Սուրբ խաչելութեան նշանը սրտին,
Քրիստոնէական ժպիտը շրթին՝
Իր «ամենազութ» ձեռքով ցարական
Հայոց պատմութիւնն, իբրեւ առարկայ,
Սրպելեց բոլոր հայ դպրոցներում.
— Չկա՛յ, չի՛ եղել...

Սուլթանն ու արքան
Չեռք–ձեռքի տուին
Միեւնոյն թուին...

Իսկ ձեմարանում...
Թուրքախօս սանի կարօտ բերանում,
Անուշ մրգի պէս, բայց չհալուելով,
Ի՞նչ բառեր էին հիմա քաղցրանում,
Անյայտութիւնից յանկարծ բարձրանում
Քանի՛ չքնշուող, քանի կարծր անուն՝
Քաղն Հայկ, Արամ,
Տիգրան Մեծ, Արա,
Մաշտոց, Եղիշէ, —
Ո՛ր մէկին յիշել...

Եւ չժանգոտած հին բանալիքը մեսրոպեան տառի,
Նախ՝ դժուարութեամբ,
Բայց հետզհետէ մի լուրջ բարութեամբ՝
Ուրախ զնդոցով անվերջ պտըտուեց կողպէքում բառի

Ու բացեց դռները՝
Սխրագործութեան,
Դարպասները բացեց՝
Ահեղ փորձութեան,
Եւ զարմանալի՛, անհաւատալի՛, ճշմարի՛տ դէպքեր՝
Մահազարձութեան...

Իր այդ բանալուն յաւէտ պարտական՝
Ընկել էր տղան մի կախարդական,
Մի հեքիաթային վիթխարի ղեակ,
Որին մինչեւ այդ ինքն էր անտեղեակ:
Ե՛ւ սերտարանում, ե՛ւ իր պաղ խցում,
Աղօտ լոյսի տակ իր նաւթավառի,
Մինչեւ իսկ եթէ ականջն էր խցում՝
Փանդխուն էր հնչում Գողթան դաւառի
Մարտ ու սէր երգող ձայնեղ դուսանաց.
Ե՛ւ խրախճանքը հին վարդավառի,
Ե՛ւ մեհեաններում մորթուող տաւարի
Բառաչը խռպոտ, բոռոցը յորդուն
Դիսոնանսում էր արդէն կուսանաց
Քրիստոսասէր թախծոտ մեղեդուն.
Յեռոյ խուժում էր, մեղեդուն խեղդում
Վայրի աղմուկը վայրի քուչանաց,
Դոփ ու տրոփը բարբարոս հոնաց
Ու քաղաքակիրթ —
Նոյնքան բիրտ
Յունաց...
Ծակող դիսկանտը հռոմէական մարտափողերի
Եւ կոնտրաբասը պարսից ահաւոր մարտափղերի,
Տէգ, նիզակ, աշտէ,
Աւես թմբուկի վիթխարի փայտեր,
Թմբուկի տեղակ դլուխ են ջարդում,
Պատռում են այտեր.
Էլ սելջուկական սրերի չառաչ,
Էլ կարիճների մահազդու հառաչ,

Էլ մանդրյական ադեղից պոկուած երկաթէ նետեր՝
Ասես թշնամու հեռաւոր մատեր,
Որ աչք են հանում մի ալ ու մի ձախ.
Եւ վահաններէն ծնծղան անծիծաղ,
Եւ չեփորումը զօրապետերի,
Ժոլ ելեւէջը արեան գետերի,
Հրդեհի ճեռքում հողմերի ֆուլան,—
Արձագանգում են նրա ականջում
Եւ ինքնմոռաց.
«Մարէ՛ ջան, կու գա՛ն», —
Տեղից ցատկելով՝ ակամայ կանչում,
Ձչում է ձայնով փոքրիկ զաղանի
Եւ արթնացընում մի քնած սանի,
Որ վեր է թռչում, նոյնպէս վախեցած,
Աչքերն է ճմլում, մազերն է խառնում,
Վերակացուի անուամբ սպառնում
Եւ մինչեւ անգամ իր տուած հարցի
Պատասխանի դէմ ականջը խցած՝
Չակում է նորից իր գլուխը ցած՝
Մաղնիսի նման ձգող չոր բաւձին...

ՂՕՂԱՆՋ ԽԱՉԱՏՅՆ

Ամէն ամառ՝ երեսուն օր —
Դուռ է բացում միշտ նոր ու նոր:

Ամիսն ամսի ձեռքն է բռնում —
Նա կարդում է եւ ըմբռնում:

Ամէն ամառ ինչքան չարթի՝
Այնքան հարցեր մշուշապատ:

Ամիսն ամսին ձեռք է տալիս,
Ամիսն ամսին եաքից տանում:

Կան շատ բաներ, որ կարդալիս
Նա դեռեւս չի հասկանում...

Ամէն ամառ՝ երեսուն օր,
Եւ ամէն օր՝
Մի նոր չնորհ.

Ամբողջ մէջ՝ չորս կիրակի —
Նա է հոգին պատարագի:

Երգում է նա Մայր Տաճարում,
Խողնեբին լոյս պատճառում:

Ո՞վ է նրան պարտադրում,
Իսկ նա նոտած արտապրում,

Պատճենում է հայ եւ օտար
Ձայնանիշեր, խազեր, նոտա:

Ամէն ամսում՝ երեսուն օր,
Եւ ամէն օր՝
Մի նոր չնորհ...

Ամիսներն են դանդաղ հոսում —
Եւ կարդում է նա Մանրուսում:

Թո՛ղ բորբոքուեն նախանձ կրքեր —
Ընթերցում է նա Խոպրքեր:

... Գանձե՛ր, գանձե՛ր՝ փականքի տակ,
Իսկ գանձերի տէրն՝ անղէտակ:

Անբանալի—դուռ գանձարան...
Կեանքըդ լինի թոռ տանջարան —

Թէկուզ մեռնես, բայց ման արի,
Փնտռի՛ր, գտի՛ր այդ բանալին:

Եւ աչքերն է ցաւով թարթում:
— Տարիները թո՛ղ որ վազեն:
Աչքերի դէմ, քուն թէ արթուն,
Ձվերծանուած խազե՛ր, խազե՛ր —
Մեղեդիները՝
Ոչ թէ մինչեւ վանքի դմբէթ
Սուրբ խորանից երկարացած,
Այլ... քարացած.
Եղանակները՝
Ո՛չ պար ածող,

Այլ… լրածով·
Աստուածային վսեմ «Տաղ»–ը,
Որ ծալքերում մատաղաթի
Ժամանակն է փոշով թաղել·

Գանձի նման անգին «Գանձ»–ը,
Բայց ի՞նչ օգուտ, երբ չեն կարող
Կիզել անձը,
Հոգի խանձել·

Արձանացած–անշարժ «Փոխ»–ը, —
Ինչպէ՞ս չարժել, տեղից փոխել·

Դիակնացած «Քարոզ» ու «Ճառ»,–
Ինչպէ՞ս դանել յարութեան ճար·

«Եղիցի»–ները, «Աւետիս»–ները, —
Ա՛խ, թէ նրանց հնչո՛ղ տեսնէր…

Տաբլիներն են նորից հասում,
Իսկ նրա ղէմ՝ միշտ Մանրուսում,

Իսկ նրա ղէմ՝ անվերջ Պատկերք —
Շո՛ւնչը, հոգի՛ն, տրո՛փն աղբի,
Որ դարձել է խաղ ու նշան,
Մատաղաթի թերթեր խշշան:

Թէ՞ յանդուգնն մի փորձ անել
Համբր խաղերը վերծանել:

… Տաբլիները յոգնած մարդու
Տնքոցով են կրկին հասում, —
Ամենատյժի համբերութեամբ
Ջննում է նա կոյր Մանրուսում:

Ինչպէս համառօտ հնաբանը՝
Իր ձեռքն ընկած հին առարկան —
Քննում է նա ուշադրութեամբ
Ու երկաթով բիւր չարլական:

Կարծես թէ մարդ յանկարծակի
Ընկել է լուռ մի չիմաստուն,
Ու լեզուապուրկ չիմաքարեր
Նախանձով են նայում մարդուն:

Չիմաքարե՛ր, չիմաքարե՛ր, չիմաքարե՛ր,
Եւ մամուռի ու փոչու տակ՝ չիմապրե՛ր,
Եւ ի՛նչ խօսուն չիմապրեր.

Արծիւ, Աղաւնեկ, Բազէ, Վարուժնակ,
Տաւուտրակ, Ծիծեռն ու Տիրոցի ձագ,
Իւրաքանչիւրը ինչպէ՞ս է ճախրել,
Եւ ո՞ւր է իջել, ինչպիսի՞ թեւով...
Աղաչաճի, Հիւանդ, Տժգոյն ու Լալկան,—
Իւրաքանչիւրը ինչպէ՞ս է տխրել,
Ինչպէ՞ս հառաչել, լացել ի՞նչ ձեւով ..
Դարբին ու Երկաթ, —
Ինչպէ՞ս էր գնդում,
Ինչպիսի՞ սալէ,
Ինչպէ՞ս էր մարդու հոգին պար ածում...
Հովիւ ու Ոչխար, —
Ո՞նց էր չբնկչբնկում,
Ի՞նչ քար ու ասր,
Ի՞նչ չչուկով էր հօտը արածում...

Ո՞ւր է Զադացէ–ի դղիրդը ահեղ,
Ինչո՞ւ է Սրինգն իր չունչը պահել,
Եւ ինչո՞ւ Նաւ–ը չի ուզում առնել...
Փող–ը փորակ–ից, Բդեշխ–ը Բերդ–ից
Իրար նուագը ինչո՞ւ չեն խլում...

Դէ՛հ, արի բեր սի՛րտ, եկ ու բեր գլո՛ւխ,
Որ բան հասկանայ այս չիրմատնից:
Ինչպէ՞ս չըրկուես հայից ու քնից...

Եւ նա վիրաւոր աչքերն է թարթում:
— Թո՛ղ ժամանակը անշտապ վազէր:
Իսկ աչքերի դէմ՝ քնած թէ արթուն՝
Նորի՛ց բերանփակ խաղեր ու խաղեր:
Խաղեր Զայնառժի —
Աստուած չի՛ յուշի...
Խաղեր Բանալի —
Ի՛նքըզ ման արի...
Խաղեր Ոճական,
Նաեւ՝ կոչական —
Փնտռողի համբերն
Միշտ էլ խոչեր կան...
Եւ Առոգանող ու Էտադըրող —
Մի՛ յուսահատուիր,
Կարո՛ղ ես, կարո՛ղ...
Եւ Ամանակի —
Կարիք ես զգում
Լոկ... ժամանակի...

ՂՕՂԱՆՋ ՄԵՂՍԱԿԱՆ

Թոկ ժամանակը լրեննէր անում։

Ամիսը ամսին՝ անցնում են տարիք,
Եւ զգում է նա... այդ ինչի՞ կարիք...

Դեղնած դրքերի փոշին բերանում՝
Նա դուռն է բանում իր խոնաւ խցի
Ու դուրս է գալիս՝ վոքր-ինչ օդ ծծի։

Կանաչ Բնաւուից անվայել թռնում
Եւ այղիների ճամբան է բռնում։

Ճամբան տանում է դէպի Արարատ,
Դէպի Մայր Արաքս՝ ճոխ դաշտի միջով։

Գարուն է գալիս։ Օդը՝ անարատ,
Բոյրով ու թոյրով, լոյսով է առատ.
Ու նրա ջահել սրտի պէս՝ ճիչով։

Գարուն է գալիս։

Ջնեբն են լալիս,
Որ առու-առու՝
Կրքից պղտորուած՝
Իրար գիրկ վազեն։

Բացուղղ գարնան հետ
Վերադառնալիս՝
Ձոյլեր են կազմում
Տատրակն ու բազէն։

Ծառեր ու խոտեր
Ծալիկ են տալիս,
Որ բնազդական —
Բուսական սիրով
Իրար փոչոտեն։

Որսի դուրս գալիս
Եւ արածելիս
Քիչ է մնում թէ
Գազաններն անդամ
Լավլիղող սիրուց
Իրար յօշոտեն։

Իակ սի՛րալը, սի՛րալը...

Իակ սիրտը մարդու՝
Սիրոյ հովերից
Այլեւըս արթուն՝
Գարնան պետի պէս
Մերթ՝ վարար յորդում,
Մերթ՝ անձրեւի պէս՝
Լալի՛ս է, լալի՛ս.
Ուզում է մէկին
Ասել. «Ցանկալի՛ս»,
Ուզում է մէկին
Խեղդուելով ասել.
«Իմ երա՛զ ու սէր,
Դու ե՞րբ ես գալու...»։

Գարուն է, գարո՛ւն։

Դաշձի բուրմունքից հարբել է առուն
Եւ ափերին է մի ղլուխ զարկում ուժաձեւ քայլով՝
Ինչպէս հարբածն է խիւում պատերին։
Նայողի աչքը խառնւում են ածում դոյնով ու փայլով
Ալվան վինջեր կարմիր պուտերի,
Կապոյտ անմոռուկ ու հորոտ–մորոտ։
Ճամբի եզրերին, կարճլիկ ու կորտ՝
Բարեկումի դահճի ձեռքով ղլխատուած չարքն է թթիերի։
Նախկին կոշտապատ ճիւղերի տեղակ
Թթենիները հիմա զալարուկ չիւեր են տուել՝
Մէկի տեղ քսան ու դեռ աւելի
Եւ հեռուից հիմա նման են... արդեօք
Մի վայրէ պոչով մեծ ցախաւելի՞,
Որ հոբիզոնից պիտի ոչ — ա՛յ–ա՛յ —
Ամենաւերջին ամպերը ջնջի,
Թէ՞ հսկայական — բունը հուպ տուած — մի կանաչ վինջի,
Որ — յօժարակամ — ուզում է իրեն անցորդին բաշխել՝
Ով կը կայենա՛յ, ով կը վերցընի՛,
Կամ կսթի վրայ թնկուած վրձինի՞,
Որ մատղիր է
Լապուր երկինքը մութ կանաչ նախշել։

Հիմա Բնաուից միւս ափ թռած՝
Առաջ է գնում նա ինքնամոռաց։

Հրաւիրականչ չեփորի նման՝
Հնչում է ցուլի կարօտի բառաչ...
Եւ ջրից թաւիուր սափորի նման՝
Քամու չնչի տակ անբառ երգում է փչակը ծառի։

Այգինների մէջ թաղուած Տաճարի
Գմբէթն է միայն հեռուից երեւում
Ծաղկած ծառերի գլխավերեւում՝
Անյայտ թռչունի գլխիվայր չրջուած մեծ բոյնի նման։

Մի վախուց ջարդուած կաւէ հնին աման,
Նա էլ չի փրկուել պարնան վարակից —
Նրա շուրջբոլոր
Մամուռն է քաչել կանաչ պարապիծ:

Վիրաւոր անձի բացուած երակից
Տաք արեան տեղակ պատ կաթ է ծորում:

Դեղձենիների անրոյ կրակից
Կայծեր են թռչում ղիմացի ճորում:

Գիւղի մէջ, դուռն,
Մի ծուռմէջք ուռի,
Ծեր մուրացկանի ձեռքերի նման
Այդ ի՞նչ յոյսով է ճիւղերը մեկնել —
Որ ի՞նչ ատեն ախաթ, դիպուք, ողորման,
Ա՛յ դու փչակուած–բնաքանդ ուռի...

Ու դաշտ են ելել հարս ու աղջիկները,
Որը՝ սիրեխի, որը՝ դանդուռի:

Մերթ ցվրում են
Ու մերթ՝ կուտակում,
Մերթ կռանում են
Ու մերթ՝ չիտակում,
Մերթ՝ ուրախ ճիչով,
Աչես կարօտով,
Իրար են պարզում լուսիկ թեւերը,
Ցուցադրում են,
Կարծես թէ դիտմամբ,
Փակ մարմինների բոլոր ձեւերը,
Որ... արեգակի սիրտը խռովեն,
Որ... արեգակին անհուր խորովեն,
Որ... Աստուած ու նա կռուեն — խռովեն...

Եւ մի անօրէն,
Մի անուանելի՛,
Անանուանելի՛

ինչ-որ դղացում

Կպչում է նրա սրտին ու անձին՝
կաթիլ պէս անձի:

Նա չրթունքներն է ակամայ կրծում,
Որ ցաւը օչնի:
Իզուր է կարծում,
Թէ ամենազօր զարնան զաւերին
Կը յաղթի ուժով ինչ-որ ցաւերի:
Եւ, ճարահատեալ, աչքերն է գոցում,
Որ սառոյնեկան տեսիլքն աւերի,
Բայց մթութիւնը... սա էլ իր սեւով
Նրանց վառվռուն ճեւերն ընդգծում,
Մաքրագրում է, չեչռում աւելի:

Ծաչակնքել է ուզում արեգան,
Բայց նրա ձեռը չարժուել չի ուզում.
Ուզում է կանչել մի բերան «մեղայ»,
Բայց... կապ է ընկնում եւ խօսնակ լեզուն
Եւ, բնազդաբար,
Նա սիրան է բռնում սեւ վերարկու տակ,
Նա սիրան է սեղմում ափերով իր տաք,
Նա սիրան է սեղմում,
Որ չարուխի այդպէս խեղճօրէն,
Որ չարուխի եւ... չարաքի՝
Պղպջալ վինու սափորի նման:

Մինչդեռ անվտանգ խուցի զարակին
Ննջում են տաղեր՝ կարօտ յօրինման,
Մինչդեռ անփորձանք խուցի զարակին
Կարօտով նրա ճամբան են պահում
անլեզու խազեր:

Նա եռ է դառնում, ուզում է վազել,
Գնալ ու նորից վերծանել յամառ,
Աչքի լոյս մաչել
Այն յոյսով անմար,
Թէ ցաւն աչքերի թերեւս մի օր
Փոխարկուի մի նոր
Ցնծուն հանդէսի՝
Իր, ուրիշների... ականջի համար:

Նա եռ է դառնում իր ճամբի կէսից,
Որ գնայ կրկին աչքի լոյս մաչի
Եւ մի կերպ պրծնի իր սրտին կպած
Այդ կաթից անձի,
սուձից,
խէժից, —
Եւ այդ վայրկեանին յանկարծ —
Սոնա՛ եար,
Սոնա՛ եար —

Թնդում,
Ու երգը խնդուն
Ընկնում է եաքից ու հեռապնդում,
Կախւում է նրա վեղարի փէշից,
Թառում է նրա փակուած կոպերին,
Հալւում է նրա այրուող ափերին,
Ոտքերի առաջ թաւալ է տալիս, —
Ճամբան է փակում եւ յիշեցընում,
Թէ վարդավառն է վերստին գալիս —
Սոնա՛ եար,
Սոնա՛...
Ցնծութեամբ օծուած ծաղիկ է ծնում,
Ծաղիկների պէս դաշտերով յանում
Ջանգիւլում կանչող հարս-աղջիկներին —
Սոնա՛ եար,
Սոնա՛...

Քայլը հնչում է նո՛ր տակտով —
Սոճա՛...
Կուրծքը չնչում է նո՛ր տակտով —
Սիրո՛ւհի...

...Ու երբ, յոգնատանջ, աքլորականչին
Նա լուռ ննջում է՝
Ինչ-որ մի Սոճա
Գալիս է թեքւում նրա ականջին
Ու չննջում է,
Թէ սարսանջին
Պառկած է քոյրը՝ անունը Խումար,
Ու երեան էլ բաց՝ տեսնելու համար:
... Շողերով հինուած իր դորգը թողել,
Առուի արծաթով երեսը յօդել,
Կանգնել էր ճամբին մի չաղատ Շողեր՝
Բոլոր պլուխը պատկած ծամով,
Աչքերով նման ոսկրը ատամնաձամօր:
— «Իսկ դու՝ անխնայդ, վախենամ քնես,
Վախենամ քնես, քնով ընկըճես՝
Արտերդ մնան առանց հերկելու.
Ու երբ վեր կենաս,
Վազէվազ գնաս՝
Հա՛ կանչիր Խումար, Շողեր ջան, Սոճաս, —
Խումար-իդ առան,
Սոճա-իդ տարան,
Շողեր-ըդ մնաց առանց դրկելու...»:

Մի խառնակ երազ
Տանջում է նրան մինչեւ լուսադէմ:

... Նա մէկ տեսնում է, որ մի չէկ Սաքոյ,
Թեւերը կանթել,
Կանգնել է իրենց կալի պռնկին:
Քամին խլում է նրա մինթանան,

Որ նրա թմփլիկ ծնկները բանայ
Ու ցոյց տայ խալը՝ ծալի մէջ ծնկի:
Յետոյ այդ խալը դառնում է յանկարծ
Մի պուտ սեւ թանաք՝
Այն Շարակնոցում Սպմոսավանքի,
Ուր այդ կաթիլից
Իրար են ձուլուել զարդախազերը...
... Ու մէկ էլ քամին
Քանդում է հարսի ղեղձան մազերը,
Եւ այդ մազերը լարերի նման,
Զլում են մինչեւ ոտքերը նրա,
Ու չեկլիկ–մեկլիկ, աչքերով ծաւի
Այդ հարսը յանկարծ... դառնում է տաւիղ,
Եւ այդ ոսկեալը, եւ այդ մսեղէն տաւիղի վրայ
Քամին նուագում
Ու... վերծանում է մեռած խազերը:
Ուզում է որսալ ու ձայնագրել
(Ա՛յ, հիմա՛–հիմա՛ լռած խազերի
Մեռած գաղտնիքը նա պիտի պարզի
Եւ իր մեծ դիւտով աչխարհը ապրսի),
Բայց... մինչ այս–մինչ այն՝
Նախանձկոտ քամին այնպէս է փչում,
Որ կտրատելով լարերը բոլոր՝
Վերեւ է ցցում, —
Հիմա ո՛չ տաւիղ,
Ո՛չ էլ վերծանուող մեռած խազերը...
Հիմա հուրհրան բոցեր են թռում ղեղձան մազերը,
Ղեղձան մազերը թռում են հուր վառ՝
Բարակ ծխի հետ պարղուած երկրնքին:
Եւ հարսը հիմա դառնում է բուրվառ
Ու չուրջը փռում բուրմունքը խնկի:
Աղջիկը բուրվա՞ռ, — որտե՞ղ է լսուած...
Բայց յանկարծակի քամին դադարում
Եւ, դունդուկծիկ, բարդուն է թառում

(Ի՛նչ անտանելի չող է, ակ՛ը Աստուած)...
Ու դարձեալ նրա մազերը դեղձան,
Որ ծուփ-ծուփ էին՝ ծալէծալ դարձան.
Բուրվառ չէր արդէն,
Այլ կրկէն
Մի կին,
Բոցավառ մի հա՞րս,
Թէ՞ խարտեաշ աղջիկ,
Եւ տղամարդու հայեացքից ազդուած՝
Պատյտ է գալիս,
Որ թողնի փախչի
(— Էդ ո՞ւր, անհոգի, էդ ո՞ւր, անաստուա՛ծ)...
Մինչ տեսիլքով է աչքը հիանում՝
Սուրացող հարսը մինթանի փէչով
Պատահողմի պէս սիւն փոչի հանում
Եւ թէպէտ — չո՛ր է — քիչ գով է անում,
Բայց մի սեղման բուռ փոչի է յանում
Խեղճի աչքերը...
Ու նա քնի մէջ
Ձեռն ակամայից աչքին է տանում,
Որ կսկծում է ու մրմռում է:
Աչքերը ձեռքով նա ճմլռում է,
Քնից արթնանում...

ՂՕՂԱՆՋ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Չեռեւում է տարին տարուն, չի ուչանում, —
Եթէ սան էր՝ դառնում է նա լսարանչի:
Սովորում է, երազում է եւ ուսանում
Ամէնքի պէս՝ ամէնքի հետ, եւ առանձին:

Հեռեւում է տարին տարուն, մխոքը՝ մոքին,
Հեռեւում է դեռ նոր դուած ելքը մուտքին:
Ապրում է նա աչքը՝ դրքին,
ուչքը՝ երդին:

Ե՛րդ եւ ուսո՛ւմ,
Շարակնոցնե՛ր ու Մանրուսո՛ւմ...
Մինչ օրերն են յամր հոսում՝
Մոքի հետ է մխոքը խօսում.
Խաղե՛ր, խաղե՛ր, — թո՛ղ վուրձ անի,
Գուցէ մի օր եւ վերծանի —
Ու ժողովուրդն ապերչանիկ
Նախանձելի բախտ ստանայ,
Աղքատացած մի լննտանիք
Ծով դանձերով հարստանայ:
Խաղե՛ր, խաղե՛ր, — թո՛ղ վուրձ անի,
Գուցէ մի օր եւ վերծանի:

Բայց խաղն է խազ ու դիրքը՝ դիրք:
Իսկ դրքից դատ կայ կեանք ու դիրկ,

Իսկ խաղից դատ կան խաղ ու տաղ՝
Կենսաթրթիռ, լուսաթաթախ,
Որ ապրում են, չնչում, հնչում
Մարդկանց չրթին, իր ականջում.
Որ կենդանի մարդն է հիւսում
Ու կենդանի մարդուն յուզում.
Որ հոսել են ու տեղ հասել
Ու չեն դարձել դեռ Մանրուսում,
Ու չեն դարձել մեռած խաղեր...

Ո՞ւր են ղրանք, ո՞ւր են սակայն:
Այսօր թէ կան՝
վաղը չկան.
Շուրջն ամէն տեղ
Երգւում են դեռ,
Բայց երգուելուց թէ դադրեցին,
Խազերի պէս, մէկ էլ տեսար,
Ձամբացան ու քար կորեցին:

Որտեղի՞ց են ղրանք գալիս,
Եւ ի՞նչ ճամբով, ո՞ւր են գնում,
Ի՞նչն է անցնող վրիւռը տալիս
Եւ չքի պէս ի՞նչն է մնում:

Ի՞նչն է այնտեղ ոգեւորիչ,
Ինչո՞վ է խորթ եւ հարազատ,
Ինչո՞վ՝ մօտիկ, ինչո՞վ է դատ
Աչխարհիկը հոգեւորից:

Ի՞նչն է պայծառ, ի՞նչը՝ մթար,
Ո՞րն է քոնը, ո՞րն է օտար,
Ի՞նչն է եղծուած կամ անվթար,
Ի՞նչն է կոպիտ կամ նազելի...

Իսկ թէ յանկարծ այդտե՞ղ դատը
Բանալիքը մունջ խաղերի...

ՂՕՂԱՆՋ ՕԾՈՒՄԻ

Եւ որտեղ երգն էր այնտեղ էլ նա էր:

Իսկ ամէնուրեք՝ լէ–լէ, թխկոցդա,
Ամէն տեղ էե–լէ, տույ–տույ, նայ–նայ — էր:

...Ուրա՞խ է կեանքը, ախո՞ւր, դաժա՞ն է՝
Մի՛շտ ժողովրդից երգն անբաժան է.

Նա միշտ երգով է բանում ու դաւում,
սիրում ու ատում,
վիշտը փարատում.
Երգով է ուրախ, երգով է տխուր,
Երգով է վառւում, երգով է մխում.
Երկեղով է նա վարում ու հերկում,
մանում ու նեբկում,
երեխայ ջրկում.
Երգով քաղում է,
Ադում, մաղում է,
Ողրում, թաղում է,
Երգով է կնունք, հարսանիք անում, —
Երգով է օրը բացում–տաքանում,
Երգով է նորից օրն իրիկնանում...

Ամէն տեղ ջան–ջան, վայ–ամաւ–վայ — է,
Եւ որտեղ երգը՝ այնտեղ էլ նա է:

Իսկ նա՛...
Այդ ե՞րբ էր, այդ ե՞րբ էր, ե՞րբ էր, —
Տաճկահպատամեայ թիւրաս մի որբ էր,
Երբ ձեռքից բռնած ձեմարան բերին —
Եւ որբուկ Սողոն Սողոմոն դարձաւ:

Ու չար թէ բարի,
Խոպոպ թէ անպաւ
Ե՛լա տաճկերէն բոլորակ տարի
Ձեմարանի մէջ եկաւ ու անցաւ,
Ու երբ չմնաց պատասխանելու արդէն ոչ մի դաս,
Ով Սողոմոն էր՝ աւարտման օրը դարձաւ Կոմիտաս.
Ի խոր յարգանքս հայոց այն լուսէ կաթողիկոսի,
Որ տաճկերէն դար դրանից առաջ
Ապագայ հունձի հունդերը ցրած՝
Ծիրը բաց արեց հայոց մեղեդու անթառ ակօսի:
Նա բանաստեղծ էր
Ու երգաստեղծ էր,
Նա ունէր վառ ձայն
Ու նուագման ձիրք,
Եւ իր անուան հետ թողեց մի արձան՝
Ծօսուն, բայց անձայն —
«Նուիրեալ անձինք»:

Եւ հիմա — յանկա՛րծ — հայոց նորընծայ
Երկրո՛ւղ Կոմիտաս,
Որ Հայրապետի
Վանուանը սիւտի
Ամենայն ինչում
Տայ նոր մի հնչում,
Սուրբ յիշատակը մշտավառ պահի:

Ո՛ւմ մտքով կ՝անցնէր այդ վախճ պահին,
Թէ այդ նորընծայ նոր Կոմիտասը
Պիտի մոռանայ իր պարտաւորիչ՝

Անիսօս սուտյած պատուիրան դասը —
Պիտի նա մի օր երախտաւորիդ
Իւրովի դառնայ մի չար ապերախտ՝
Պիտի կողոպտի մի թափուր դրախտ.
Հոլեւսր պապի՝ իր անուանատուր
Կաթողիկոսի անունն սուտերի,
Չակառակ անիսօս տրուած պատուէրի՝
Եւ յիշատակը մոռացութեան տայ,
Իր չէնչղոլ կեանքի կարմիր բոցերով
Մատիսի նման թաւ ընդդծելով
Իր մեծ նախորդի մեռածութեան տակ...

ԱՐԵՒԱԳԱԼԻ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ԱՄԱՌՆՕՐԵԱՅ

Ե՛ւ որեակ երգը՝
Այնտեղ էր հիմա եւ կոմիտասը:

Նա, որ դեռ երէկ,
Իբրեւ մի ձայնեղ երկիր–տիրացու,
Երդչախմբի մէջ վաեմ մեներգ էր միայն տարածում
Ու լարանում հեղ պատասխանում աեր տումի դասը, —
Հիմա դարձել էր խմբավար վանքի,
Դարձել էր հիմա երգի դասատու:

Թեթեւանում էր երբ աշխատանքից,
Ծառայութիւնից օձիքն ազատում,
Հեռանում էր նա խուցից ու վանքից,
Գնում էր այնտեղ, ուր երգն էր հնչում:

Իսկ նա հնչում էր ամէնո՛ւր ու մի՛շտ,
Ամէնո՛ւր ու մի՛շտ —
Ուր հայն էր ընչում:

... Ինչպէս աղբիւրն է յանկարծ հարսնանում՝
Գարունն էլ այդպէս դառնում է ամառ.
Համբարձման ոօնը պաղ հովն է տանում
Ու տեղ է բանում,
Որ գայ Վարդավառ:

Քանի չեն թօչնել կաթնատատ խոտերը,
Կանաչ ու ծաղիկ,
Գերանդիները են սրւում–բթանում,
Եւ ծլարձակման յաղթ օրէնքի դէմ
Կարճ յաղթանակ է վնրատին տանում
Ոչին խոտքաղի:
Բայց քիչ առաջուայ մարտում կատաղի
Իւրաքանչիւրը մի անպարտ մարտիկ՝
Հիմա ամարդի
Նոյն տղամարդիկ
Ասես դթութեան եղբայր են դառնում՝
Իրենց աւշագամ գոհերին առնում
Իրենց խակ ուսին, իրենց չալակին,
Ինամքով դարսում սայլ–պատարակին,
Ջորուն են բառնում
Կամ աւանակին, —
Եւ մեռած խոտերը, ծաղկունք մահացող
Գերեզմանի տեղ մարտ են դալիս,
Որ այնտեղ դառնան բոյրի պահածոյ:

Ցորը, որ մինչ այդ հիւր էր ցանկալի.
Աներեսօրէն դառնում է տանտէր,
Ու կռուացնում կնկան ու մարդուն:
Անթոյ վառւում են արօտ ու հանդեր,
Արծաթ է հալում վաղահաս գարին,
Այնինչ հաճարի,
Ցորենի արտում
Հասկերը հասուն,
Հասկերը հոսուն,
Իւրաքանչիւրը մի հրէ լեզու,
Զգւում են վերեւ, կարծես թէ ուզում
Մօտիկ երկնքի կապուտակ ծովից
Զովութիւն ըմպել, —
Բա չէ՛ մի՝ կ'ըմպե՛ս, —
Չեն ըմպում սակայն,

Այլ միայն լեզում
Եւ անմիջապէս քաշում են լեզուն,
Երբ հասկանում են բուսական խելքով,
Որ մինչեւ անդամ երկինքը ծաւի,
Նո՛յնպէս կապտել է անյատ ծարաւից...

Ամառուայ չոլը այնպէս է կիզում,
Որ արեւի տակ —
Թէկուզ անկրակ —
Եթէ ուզում ես՝ «իշխան» տապակիը:
Անչարժանում են լճեր ու լճակ,
Դառնում են կարծես կապոյտ ապակի,
Մինչդեռ նրանց տեղ
Օդն է ծփծփում ալիքով հրէ,
Եւ օդի հետ էլ երկն է ալիքւում.
— Հո՛վ արէէ, ապե՛ր...
Սարերը սակայն

Հովը պահում են հօտերի համար եւ ապրուրների,
Որ գիւղը թողած՝
Սար են բարձրանում:
Պղնձի նման հողն է կարծրանում,
Ու երկն էլ հիմա
Աղօթքի նման՝
Երկինք է թռչում,
Ամպերին կառչում.
— Մի քիչ գո՛վ արէէ...

Ամպերը սակայն ինչպէ՞ս գով անեն ապրուրների,
Են ինչպէ՞ս անձրեւ թափեն, ծով անեն,
Եթէ բովանդակ երկնակամարին
Դեղի համար էլ ամպիկ չի ճարի
Ո՛չ մի աչքաթաց–հունարով հնգիմ:

Եւ աշխատանքի ոգին է կրկին
Տիրում ամէնքին:
Գիւղացիները, ոտամարդ թէ կին,

Հաւ-աքլորի պէս պարթևում են հիմա
Գիշերը դեռ կէս եւ ոչ թէ ծէգին
Եւ, աքլորների-հաւերի նման,
Իրիկնանալիս՝ դեռ հացը բերնում՝
Զեն թառում, օ չէ՛.
Յոգնած ու պապրած
Ոչ թէ քնում են,
Այլ կարծես մեռնում —
Իրենց խշխշան անկողիններին
Ֆրխատոսի պէս
Ննջում են այնպէս,
Որպէսզի չուտով
Յարութիւն առնեն
Եւ կիսամութով
Վերատին բռնեն
Նոյն աշխատանքի
Վառվռուն պոչը
Ու նորից խառնեն
Հրդեհին ծէգի
Իրենց աչքերի հրավառ բոցը,
Եւ որ քրտինքի չիթը ծորացող
Անվերջ չակուռով — անվերջ կորացող
Իրենց թիկունքին վարպի մանեմուն՝
Ճամբան կորցրած մրջիւնի նման:
Չէ՞ որ ամառուայ ճոճռան չոգին
Մի բուռ ոսկի է ամէն կորած օր.
Մարդիկ կ'ուզէին նոյնիսկ դիակի
Ձեռքը տալ կոթը բահ ու թիակի,
Որ գնայ բանի,
Աշխատանք անի:

Եւ աշխատում են քարի-քրտինք մաած,
Աչքերը յոյսից ու երազից թաց,
Ու հետո էլ երգում.
— Սարե՛ր ջան, սարե՛ր... —

Հովից են երգում,
Ջովից են երգում,
Որ չոլ ու տաքից չուտ չբեզարեն:

Իսկ չո՛ղը, տա՛քը...

Թո՛ղ որ չնեղը՝
Բնեղը մտած,
Շոգից չնչասպառ՝ լեզուն դուրս կյանի —
Իրենց կաս-կարմիր բոցաձեւ լեզուն, —
Կարծես սխալմամբ կրակ են կրծել
Եւ հիմա, խղո՛ւը,
Ետ տալ են ուզում...

Շողի սիրահար դղումնեը ցնփոր
Թո՛ղ որ թխսի պէս նոքից ետ տանեն
Փարթամ թեւերը երենց թաղերի
Եւ ճաերն երենց եաեւը կցած՝
Զախարի վրայ արեւկող հանեն,
Թառեն էլմանի փայտէ ճալերին...

Ուրիշի աչքին խիստ ծիծաղելի
Արեւածագկի մի պուճուր ընդիկ
Կապկելով հսկայ մեր երկրագնդին՝
Երկրագնդի պէս ծանրօրէն ու լուրջ
Թո՛ղ որ պտտուի՝
Ինչպէս արեւի,
Այնպէս էլ նաեւ իր առանցքի չուրջ՝
Անչափ պահելով ծաղկաաեւեւի
Դիրքը նախնական,
Մոռացած առկայն,
Որ գա երեւի
Ոչ թէ սնոտիական հաւնարն է որ կայ,
Այլ...քամու խոպան բացակայութիւնն...

Թող որ չողն իրօք չարամտօրէն
Մարդկանց խեղդելու մահափորձ անի,
Եւ չուք ու չուաք տան վկայութիւն, --
Մխեւնոյնը չէ՞ պիւղայու համար,
Թէ նա մեռնի՛ էլ՝
Պիտի զործ անի,
Քանի որ
Ամա՛ռ, ամա՛ռ է, ամա՛ռ...

Խեղճ այրի կնոջ անծեւ–անուաղ տանիքի նման՝
Այդինների մէջ հասած պտուղն է անվերջ կաթկթում,
Պիտի հաւաքել — փոել տանիքին
Շէկ ծիրանները՝
Մանրակոտորակ արեւների պէս,
Սեւ սալորները՝
Եղան աչքերի մխամխո փայլով,
Եւ կորիզահան դեղին դեղձերը՝
Անանուն ծաղկի փերթերի նման:

Սայլը բեռնաբարձ՝
Ծանր խրձերից խղճուկ ճռռալով՝
Անիւի կունդից իր մաշուած առնու
Քիթն է մէկ հանում
Ու մէկ ետ տանում՝
Աղուրի փոչում — յորձունքի նման —
Մաղուէթ ծորալով:

Իսկ ջառջառների սեպերը երկաթ,
Քար ատամները պիչատիչ կամի —
Ծամի՛ հա ծամի՛ —
Հաչանն են ծամում, հաչանը ոսկէ,
Որ չուղենալով դարմանը խառնել
Սրսուռ յորեկի արեւահամին՝
Մի բան է տեղչում —
Իրանի քամի՛.

— Սաբե՛ր ջան, սաբե՛ր,
Մի ֆիչ հո՛վ արէֆ...
Իսկ քամին
կարծես մարդու դնացած աղջիկ է դարձել —
Ջանի՛ ամիս է՝ հօրանց չի գալիս,
Իսկ եթէ եկաւ՝
Չի՛ ուզի դնալ...
Մղկղն է թառում պատահած տեղում
Եւ ամէն ինչի,
Մինչեւ իսկ վանքում կիսաբաց ննջող
Աստուածաշնչին.
— Մեղա՛յ էեզ...
Աստուած բարի՛ն կատարի:

Իսկ բարին՝
Թառած ղէղի կատարին,
Ծոի պարսերն է չեղջերից քշում.
Իսկ բարին՝
Մաղուած ցօրեն—պարու հետ
Փայտէ ամբարի դռնով է խշշում:
Մեծ կարասները
Ծոյլ յօրանջում են դատարկ մառանում,
Բայց ոչի՛նչ —
Արդէն խաղողի վազն է կրկին մայրանում.
Ճուխը, ծոցի պէս, ուռչում է հիւթից
Եւ՝ օդոստոսեան եռացած օդից
Ու խեղդող տօթից
Շնչահատ արդէն՝
Մի պահ դրկուելով արուս — ամօթից,
Անպղուչօրէն կոճակն է բացում
Ջմբռնած թփերի.—
Հէ՛րն էլ անիծած.
— Ի՞նչ աւեմ, աղէ՛,
Արեւն ինձ կ'էրի՛...

ՂՕՂԱՆՋ ԱՇՆԱՆԱՇՈՒՆՋ

Քայլ ահա նաեւ չոքն է կոտրւում՝
Գոռոզութեան պէս,
Եւ տեղը ղիջում
Իր վրնն իմացող համեստութեանը:
Կապող անձրեւի միջամտութեամբ
Երկիր ու երկին
Գրկւում են կրկին՝
Վերջ տալով իրենց սուր խաղութեանը
Ու ժխտութեանը:

Եւ աշունն էլի,
Ջարչիների պէս ու բոշաների,
Տեղից–տեղ պնում,
Դոներ ընկընում
Եւ դրսւում է իր ներկարարի սրբած վրձակով:

Ջարչին բարձրանչ կը հպարտանայ
Իր յուլունքների հպարտ տեսակով,
Ասեղ ու չիւղեր, ծամոն կը ծախի
Պառաւ տատերին, հարսներին չարմայ:
Բոշան ցորենով դամբիւղ կը փոխի
Եւ լինչով ուղես՝ մեծ ու փոքր մաղ:
Մինչդեռ աշունը...
Նա բա՛ն չի ծախում,
Օդ ու եղանակ, գոյներ է փոխում:

Մինչդեռ աշունը
Միայն բաշխում է՝
Յորեն ու գարի,
Խմիչք ու փչաո, —
Հազար մի բարիք
Եւ — ամենից չաո —
Անվարձ ու ձրի
Միայն նախչում է...

Եւ այնպէս գանդաղ, որ չես նկաաի,
Աւելուկների ծամերը կանաչ
Էյվանի դէմքին ու տան ճակաաին
Դեղնում են յանկարծ, գառնում անճանաչ:

Ու քաղցրութիւնից ճաքող սեխերի
Անոյշ բուրմունքով
Օծւում են կրկին բոստան–բաղերը:
Իսկ ամերուկի կըրծուած ճաղերը —
Լուսնի հաստ–բարակ փուլերի նման —
Հոդ ու փոշով են ամպոտւում հիմա:

Ընկուզենիները իրենց սաղարթով
Այնպէս են մէկից գառնում հուրհուրան,
կարծես թէ լինեն
Մարմանդ առկայծող հսկայ ծխամորճ,
Եւ որպէս ծխի կոհակուող քուլայ՝
Մշուշն է սողում գաշտերի վրայ
Ու պաոյտ տալիս
Ծերուկների պէս պապած լեռների
Սանր չտեսած — փոշոտ գլխի չուրջ:
Մինչ դեղձին պարկեշտ ու ծիրանին լուրջ
Իրենց սաղարթն են աշխատում կոճկել
Լիրբ քամու հանդէպ՝
Հաստլիկ ուռենին ու ճիպ կեռասին
Պատրաստ են խակոյն

Իրենց լաչակը պլպներից քանդել՝
Մարգաթող հարսի,
Լաչառ կնկայ պէս:

Նորից, խակապէ՛ս,
Աչուն է, աչո՛ւն:

Նորից սանդի մէջ ծեծում են կորկոտ,
Զաւար են խաչում,
Տաք հնձաններում ճմլում են խաղող
Ու գինի քաշում:
Նորից առիշտան,
Որ ձորերին են չարչար վռել,
Թաց՝ օրօրում է լուռ ու անշշուկ,
Զորացած՝ խշշում
Եւ փշուր-փշուր
Թափւում է գետին՝
Խոր-կարպետին:

Քամին կարծես թէ բան է կորցրել
Եւ որոնելով՝
Ալում է գետինն
Ու տեղից-տեղ է խաչամը քշում:
Եւ տերեւների հատո ծածկոյթի տակ
Առուակ ու վտակ
Հոսում են ոչ թէ խշշոցով ջրի,
Այլ կարծես անվերջ ժժժում-թշշում՝
Իրենց մէջ ընկած բոց տերեւների
Ջմարող հրից:

Սերկեւիլները արտի թրթիռով
Վերջինն են լքում անխռով այգին
Ու տեղափոխւում-մտնում են անդուկ,
Որ հաստատաչի ու կողքապնդուկ
Զառ խնճորների հարեւանութեամբ

Պլուեն սիրով ու զորովալին
Կանանց պահուստի չորերին վոթ–վոթ
Եւ իրենց բոյրը խենթօրէն խառնեն
Նրանց մարմնային բուրմունքին առիւտ:

Աչուն է, աչո՛ւն:

Լուսաստղը հիմա
Նոյնիսկ ցերեկուայ զոռերն է մաշում
Եւ ճառագայթուն ու մեծ է այնքան,
Կարծես մի բացուած հովհար է որ կայ:
Հովհարը սակայն
Ո՞ւմ է հարկաւոր, երբ չոր չէ արդէն,
Երբ եղանակը այնքան է ցրտել,
Որ նորից ահա առն խոնաւ օդից
Մինչ ապը լալիս՝
Լաւաչն է ծաղկում,
Իսկ պաղ եղեամի հալուելուց յետոյ
Կալում մնացած կոյտը ծղօտի
Իրար է կպչում՝
Կարծես թէ թաղքում
Մարերի նման չեկլիկ ապջկայ:

Անցած ձմրանը նշանուածների կոպերի տակով
Անհամբերութեամբ սահում է հիմա երազանքն այրող
Այն հարսանիքի,
Որ պիտի լինի, բայց ղեռ, ա՛խ, չկայ:
Գիշերուայ կէսին առնոյն է լալում
Հօտ ու նախրի հետ սարից պիւղ իջած
Անկուշտ պայլերի:
Իսկ նոյնքան անկուշտ ջրաղացների
Անխոնջ չախչըկան
Կոչնակի նման կանչելով անվերջ՝
Ճամբան է պահում,
Ապուռով բարձուած սոյուն սայլերի:

Եւ ահա —
Կամաց էշէն սելերը...
Եւ ահա —
Աշուն եկաւ սարիցը...
Եւ ահա
այսո՛ղ —
Երկինքն ամպել է...
Եւ ահա —
այնո՛ղ —
Էս լուսնյակ գիշեր...
Եւ ահա —
այսպէ՛ս —
Մէշա նա է ներկայ՝
Նա՛
չինականի յար հաւատարիմ
յուէտ անբաժան
մեծ օղնականը.
Նա՛
չինականի յար հաւատարիմ,
հօտաղ–մշակը
ու... երբոր ձեռքը —
Նա՛ —
Լինքը... Ւ՛րդը:

ՂՕՂԱՆՋ ԱՀԱԳՆԱՑՈՂ

Ե՛րգը...

Կարծես անից ելած մի պանդուխտ էր բաղմաթափառ
Եւ ուղում էր կրկին վարել հայրենիքին:
Հայրենիքն էր... նրա հոգին:

Ե՛րգը...

Կարծես մի թռչուն էր, որ չուելով բնապղարար՝
Ետ էր թեւում պիշերն ի լոյս եւ օրն ի լուն:
Եւ նրա չէն ականջն էր... լոյն.

Այլ ակա՛նջը...
Ջրուարների,
Սարուորների ուրախ կանչը,
Ձոյլ պանդերի ծոյլ զօդանջը,
Առուի յիմար բլբլոցը,
Ճրագների պլպլոցը,
Հովի հունչը,
Թոնրի չունչը,
Մեղմաւած սրտի խուլ մրմունջը,
Երգոների ու ծաղկունքի փսփսուկը,
Ոպրատացի կոճն ու սուլը,
Արտասուքը,
Որ ծնուելով վառ ցաւի մէջ՝
Դուրս չի պոռթկում,
Այլ կաթում է սրտի խորքում,

Ինչպէս մթին անձաւի մէջ,
Եւ այդ ահեղ կաթիլթոցը
Մինչեւ անդամ քար է ծակում.
Կէսշոր ու թաց փայտի նման
Վառուող յոյսի ճիճիթոցը,
Որ վառ ցրտի դէմ-յանդիման
Ինչքան չլինի դուռ է փակում.
Զարհաճնի քամու առաջ
Տերեւների սրսփումը՝
Աչնան վառած անհուր բոցում.
Նոր մայրացած առինքների
Մխմռանց հետ լուռ չփումը՝
Այդու նման բուրող ծոցում.
Զրի ճամբին ալքիկների քչփչոցը,
Մինուճարին հետու ճամբուղ
Մօր խնդատար պոչպչոցը,
Տաք հնձանի կպչուն ղրան
Զիլ ճռինչը,
Անպէտ տեսած թուխսի սարսափն ու կռինչը,
Նրածինի աղտարարիչ-հրամայող բարակ ձիչը, —
Ամէ՛ն, ամէ՛ն, ամէ՛ն ինչը
Ալիք առլիս,
Գալիս-գալիս,
Ծռմռում էր այդ ականջում,
Հարար ձեւով այնտեղ հնչում,
Յետոյ առնչում ու պահանջում
Ելնել-թափուել սրտերից-սի՛րտ,
Հոդուց-հոգի՛,
Ցոյցով ցօղել
Ու ողողել
Ամէն ոքի...

Ա՛յն, որ այնպէս ցիրուցան էր՝
Կամենում էր լինել հաւաք.
Ա՛յն, որ միայն աղմուկ էր դեռ՝

Յանկանում էր դառնալ նուագ.
Ա՛յն, որ հնչիւն, անկապ ձայն էր՝
Եղանակ ու երգ էր ուզում, —
Վարարումի ու յորդումի
Ելք էր ուզում:

Իսկ թղթերին —
Հապար ու մի երգ–եղանակ՝
Դարձած նոտա.
Իսկ թղթերին —
Հապար ու մի խազիկ–ատոկիկ՝
Հայաչխարհիկ
Նաեւ օտար:

Իսկ թղթից դուրս —
Որքա՜ն երկեր,
Որ չեն տեսել ձայնագրողի՝
Գոնէ օտար ժանկը քերող
Հմուտ ձեռքեր:

Իսկ թղթից դուրս —
Որքա՜ն վէրքեր,
Որ դեղջուկը ձայնով կերկեր
Երգ է դարձնում ամէն վայրկեան:

Իսկ թղթից դուրս —
Որքա՜ն, որքա՜ն
Շինականի ձեռքով յանուած,
Բայց չհնձուած–անուան բերքեր...

Ա՛խ, հաւաքէ՛ր այդ ամէնը,
Կրկնապատկած է՛ս տար կրկին,
Սիրով բաշխեր նրանց, ովքեր
Իրենց արեամբ ու քրտինքով
Ծմօրում են տուել երկին:

Իր հետ մէկտեղ այն ժամանակ
Գիւղացին էլ դուրս երկէր.
— Հով, հով, հովն ընկաւ,
Դարդրս ծովն ընկաւ...

ՊՕՂԱՆՋ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ

Սակայն գարուը պիւղացու
եթէ անգամ
Ծովն ընկաւ,
Ծովը գարձեն պիւղացու
կարծես գիամամբ իւղ ածում,
Ոչ թէ ծանըը ապաջուը —
կարծես իւղով է օծում,
Որ այդ գարուը չընկղմի՝
Որս չգառնայ շար տղմի:
Ալիքների մոլի ծա՛փ,
կոհակների խաղացո՛ւմ,
Եւ նոյն գարուը ոչ–առոյգ
Շպրտուում է նորից ափ
Ու... կպչում է պիւղացուն,
Ինչպէս չապիկը՝ մէջքին,
Տաք յուռինքից թաց մէջքին —
Եւ ի՛նչ քրտինք... ապաջո՛ւը:

Ջուր է դեղջուկն ապաչում
Եւ յոյսի չոգն իր աչքի
Նետում երկնի հրաչքին:
Վերում՝ առուուած ծանրականջ,
Ցածում՝ ապօթք ու դուր կանչ,
Արտերը պատառ–պատառիկ՝
Ամբի լանջին կաղկատան.

Ծխատ–մրոտ պատ–առիք,
Բոպիկ ոտեր, հին քաթան,
Եւ հագար ու մի կարիք,
Հագար ու մի ծակ ու ծուկ.
Պիտի ուզեն հարանացու,
Առնեն չոր ու մատանիք,
Պիտի փոխեն ծածկը տան,
Պարտքը մարեն, հարկը տան՝
Ու կաշառեն չրպետին,
Նաեւ պիտի... դեռ պիտի...

Պիտի վայրեն ու հերկեն,
Վարեն–հերկեն
Ու երգեն.

— «Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած...

Աչքերը կանչեց դամի դրանը,
Դեռ նոր է բացուում ագօթարանը:
— Աստուա՛ծ, փառդ շա՛տ...
Եղնարած ոպան թող անույշ քնի,
Գութանաւորը վեր կենայ բանի:
— Աստուա՛ծ, փառդ շա՛տ...
Գութանն է դնում — գութանն է դալիս.
— Այ ճր՛լ–վր՛աս, ճր՛լ–վր՛աս...
Ուրախութիւնից ակերն են յալիս.
— Այ ճր՛լ–վր՛աս, ճր՛լ–վր՛աս...

Հօ՛ արա, Շեկո՛,
Շօ՛ արա, Լաչի՛ն.
— Մէջը կորպ մնայ:
Քչի՛ր հա, Նիկո՛,
Գաղիր աստկածին.
— Գնայ հա՛ գնայ:

Գնաց հար պնաց.
— Ոտդ լէն արա, —
Էն էլ ո՛նց պնաց:
Գնաց հար պնաց.
— Տղա՛յ, ձէն արա, —
Էլ բա՛ն չմնաց:

Զո՛ռ ուտես, Մխրա՛ն,
Ի՛նչ ես կախ ընկել.
— Դէհ, քաշի՛, քաշի՛,
Հազնեմ քո կաշին:
Տօ՛, տղայ Տխրա՛ն,
Մաճկալի ընկեր.
— Աչքդ բաց արա,
Կը քնես ճաշին:

Արաբը լեռ քար է,
Առը երկար է.
— Բայց խոփն էլ սուր է:
Քաղցած ենք ծարաւ,
Ա՛յ հարս, ի՛նչ դառաւ.
— Բա գալըդ ո՞ւր է:

Է—հէ՛յ, հորիվար, ձիպտի՛ն առաւ,
Սեւին հօ՛ արա, կապտի՛ն առաւ.
— Կապոյտ եղ, չառակի՛ս հա:
Թէ հօ ես անում՝ լա՛ւ արա,
Բերան չես բանում, ուտա՛ր.
— Վարել ենք արտի վատ կէսը:

Թխուել ես ոնց հերսուտ մածուն,
Լծի տակ եղէ՛ արածում.
— Սատկածին տեսա՞ր:
Ես քեղ եմ ասում, էյ Վաչէ,

Կլոբիկ պոքանչիդ պաչեմ.
— Ա՛յ դու չան վեսայ:

Ծիր տանք հա՛ ծրենք,
Մեր պարտը ցրենք.
— Ես քեզ եմ ասում,
Սրտակ ջան, —
Հոլը սեւանայ:

Հացն եկաւ: Բանանք,
Ուտենք կշտանանք,
Որ, քեզ եմ ասում
Սրտաբ ջան, —
Ուսերդ հովանայ:

Ձեզ՝ խոսի լաւը,
Մեզ էլ՝ վլաւը.
— Հորսովե՛լ հօ:

... Դէ, ելէք լծենք,
Խոփը հող պցենք.
— Հօ՛ հորսովե՛լ:
Նո՛ր ակօս բացենք,
Ծո՛ր ակօս բացենք
Իր՛ւ առաւել:

Յաչող է տարին.
Նամուսով վարի՝
— Մէկին տաս վը տայ:
Խոսի տեղ դու, տե՛ս,
Զոր ճխպռա կ'ուտես.
— Ա՛յ եղ անպէտան:

Գիտե՛մ, ոսմաչ ես,
Ոտերի՛դ մատաղ:
Բա է՞ս, Ծիրան ջան,

Իմ սի՛րտն է մաշած։
Քրտընքախառն ես,
Իմ համե՛ղ հօտաղ,
Բա ե՞ս, Տէրան ջան,
Իմ սի՛րտն է խաչած։

Ականջ մի՛ դրէք.
— Հո՛ ասէք,
Դարպնեղդ ցրէք.
— Շո՛ ասէք։

Դարդը քա՞ր կ'անի՝
Աստուած ճա՛ր կ'անի.
— Հորովե՛լ։
Աստուած ինչ չանի՝
Մարդը դի՛նչ կ'անի.
— Առաւե՛լ։

Թող չկարուի ակի ճոխինչը,
Գուլթանի անուչ ճլվատիկ ձէնը.
— Իր ձէնի՛ն մատաղ։
Առանց դուլթանի աշխարհքը ի՞նչ է,
Նրա վրայ է աշխարքի չէնը.
— Իր չէնի՛ն մատաղ։

Հօ՛ ասա, եղօ՛ ջան, հորովե՛լ,
Ծարաւ ես՝ ես էլ եմ ծարաւել,
Դաղրած ես՝ ես քեզնից առաւել,
Ինձ էլ է ասելը խորովել.
— Հորովե՛լ։

Թէ մեզնից Աստուած է խոովել՝
Աստըծուն ձէն կը տանք առաւել.
— Օրհնեա՛լ է Աստուած,
Հորովե՛լ.
Յիշեա՛լ է Աստուած,
Հորովեեեեե՛լ»...

ՂՕՂԱՆՋ ԲՈՂՈՔԻ

Եթէ հայ խաղի ու տաղի հանդէպ
Խլացել էին մեղնից չաուերը,
Եթէ մերային խեղճ ու վատերը
Մեր արդար հացն ու պանիրը թողած,
Աչք էին տնկում օտար փախլաւին,
Ախա օտարը —
ամենա՛յն սիրով,
Ախա օտարը —
խօսքերո՛վ,
ղրո՛վ,
թաքո՛ւն, բացայա՛յտ
Մեղ էր բանտարկում՝
Մի ամբողջ աղի հեչտօրէն ղրկում
Իր անկապտելի երգից ու պարից,
Մի ողջ ժողովուրդ կապում օտարից,
Օտար ղրանը տնփեսայ սարքում
Մի տղամարդու, որ չէն տուն ունէր,
Տան մէջ սիւն ունէր,
Սեան վրայ՝ տանիք
Ու տանիքի տակ՝ հսկայ ընտանիք,
Որ, ճիշդ է, պիտէր հիւրեր ընդունել,
Բայց պիտէր նաեւ ճանապարհ դնել,
Ու թէ կառուրը կաթէր անձրեւից՝
Գիտէր վերտուին պատել սուտպով...

Մինչդեռ խուլ,
անլուր,
Եւ կամ չարալուր
Ականջներն օտար միշտ հակուած էին
Հայոց երգի մէջ
Լսել ասսափը պարսկա–պենդական,
Հայոց տաղերում
Որսալ մեղեդին յոյն – բիւզանդական,
Հայոց խաղերում՝
Թուրք–թաթարական բայաթի–չարքին:

Հայերն աչխարհում բանսարկուած էին.
Սրերի՛ց յետոյ,
Թրերի՛ց յետոյ՝
Հիմա էլ լեզուի՛ թունաւոր նետով —
Ա՛ռ —
զարկուած էին...

Քեզ հարուածողին որպէսզի զարկես
Եւ ունեցուածքըդ ու կեանքըդ փրկես՝
Պիտի զարկողին իր զարկից զարկես:

Թէ ոտաքնի պէս ատեր են հիւսում,
Եւ դու կեղծիքը ճեղքել ես ուզում՝
Պիտի սովրես ատողի լեզուն:

Իսկ նա չատ յաճախ ինքն էլ էր զգում,
Ինքն էլ էր զգում,
Որ իր յոգի բազկում
Տալիք հարուածի թափը պակաս է —
Դատապարտեալի իր արդար լեզուն
Դժուար է պտտում, պտտում է հազիւ,
Պտտում է այնպէս, կարծես կաֆազ է:

Մինչդեռ ուզում էր
Ու երազում էր

Գաչօն առանալ եւ դառախաղի.
Աչխարհի առաջ բարձրանալ տեղից
Ու հատ–հատ ասել.
— Ծօսելն իզուր է, ճառը՝ անտեղի:
Մի՛ասլը, ապա՛, սը՛ր.
Տիկնա՛յք մեծարդոյ, պարոնա՛յք ազնիւ,
Քար ու կշեռքին ի՞նչը կը հասնի:
Այս՝ կշռաքարը, այս էլ՝ կշեռքը.
Մեզանից՝ ահա մեր տալն ու երդը,
Ձեզանից՝ կշեռքն ու կշռող ձեռքը:
Թող զժուարութեամբ ու հակայ չանքով
Բարձրանան–իջնեն կշռաքիները,
Անվատահութեամբ ու կասկածանքով
Իրար հատուտեն կշռաքիները,
Եւ ճիշդը խօսի, լռեն տեերը:

Այս էր նա ուզում,
Այս օրը յուսում,
Բայց եւ պղում էր,
Որ յայլք բակում էր
Տալիք հարուածի թաւիրը պակաս է —
Դառատաչոպանի ու դառախաղի
Իր արդար լեզուն
Շարժուում է հապիւ՝
Պատում է այնպէս, կարծես կակաղ է:

Իսկ թէ կեղծիքը հերքել ես ուզում,
Պիտի ասլօրես ատողի լեզուն՝
Հրաժարուելով դառարկ դեղումից:

Պէտք է ասլօրել,
Իսկ որտե՞ղ, ումի՞ց,
Իսկ ո՞ւմ մօտ, իսկ ո՞ւմ...

ՂՕՂԱՆՋ ՊԱՆԴԽՏԱԿԱՆ

Չայ պատառուներն լրենք են ղղում,
Որ ջահել սանի առաջմպումից
Յոպնում կէս ճամբին ու ետ են մնում:

Եւ կամէտասը Բեռլին է գնում:

Ու պերմանական
Քաղաքում խոժոռ
Ինչ-որ վանական՝
Աչքերը խոշոր,
Կերպարանքը թուխ,
Դէմքը՝ բանական,
Իր անբնական
Կուսակրօնի երկար սեւերում
Պաղ անցորդների հայեացքն է անվերջ
Վրան սեւեռում,
Մինչ մոլեռանդի աչքերը նրա՝
Նոյնպէս բեւեռուն,
Չեն մեխում սրա
Կամ նրա վրայ,
Այլ պեղում են լոկ անծանօթ հեռուն:

Եւ կոչտ ու կոպիտ պերմաներէնը
Շուրջ երեք տարի, հարկադրաբար,
Ճկւում է անվերջ նրա բերանում,

Սակայն չի ջարդում վերջնականապէս,—
Կարծես թէ թողած լեղուն կենդանի՝
Գրում–կարդում է նորից ղրաբար՝
Ձեմարանական խելօք սանի պէս:

Ի՛նչ անենք. ոչի՛նչ, ոչի՛նչ, որ այդպէս
Գերմաներէնը նեղում է հային:
Կար ա՛յլ մի լեզու՝ համամարդկային,
Այդ լեզուով խօսող գերմաններ կային,
Ու չէր վերջանում նրանց ղրոյցը:

Կտրելով բառի բարակ սառոյցը,
Ոչ երբեւ օտար — սառն ու կեղծամիա,
Այլ մեծ պապի պէս՝ առանց կեղծամի՝
Գալիս էր Բախը ու ծանր նստում
Երկեհոնի դէմ, Ֆիդհարմոնիայի,
Ու բարի ժպտում մրայօն հային:

Եւ ալիքում էր մի վսեմ մեսա,
Ու Բախը կարծես ասում էր.
— «Տեսա՞ր»:
Անհուն սրբութեամբ երկինք էր միտում
Մի հոգեսրբիչ հոյակապ խորալ,
Եւ ծերուկ Բախը ջահելին դիտում,
Հարցնում էր կարծես — եւ պրաբարո՛վ.
— «Իմա՞ստը դորա»:
Իսկ այնուհետեւ մի լուսէ Ֆուգա —
Եւ հիմա արդէն Գիւմրու բարբառով.
— «Հը՞, դուրըդ կու դա՞յ»:
Իսկ այնուհետեւ՝
Օրատորիայի
Նարեկանման ծփացող մի ծով
Լռիկ մեղմութեամբ, աղօթքի ճիչով
Դիպուում էր դանդաղ, փլչում չատ արագ,
Մինչդեռ ականջում մոլեռանդ հայի

Օրատորիայի ծփանքի միջով,
Խեղդելով խորթ ձայնն Օրատորիայի՝
Իրենն էր հնչում —
մի նոր Պատարագ...

Ու մեկ էլ յանկարծ Մոցարտն էր պալիս՝
Գեղեցի՛կ, ջահե՛լ, կայտառ ու խնդո՛ւն,
Եւ պաղ դահլիճում ծխծաղն էր թնդում:
Նա մերթ՝ բարեկիրթ մանկան պէս՝ ուշիմ
Լսում էր հային, խփում էր ուսին,
Մերթ՝ յանպատրաստից երբ եղանակում
Եւ մեկ էլ՝ խօսում համբոյրից կոյտի,
Սրա վեհաբերը ծայրուծանակում,
Վկայ էր բերում երեն, ուրիշին՝
Զափից աւելի անկեղծանալով:
Ու երբ տեսնում էր՝ բան դուրս չի պալիս,
Յուսահատօրէն ձեռքը թափ տալիս
Ու լրջանալով,
Անկեղծ չանալով՝
Նորից էր ուզում հային համոզել,
Որ պէտք է այսպէ՛ս — ո՛չ այնպէս խօսել:
Մէջտեղ էր պալիս ուրախ Ֆիգարոն,
Դահլիճում ապրքում չքնել հարսանիք,
Իսկ ներս մոքո՛ւմ...
Ասլիկ—պատանիք
Սարից իջնելով՝ եկնում են տանիք,
Որ մեկ էլ տեսնեն, թէ ինչպէս Սարոն
Անուշի տեսքը հեռուից որսալով,
Մոռացած ազաթ, ընկեր ու աչխարհ՝
Գետնում է Մոռուն...
— Դուք ինձ չէ՞ք լսում,
Այս է ճիշդը, հե՛ռ, այս է պէտք, պարո՛ն:

Իսկ հեռ — պարոնը լսում էր ուշիմ.
Զմեռ ու ամառ

Ընտանում յամառ,
Բայց եւ կըկընում.
— Ուրիշն՝ ուրիշին,
Ես իմը, իմը, ես իմն եմ ուզում,
Իմը, դուք հասկա՞ն...
Ու չէր ուտըտում «հասկանում էք»–ը։

Իսկ երբ այս հսկան
Եւ կամ թէ ուրիշ վիթխարու մէկը
Հայ վարպետների հոգին էր յուզում
Եւ գերեվարած տանում իր հետքով —
Երբ նա չէր պոռում փրկումի դեղ–ճար,
Նրա բերանից ճչում էր «խղճա»–ն՝
Հայցում էր Բախի մեներգ–աղօթքով...

Ա՛խ, նրա հեռո՛ւ–հեռո՛ւ հայրենիք,
Էսո՞ւմ ես արդեօք մենակ ու մենիկ
Ձղջացող որդուդ։ Մի՞թէ չես ղրում,
Որ հեռուից–հեռու անձայն պոռալով՝
Այդ քեզ է դիմում Բախի խորքով.
«Ջեզնից հեռացայ, բայց դարձայ իսկոյն»։

Ա՛խ, նրա հեռո՛ւ–հեռո՛ւ հայրենիք,
Այդ ինչպէ՞ս,ինչպէ՞ս դու զարճար կնիք
Եւ ինչո՞ւ դու հէնց ընտրեցիր նրա՛ն
Ու դրոշմը քո, երբեւ ստրը խաղան,
Դրեցիր վրան՝
Ասելով. «Իմն ես,
Ո՛ւր էլ որ գնաս՝ իմ ճա՛րտը, ծառա՛ն,
Իմ մինուճարն ու հաւատարի՛մն ես»։

Ա՛խ, նրա հեռո՛ւ–հեռո՛ւ հայրենիք...

Ժամեր չարունակ մենակ ու մենիկ
Եւ համբերութեամբ մի անհատնելի,

Խեղդելով հոգու նեղահատությունը՝
Պատ առելներին հաղորդում էր նա
Իր ամենապայ ու ջերմ մտածմունքը:
Արտումն այրող ու տաքությունը:
Նրա վեպարի թոպած ատուերը
Ժամեր չարունակ անվերջ ընկնելով
Ֆիզհարմոնիայի սեւափայլ նեբկին՝
Մթագնում էր այն կրկին ու կրկին:
Գոթական ոճի պրոպարանում
Նա, ապեղի պէս, անչարժ կորանում
Եւ ամէ՛ն ինչ էր չուրջը մոռանում:

Բայց ամէն անգամ
Երբ ծանրանում էր վիշերը՝
մթին,
Ինչպէս վեպարը,
եւ վարդապետին
Վեպարի նման նեղութիւն տալիս՝
Մի անկոչ հիւր էր մթան հետ գալիս,—
Ա՛խ, գալըս ո՛րն է,—
Կարօտից մարող կնոջ պէս վազում,
Գոնէ մի թեթեւ հարց էլ չէր տալիս,
Հարց տալըս ո՛րն է,
Զեւի համար էլ նոյնիսկ չէր տանում,
Թէ վարդապետը ուզո՞ւմ է,—
վազո՛ւմ
Եւ թեւերն իր տաք՝
Մէկ-երեք-չորստակ
Փաթթում էր, պլլում նրա պանդուխտի
Կարեվէր սրտին:
Թո՛ղ նա վերտաին
Գուսակրօճի կռչմանն իր վայել,
Սրբօրէն հատատաս իր տուած ուխտին՝
Անկոչ սիրուհուն իրենից վանէր:
Թէ գոնից հանէր՝

Պիտի երեւար բայց լուսամուտին,
Լուսամուտի պէս աչքերը փակէր՝
Հիմա էլ մութի դուռը կը թակէր.
— Ընդունիր տունըդ:
— Ո՞վ ես, անո՛ւնըդ:
— Սուտլիկի՛ս մի տես,
Դու ինձ լա՛ւ պիտես:
— Ո՞վ ես, անո՛ւնըդ:
— Հայրենակարօ՛տ...

Եւ վարդապետի հայեացքի դիմաց,
Նրա կարօտած աչքերին ի տես,
Զղում էր յանկարծ կածանը քարատ.
Սարաւանդակից
Գութանի խումին էր յանկարծ պոպըռում.
Թոնրի պռունկին, սեւ պուտուկի մէջ,
Ապուրն էր պապում.
Ճակատին չարուած բոլոր «արծաթի» ծախերի ներքոյ՝
Ամառան մի հարս
Նախշուն կարպետին ձուլար էր մաղում.
Իրենց մացառէ ցանցառ բեղի տակ
Ծխծխում էին քարափներն անուակ՝
Աղունակների ու կաքաւների
Ետուռ յարուցող կրկրան ձայնից.
Բարակ պոլորչին, անոյշ խնկի պէս,
Ծխում էր այգում, երնում հնձանից.
Հարթ կատուրներին ծլծլում էին
Աներեսօրէն կանուչած խոտեր.
Ջահել ու բորիկ կանայք ոտեր
Թրխմփում էին
Ու ապում էին
Իրենց հետքերը ապուրի վռչում...

Ցատակ էր այնպէ՛ս ու չօչափելի՛,
Տեսնում էր կարծես եւ ոչ թէ լիշում.

Եւ աչքերն էին թաց ու մշուշում
Ինչ-որ մոմոթից, որ անուն չունի.
Թիկունքի վրայ պզում էր կարծես
Վաղքը երթևեկ ինչ-որ մրջունի
Ու դուռը զարկող կաթօտ կոչուածը, —
Էլ ի՛նչ հրաւէր —
Սենեակ էր խաւարում
Եւ անմոռացն էր վերյուշում.
— Կուսի՛կ...
Խաբրիկ մը չունի՞ս...

ՂՕՂԱՆՋ ԿՈՏՈՐԱԾԻ

Ղ՛, կռունկ չկար Բեռլին քաղաքի երկընքում մթագ,
Որ վարագուրուած հայոց աչխարհից
Գէթ խաբրիկ մը տար:
Հայց Գուառնիերիին ծնած աչխարհում՝
Սեւ կռունկների սեւ երամի պէս՝
Սեւ տառերն էին լրագրերի էջերին թափուում:

Եւ մի օր յանկարծ —
Ահաւո՛ր վայրկեան —
Եւ մի օր յանկարծ այդ տառերը սեւ՝
Քիչ առաջ հանգած
Այժուխնեը տակս՝
Մտանեն են այրում պրաչարնեերի,
Ու տաք տոպի պէս՝
Ընթերցողների լեզուն են վառում:

Նորից ու նորից
Հայոց աչխարհում
Մինչ թռնիրնները՝ արիւնից մարում,
Խաղաղ ծխացող լուռ երդիկներին —
Աքաղաղի տեղ — բոյերն են պարում:

Եւ լեզուազուրկ մայրերը հայոց
Ձուր են մրմնջում ազօթքը կեղկեղ,
Համբր Տիրամօր նիհար ծնկներին
Իզուր են այդպէս աղերսով վարում, —

Եթէ ունենար
Որեւէ հնար
Ինչո՞ Տիրամայրը իրեն կը վըրկէր,
Մինչդեռ քիչ յետոյ ինքն է դառնալու
Պիղծ հանաքների,
Կեռ դանակների
Եւ այն հրդեհի չար կրակին կերը,
Որ նորից հիմա
Մարդկային մսեր
Ու ոսկորներ է չան պէս ճարակում:

Տարաբախտ երկրի
Եւ Աստծուց թափուր երկնի տրանքում,
Իրրեւ ամօթի ծանրը վարագոյր,
Փռւում էր ծուխը,
Եւ ճենճահոտը,
Օդի չերտերն էր այնպէս վարակում,
Որ — անժամանակ —
Կռունկներն անգամ թողին — չուեցին
Եւ ուր թեւեցին՝
Ահ ու սարսափից լեզուն կապ ընկած
Հայ մանչուկների համբերի նման՝
Կը՛վ–կը՛վ հա՛ կը՛վ–կը՛վ՝
Անվերջ կռվեցին,
Անգութ աշխարհին իմաց տուեցին,
Որ հայոց երկրի ճորերում անտակ,
Կիրճերում խորունկ...
Ա՛խ, էլ ի՛նչ կռուվ։
Երբ հիմա վառման թոնիր էր դարձել
Թոնիրի երկիր Հայաստանն ինքը,
Ու թոնրին պրուած սեւ խուփ էր կարծես
Հայոց երկինքը...

Եւ ո՞ւր է ինքը։
Ա՛յտեղ՝ Բեռլինո՛ւմ, —
Սրամիտ բախտի ինչպիսի՛ հանաք

Ու ծաղրուծանակ։
Է՛հ, հայի կեանքում ինչե՛ր չեն լինում,
Վաղո՛ւց է դրկուել նա զարմանալու կարողութիւնից։

... Զվախենալով թուրքայ երբեմնի դօրեղութիւնից՝
Երբ ռուս–տաճկական կուռւմ հերթական
Ռուսաց սուինը, թուրն ու բերդանկան
Անճնաոուր արին ճամբին հանդիպող
Թուրքական բազում բերդ ու բերդակալ,—
Է՛լ զերմանացի, է՛լ ֆրանսացի, է՛լ անգլիացի՝
Իւրաքանչիւրը խփեց իր ծնկան,
Ու բոլորը մէկ ձեռ ու ոտ ընկան,
Սան–Ստեֆանոյ քաղաք գնացին՝
Ա.յնտեղ դումարուող վեհաժողովին,
Որ... Պետերբուրգը յաղթութեան պաչից
Իր սպասած էլ բերք ժողովէ։

Երկար նստեցին, ուշ–ուշ վեր կացան,
Դրսից ժպտալով՝ ներսից բարկացան.
Անգամ լռելով՝ իրար հասկացան,
Ու երբ, վերջապէս, պիղատոսաբար
Մաքուր լուացած իրենց ձեռքերով
Հայկական հարցը մէջտեղ բերեցին,
Քանի տաք էր դեռ՝ մէկ վերցրրեցին,
Մէկ էլ վերատին ներքեւ դրեցին,
Եւ ամէն մէկը մատներն իր վառեց։
Բայց ամէն մէկը այնքան չատ ճառեց,
Մինչեւ որ հարցը բաւական սառեց, —
Ու ցիների պէս ընկնելով իրան՝
Կատղո՛վ, ճանկո՛վ լա՛ւ քրքրեցին,
Առան–տուեցին, տուեցին–առան
Ու վերջում... հարսի լեցուն կոնքերով
Փեսայի աչքին լաւամարդ դառան.
Այս ու այն կողմից մխաւորների պերոն քերեցին,
Ու մնաց մի թիւ,
Որ էլ չի քամուի՝ ինչքան էլ քամես,

Ու մի թիւ մնաց... համեստիկ համեստ,
Մնաց 16 —
«Հայկական յօդուած» —
Հայկական հարցի բզկըտուած մարմնից
Ոչ թէ մինչեւ իսկ դաշտնով հատուած,
Այլ քաշքըշոցո՛վ,
այլ եղունգներո՛վ
մի կերպ ծուատուած...

Սակայն... աշխարհում ինչի՛ր չեն լինում:
Սակայն աշխարհի ցնփոր տէրերին
Դա էլ շատ թուաց:
Եւ ահա նրանք վերատին եկան վեհաժպտուկի:
Այս անգամ արդէն այս նոյն բեռլինում,
Հայկական հարցը —
Յուշաթելի պէս —
Մատին փաթ տուած:

Երկար վիճեցին, տուին ու առան.
— Հայ պատուիրակը թո՛ղ նստի դրանն...
Ամէնքը մի–մի պողպատէ կտան՝
իջա՛ն մեր սալին.
— Վա՛յ տամ մեր հալին...
Մեր արեան դիմաց՝ ծախսեցին թանաք.
— Ա՛յ քեզ խաչապաչա թրքի յաղթանակ...
Աղուէսութեանը խառնած չնութիւն,
Ներհակութեանը՝ միխրանութիւն —
Մեր արցունքի դէմ մի կում ջուր տուին,
16–ն այսպէս մի կերպ չուռ տուին:

Աչքըդ լո՛յս լինի,
Դու օգտուեցի՛ր, թուաբանութի՛ւն...
Շուռ գալով՝ ամէց
Քո 16–ը —
Դարձաւ 61:
Իսկ մեր հա՞րցը, մե՞նք:

Իսկ հարցը հայոց քամուն վերատին՝
կարծես թէ թափուած արեան համեմատ.
Մի թիզ էր եթէ Սան-Ստեֆանոյում՝
Բեռլինում արդէն նա դարձաւ մի մատ.

Այո՛, այսաեղ էր՝ այս նոյն Բեռլինում,
Որ բարեխընամ մի վեհաժողով
Որոշում հանեց... հայ հողագուբկին
Զբաւարարել վեց արշին հողով,
Այլ — ընդամէնը — չհեներացընել
Մահուան ու ջարդի մշտական դողով...
Ֆաղցած հաւի պէս, քուն թէ արթմնի,
Հայն էլ ինքն իրեն տեսնում էր անվերջ
Ինքնավարութեան ՚կօրեկով լեցուն
Հսկայ մարտկում,
Ինքնավարութիւն,
Ու հիմա դարձաւ... բարենորոգում:

Բարենորոգո՛ւմ...
Գլուխը քա՛րը.
Թող լինէր թէկուզ բարենորոգում,
Բայց ո՛չ թէ թղթին, ո՛չ թէ թանաքով:
Բարենորոգո՛ւմ...
Եթէ ամէն ինչ
Ջարդում ես քարով ու դատանակով,
Փրթում ես թրով ու կեռ դանակով,
Խուժանի խուժմամբ՝ ասես հանաքով,
Նաեւ լրջօրէն՝ կարպին բանակով, —
Ի՞նչ ես նորոգում.
Իհարկէ լա՛յը,
Որ չի չորացել,
Եւ կատրա՛ծը,
Որ չեն մոռացել...

Եթէ անջըրդի հող ես ոռոգում —
Ի՞նչ է, եթէ ոչ բարենորոգում...

Եւ Արեւնարբու սուլթանն խկաղէս
Հայէ... ջուր դարձած արիւնի գետով
Հայոց անչքրդի հողն էր ոռոգում,
Եւ այդ էր կոչւում բարենորոգում՝
Այս նոյն Բեռլինի 61 կէտով:
Եւ հիմա... դատարկ այդ որոշման տակ,
Իբրեւ իր կնիք վաւերացումի,
Կարմիր սուլթանը՝
պաղ թանաքի տեղ
Լա՛ւ թաթախելով մեր արեան մէջ տաք՝
Դնում էր վայրի մի կրունկ...

— Կռո՛ւնկ...

Ա՛խ, էլ ի՛նչ կռունկ, էլ ի՛նչ ևս կռունկ,
Սրտաւե՛ր պանդուխտ.
Որտե՞ղ ես տեսել երկինք հասցընող
Փրկարար սանդուղք,
Ո՞վ կը կչտանայ՝
Հայի փոխարէն թէ նրան տան թուղթ...
Սրտամե՛ռ պանդուխտ,
Էլ ի՛նչ ես այդպէս լալիս,
Զայն տալիս
Կռո՛ւնկ հա կռո՛ւնկ,
Ա՛խ, էլ ի՛նչ կռո՛ւնկ,
Երբ ճռնչոցով դարպաս ու դրունք
Հայոց յոյսի դէմ ուժգին փակուեցին,
Երբ հայոց Ուխտի
Յոյնատանջ ուլտի
Երկու ծնկները էլ երեքտակուեցին —
Նորից մոլեգնեց մահուան հարսանիք,
Եւ Պոլսից մինչեւ պատժուած Սասուն՝
Հայոց աչխարհի ամէն մի մասում
Անբան անասուն դառնալը թուաց մի մե՛ծ արժանիք.
Թող կթե՛ն, չորթե՛ն,
Միայն... չմորթե՛ն,
Միայն...

ՂՕՂԱՆՋ ԶԱՐԹՕՆՔԻ ԵՒ ԿԵՆՍԱՏՄԱՆ

... Եւ խորհել,
Որ այդ նոյն պահին,
Երբ թուրք սուլթանը
այսպէս վեհաշուք
Տօնում էր ծնունդն ու չմեռնելը յոբելեար Մահի,
Մի եւնոյն պահին
Այդ նոյն աշխարհում
Գարո՛ւն էր, գարո՛ւն:

Քարայծը նորից
Իր քարայծիկի դունչիկն էր լիզում կերճում ու սարում՝
Ձեղուի ծայրով էլ թոյլ չդիպչելով
Բերնի ընձիւղին.
Արագիլն էլի
Ծեր խնճորենու ծաղկի բոցի մէջ
Իր ոտն էր վառում՝
Վերցընում–դնում մի եւնոյն ճիւղին.
Իբրեւ կշտամբանք ուշացած մարդուն՝
Իր իսկ սեպհական նախաճեռնութեամբ լոյս աշխարհ եկած
Մի ինքնագլուխ արեւածաղիկ աչիկն էր թարթում
Հերուայ բոստանից.
Գուլթանի խուփը ժանդից էր նեղւում,
Ինչպէս որ մարդը՝
Իր ղէմքին կպած սարդի ոստայնից.
Բահն աղջկայ պէս ուզում էր փարուել

Ու յեռոյ մարել կարօտած հողի կրքոտ հպումից.
Սամին ուզում էր անկրակ այրուել՝
Եզան մկանուտ վզի չփումից.
Լծացու բարդին դոհ չէր երեւում սուր կացիններից:
Դեղձենիներից մարջան էր կաթում,
Շեփորուկներից՝
Երկնքի կաթիլ,
Եւ ձիւնի փաթիլ՝
Ակացիներից...

Գարուն է, գարո՛ւն:

Անցած աշնանը հարսնացածների
Մայրութիւնը սուրբ
Զարթնում է յանկարծ
Ծընուելիք մանկան
Թոյլ քացիներից...
Շողերն են ընկել օրօրոցի մէջ խաղացող մանկան:
Հինգշահեան ձեռքի պարզուած մատերին,
Ինչպէս մոմերին՝ բոցը բարակող:
Առուոյտից թափուր հսկայ մարագով
Պաղ ստուերների վախկոտ ամբոխն է
Դէս ու դէն անում,
Լուռ հրմշտոցով
Իրար ոտ կոխում, ջարդում իրար կող —
Ուզում են դուրս պալ,
Բայց սիրտ չեն անում:
Անուն են ուզում ծաղկունքն անանուն,
Ծաղկունքն անուանի ուզում են նորից
Բնաքանքով իրենց անունը լսել
Կոյս աղջիկների շրթերից լուսէ...
Գարուն է, գարո՛ւն:

Անփորձ ու անպէտ մի ճուտ յիմարիկ
Փակ բողբոջների ստուերին ընկած՝
Երեւի սիսեռ կամ ոսպ կարծելով՝

Կացահարում է հա՛ կացահարում...
Կխոով չոր ու թաց խաղալ բակերում.
Կալատակերում,
Ուր ծիլ են տուել
Աչնան կալսումից հողում մնացած հատիկները արդէն,
Աքաղաղն այնպէս պոռոզ է քայլում
Անկիրք հաւերի անփակ հարեմում՝
Աչքը չուռ տալով մէկ դէս ու մէկ դէն,
Աահս երէկուայ ամպերը այսօր դարձել է սպայ...
Սարալանջերին, հարսների նման,
Կրքոտ պուտերը բռնել են նազպար՝
Հարսների նման մոռացած մի պահ,
Որ աչխարհում կայ բիրտ առեւանգիչ...
Մի տարի առաջ թուրք թնդանօթի երկաթէ ճանկից
Վիրաւոր վանքին
Սրբատաչ քարի
Պաղ վիրակապ է վերատին ճարում
Ջեռքը ճարատարի...
Նորի՛ց հաճարին —
Սեպհական խէժով —
Թուրքի զնդակից տեղ-տեղ պատռուած
Կեղեւն է կարում...

Գարո՛ւն է, գարո՛ւն,
Բայց մարդասպանին դա չի խանգարում:
Դա չի խանգարում,
Որ արեամբ յորդի հայկական առուն,
Որ դիակներից քարափն անյատակ
Իր պռունկներով դայ հաւասարուի...

Ա՛խ, եթէ անդամ քարէ սիրտ ճարուի՝
Մարդկային սրտում բա կրա՞կ կ՝արուի...

Որտե՞ղ էք տեսել, որ թել-ասեղով
Կարբուած երակ վերատին կարուի...

Այս արհաւիրքից, դուլումից այս չար
Դէհ ևկ, տնաւե՛ր, մի՛ խելագարուի...

ՂՕՂԱՆՋ ԶԱՐՄԱՆՔԻ

Բայց նա այս անգամ չխելագարուեց։

Ո՛չ, նրա միտքը դեռ չխանգարուեց,
Դեռ չցնորուեց եւ այն ժամանակ,
Երբ նա Բեռլինից հայրենիք հասաւ
Եւ, իբրեւ կեանքի նոր ծագրուծանակ,
Ապշած աչքերով այստեղ էլ տեսաւ,
Որ մոլորուած էր պլխիկոր հայը։

Այստեղ էր արդէն ցար Նիկոլա՛յը...

Վաթսունամեակ թուի ձեւափոխութեամբ
Լոկ թղթի վրայ ընդուած չարիքը
Եւ չնուազած նոյն հին կարիքը՝
Ենթակայ պարապ տեղափոխութեան,
Զուկ դարձած՝ լողում —
Չէին խեղդըւում
Ճորտատիրութեան անփոփոխ ծովում.
Ու ծառանում էր յեղափոխութեան
Մակընթացային կանուչ ալիքը։

Եւ Նիկոլայի աչքը ոխակալ
Ամէնուր ու միշտ
Եւ ամէնքի մէջ,
Անգամ երազո՛ւմ

Տեսնում էր անվերջ
Միայն տեռորի՛ստ,
Յեղափոխակա՛ն,
Միայն դաւադի՛ր,
Միայն սոցիալի՛ստ, —
Թուում էր նրան կայսրութիւնն իր ողջ
Մի անծայրածիր ստեպ օճալիկ...

Եւ կայսերական բանտին ու բերդին
Ինքնաւոր հայեր զոհուելու տարան,
Դէմքին դաղելով մի ահեղ խարան՝
«Յեղափոխական» եւ կամ «դաւադիր».
Քա՛րչ տուին տարան,
Որ այնտեղ մորթեն
Իբրեւ մատղաշու գառներ ու հորթեր՝
Ի սէր Յիսուսի արդար հաւատի.
Գառնուկները անմեղ —
Լոկ նրա՛ համար,
Որ մխան էր յարմար՝
Որ մխան էր համեղ,
Ու եթէ նաեւ հորթեր բազմամեղ —
Լոկ ա՛յն յանցանքով,
Լոկ նրա՛ համար,
Որ սին յոյսերի քաղուած բոստանում
Հորթուկի նման... տրտինդ են տուել...

Այսպէս է.
որտեղ չատ են խոստանում,
Միշտ էլ այնքան են յետոյ խոստանում,
Որ ձե՛ռք են կըտրում,
Ո՛չ միայն թեւեր:

Եւ կամօք ցարի
Նրա ոխակալ
Համայն Կովկասի պատիժ փոխարքան՝

Յաւէտ անմոռաց մեր Գոլիցինը,
Երկուղլխանի արծիւը կրծքին
Այդ մոլի ցինը,
Փակում է հայոց դպրոցներն ամէն.
— Ովսաննա՛... ամէ՛ն:
Եւ խաչապաշտի անկշտում ձի՛ն էլ
Թուրքավարի է կամենում ծամել՝
Ամա է որոնում... ջրուած մարգերում,
— Ովսաննա՛... ամէ՛ն:
Հայոց դարաւոր դիերն են արդելում,
Բռնապրաւում վանքի հողերը,
Գանձերը չեզած,
Եզած վոդերը,
Պեղում մառանը,
Շտեմարանը,
Որ մի անպամ էլ քամածը քամեն:
— Ովսաննա՛... ամէ՛ն...

Փակել դպրո՛ցը, ուսումնարա՛նը...
Հայց ինչպէ՞ս վակես մի ազգի լեզուն,
Մի ժողովրդի խօսուն բերանը:
Լեզուն կարող է սարսափից լալկուել,
Կաթ ընկնել ահից,
Հայց ոչ թէ վակուել:

Արդելել դի՛րը,
Այրել դրքե՛րը...
Հայց ո՞նց արդելես կակծող սրտի,
Մղկտող հոգու ժայթքուն երգերը:

Այսպէս է.
մէշտ էլ,
Երբ համն են հանում,
Ուղիղ հակառակ բան են ասանում:

Եւ արդ՝
չուգելով եւ ակամայից,
Ուխտեալ հայատեաց այդ Գալիցինը
Մինչեւ իսկ արդէն ուսուցած հայից՝
Մոլի հայ սարքից, —
Կրկնուեց հինը.
Ուր հայերէնը վաղուց էր մնջում՝
Հնչում էր հիմա,
Նոյնիսկ մռնչում:
Ով հայ զրքի դէմ աչքերն էր փակում՝
Աւե՛տ սովորում էր հայ զիրը
Թաքուն:
Ով ոսմանսով էր թրջում իր բուկը,
Բերան ողողում օտարի երդով՝
Հիմա զրպուչ մի հպարտութեամբ
Սեղան էր դյում հա՛յ երգի ձեռքով,
Հա՛յ երգով վարում իր պինարբուքը,
Հա՛յ նուագի տակ ուրախ պար գալիս,
Հա՛յ խաղով-տաղով երգում ու լալիս::

Հայ երգն էր յուզում,
Հայ խօսքն էր հոսում —
Հակառակութեա՛ն ոգին էր խօսում,
Հակառակութեան այն գարմանալի՛,
Անիմանալի՛,
Աբառառո՛ց ոգին,
Ու պարզեւուած է թէ ամէն ոքի,
Ապա հայ հոգում այնքան է առատ,
Կարծես բախչելիս բնաւ չեն նայել,
Իսկ թէ նայել են՝
Բա՛ն չեն խնայել —
Փռել են այնպէ՛ս չոայլ ու առատ,
Որ չես հասկանում՝
Ապշային արա՞տ,
Թէ՞ արժանիք է...

Այն է, թերեւս,
Որ մեզ ջնջել է,
Բայց եւ պահպանել,
Որ մեզ սպանել,
Ծնել է նաեւ, —
Այն է, թերեւս,
Որով աշխարհում
Մենք ապրում ենք դեռ
Ու կռչում հայեր...

Ինչպէս մարդկանց մէջ՝
անցողիկ կեանքում,
Այդպէս պատմութեան ծանր երկայնքում
Երեւի նաեւ լինում են ցեղեր,
Երեւի նաեւ ապրեր են եղել,
Որոնց վերիմաբի մարմինը թէպէտ
Գինու տակի չափ արիւն էր տանում,
Բայց դա արիւն էր,
Որ... չի լերպանում.
Մի քերծուա՛ծք,
Մի վէ՛րք —
եւ բանը բուրդ է.
Գողքը պատռուած գինու տակի պէս
Բամբում է խակոյն,
եւ անհետանում,
Ձգում է ապրը կամ ժողովուրդը...

Յամ մեր արի՛նը...
Նա ջրի՛, ցեխի՛
Եւ մինչեւ անդամ պարչահոտ նեխի՛ —
Այդ՛ն լինչի մէջ խակոյն լերպանում,
Փակում էր վէրքի բացուած բերանը:
Եւ այդ մակարդը,
Նոյն այդ մերանը

Որդուն է անցել հօրից ու մօրից, —
Եւ արիւնաքամ,
Կիսամեռ անդամ,
Մենք քանի՛, քանի՛, մենք քանի՛ անդամ
Հոգեվարքի պէս վերկուել ենք նորից...

Ա՛խ, իմ ժողովո՛ւրդ,
Իմ արիւնաոո՛ւ,
Քո սրտից կրկին —
Ո՛րբերորդ անդամ —
Արիւն էր կաթում
Ու քեզ դունաոում:

Ա՛խ, իմ ժողովո՛ւրդ,
Ես դեռ չկայի,
Որ քեզ հետ ես էլ քեզ պէս տոկայի:
Բայց կարիճ որդիք մի՞թէ քիչ կային,
Որ հոգի՛ տակից դէնք էին պեղում
Եւ քո արեան դէմ սեւ արիւն հեղում:

Սասո՛ւնը...
արդէն ո՛րերորդ անգամ
Վերսաին ծնեց իր Դաւիթ մանկանն.
Ահեղ Ջարդերի ճարակող բոցում
Ամէն սասունցի դարձաւ Սասնայ ծուռ,
Սասնայ Տուն դարձաւ ամէն ընտանիք,
Սասնայ դիւցազուն՝
Թէ՛ մեծ, թէ՛ պուճուր,
Որ — բաւակա՛ն է —
Քառասունծամ կոյսեր,
Հարսներ արմատան
Օսմանցու համար էլ երկանք չաղան...
Որ — բաւակա՛ն է...

Ամանուէլ Խաթունի դովքի փոխարէն —
Հնչեց սարերում, ճամբէքում ոլոր

Սասնայ զմբզմբան ջրերի նման
Ալ ու ձախ յորդած
Երգը քաջորդաց՝
Մարտաչունչ Լօ–լօ–ի՝
«Վայ, գուլում, վայ»–ը մի պահ խեղդելով...

Իր վարդապետի մթին վեղարով
Թէ ուզէր՝
Գուցէ եւ նա էր կարող
Հարկադիր մարտին մէջամուխ լինել՝
Գօտեպնդումի խօսքերով զինել
Յուսահատուածին,
Քաջին մաքառող՝
Որպէս նորօրեայ մի Ղեւոնդ երէց։
Սակայն պայքարի զոհասեղանին
Նա բոլորովին ուրի՛շ պէնք դրեց։
Իր ժողովրդի
Երգահան որդին
Իր երգը բերեց
Քաջորդաց մարտին՝
Իր Լօ՛–լօ՛–ի —
Մի ջո՛կ,
Մի դասա՛կ,
Մի զո՛ւնդ, —
Եւ կռուողների հոգին հանեց թռունդ,
Մէկին առաս արեց
Եւ հարիւր՝ առանին,
Նա՝
Խրոխտ Լօ–լօ–ի յուռ Կոմիտասի։

Սիփանայ սարը դուռ արձագանգեց՝
Ոռպուտ Նեմրութիկ չափը խլելով.
— Սիփանա՛յ... լօ՛–լօ՛...

«Սուրբ Կարապետի» զանգը զիլ զանգեց —
Ամէն մի զանգը՝ մի՛–մի՛ ... եօ՛թ հոլով.
— Կտրիճնե՛ր, լո՛–լո՛ ...

Վարագայ սարը, Շամիրամ–առուն
Նոյն բայերն էին անվերջ խոնարհում.
— Սուրբը յագեցաւ ...

Նեվկուած Եփրատը ափերին տալով,
Վանայ ծովակը տրտում խնդալով՝
Իրար ձայն տուին.
— ... Դրեցին պատեան ...

Ո՛չ, չյապեցան սրերն, իհարկէ,
Սակայն խակապէս զրուեցին պատեան, —
Ու երազելով մի ահեղ առեան՝
Հայ մաքառումը,
Կռո՛ր առ կռո՛ր,
Իւրաքանչիւրը՝ մի կարմի՛ր հատոր,
Այս անգամ նորից չաւարտուեց —
Հառուե՛ց
Բացականչութեան ու կախման կէտով ...

Հայի արիւնը նորից լերդացաւ,
Ու վէրքը դարձաւ ապաքինելի:
Կակիծ ու մրմուռ,
Ձմրուղ արտացաւ
Խօսուն աչքերի ապակիններին
Գրեցին, թէ երբ ի չիք կը դառնան:

Ջմեռը կրկին դարուն է դառնում,
Ամառն է նորից հեռեւում գարնան,
Ամառուայ տեղը դարուն է բռնում,
Եւ — նախ՝ վախւորած,
Շուար ու մոլոր,

Ապա՝ աննկատ եւ ակամայից
Ժպիտն է խաղում չուրթերիճ հայի.
Թեւերն է ծալում ուժասպառ լո–լո–ն,
Կոկորդն է ցամքում վայ–ամաճ–վայ–ի,—
Նորից է հնչում ուրախ նայ–նայ–ը:

Իսկ որտեղ երգը՝
Այնտեղ էլ նա է...

ՄԻՋՕՐԷԻ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ՈՒԽՏԱՏԵՂՈՒ

Ձմեռն էլի ղբաղւում է ներկարարի իր վեչակով,
Նա օրն ի բուն աչխատում է,
Իսկ գիւղացին՝ հանգստանում,
Երբ աղունը տուն է գալիս
Ծանրը սայլով կամ իշուկով,
Երբ ղրւում է թթու–թուրչին,
Նորոգւում է ճօճկան քուրսին,
Ու չորացած ցան–վիթիրը
Ամբոցի տեսք է ստանում:

Ամբողջ ամառ
Ջրի համար
Հոգի տուող հողը հիմա
Ծծողական թղթի նման
Կլանում է եղեամ ու թոն
Ու մէկ քրանում.— մէկ մրսում է:
Փխրուն գետինն աչնան ցրտի պա՛րզ ղաղանիքով
Նորից իրեն, մումիայի պէս, զմրսում է:

Ընկուզենին ու խնձորին,
Իրենց խաչամն են ծալծլում հանդ ու ճորին՝
Նորահարսի փոթ–փոթ չորի
Ալիքաւոր ղարսի նման:
Լոկ փաչան է կարմրատակած կախուել ճութ–ճութ
Մեղուի գնդուած պարսի նման:

Վերի-վերի, պարապ-սարապ ջահելի պէս
Չի կարենում քամին մի տեղ տիտիկ անել։
Դէս է վազում, դէն է թռնում,
Մէկ ուզում է ծերպի խորքը մտիկ անել,
Մէկ ծառի հետ կոխ է բռնում,
Ֆիթը խոթում՝ ուր պատահի —
Սափորի մէջ,
Հարս ու կանանց խորհրդաւոր փէչերի տակ։

Լեռնաչխարհում աղբիւր-վտակ
Իրենց անդիկ մարմնի վրայ
Նորից հաղնում են ապակի,
Մինչ տներում՝ ներսի տաքից՝
Ապակիներն ուրախութեամբ
Լաց են լինում աննպատակ։

Ղաւուրման է թոնրի վրայ
Ալ ներծծում ու ճարպ հալում։
Ամէն կողմից կանչում խաչի,
Հարխաս են անվերջ հարում։

Այստեղ՝ ծնունդ,
Այնտեղ՝ կնունք,
Աչքալոյսի ժպտուն օրի։
Ամէն մատուռ՝ հաւաքավայր,
Եւ ամէն վանք՝ ուխտատեղի։

Ու վանք տանող ամէն ճամբայ ու սայլուղի
Նախշըւում են տեսակ-տեսակ ոտնահետքով՝
Տրեխաւոր, մաշիկաւոր, բոբիկ ոտքով, —
Վանք են գնում
Հեռու-մօտիկ ամէն գիւղից։

Տան առաջնեկ զառը՝ կապուտաճ էչի վզից,
Առաջ նետւում, կախ է ընկնում, չուրջը նայում,

Ու տանջւում է այն հարկադիր ու կեղծ հաղից,
Որ անկասկած պիտի հնչէր իբրեւ մայուն...

Այնինչ ջրու մէջքին կապուած
Ջնպղնպացող սեւ կաթսայից՝
Ինչպէս ասպետն իր զրահից՝
Մի զառ խորոզ,
Գոռո՛զ-գոռո՛զ,
Իր կատարն է մէկ դուրս հանում,
Մէկ՝ ներս տանում
Եւ թափ տալով իր թեւերը հրանման՝
Զհրկիզող կայծերի խուրձ
Ու բոցեր է ցրում իր չուրջ:

Եւ սայլերն են առաջ սողում՝
Լծից պոչուկ բեռնաւորուած
Աղմկարար ճիժ ու պիժով,
Աման-չաման-կուլա-կժով,
Աչքերն ածուխ աղջիկների անծուխ բոցով,
Նորածնի օրօրոցով:
Ու զալարուկ ճիպոտն ահա
Իր ազդեցիկ սուլ սուլոցով
Մինչեւ եզան մէջքը զաղի՝
Նախ երկնքի կապոյտ երեսն է կտրատում —
Երկրից ճայթած կայծակի պէս:

Ոմանք՝ ուրախ, ոմանք՝ տրտում,
Սա՝ ախտադէմ, — որը ճապի պէս,
Նա՝ ժպտերես ու բախտաւոր,
Սա՝ կարմրաթուշ,
Նա՝ ախտաւոր,
Եւ բոլորը՝ ուխտը սրտում —
Թլ՛փ հա թլը՛փ,
Զլ՛նդ հա զրի՛նգ,
Ճլ՛ռ հա ճռի՛նչ —

Հասնում են վանք՝
ուխտատեղի։

Եւ մոմերի ու կանթեղի
Բուրումնալից բոցն է ճթթում,
Ծաղկի նման փունջ-փունջ փթթում,
Ծաղկի նման վառ ու դեղին։
«Տէ՛ր» — են կանչում մի-մի բերան,
Մի-մի ծունը աղօթք անում,
Մատղաշուի ոտ ու վզից
Արձակում են կապ ու պարան —
Ու դաւիթի սալարկը պաղ
Ջահի արեամբ է տաքանում։

Եւ հնչում է դհոլ-դուռնան,
Որ վանքերը հնամենի,
Մատուռները մէկէն դառնան
Մրախճանքի արբշիռ ու ցոփ հրապարակ։

ՂՕՂԱՆՋ ԽԱՂԿԱՊԻ

Ան տեղներից վեր են թռչում
Թիկունքը լայն — մէջքը բարակ
Բոյը թիլ-թիլ,
Բեղը ծիլ-ծիլ
Ջահել տղերք,
Տղամարդիկ մացառամօրուք,
Կուրծքը՝ փուչոտ,
Դէմքերն՝ այրուած,
Աչքերն՝ այրող,
Հպարտ-կապած՝
Որը քաթան կամ չալ չապիկ,
Որը չուխա կամ արխալուղ,
Բրդէ գօտիկ, արծաթ քամար,
Իսկ գոլաւոր եւ կամ պուտ-պուտ գուլպաներին՝
Խոռոմ սապոգ, մաղէ քոշեր,
Սեւ կարիճի պոչի նման կեռքիթ տըրեխ,
Վեր են ցատկում,
Գալիս շարուում իրար կողքի,
Եւ թուխ-թանաք ու պատ-կարիճ տղամարդիկ
Պարբսպւում են ու բրդանում:

Սկսւում է բոլորպարը.
Ծանր քայլքով,
Անեղանակ-աներդ-անծափ,

Բայց համաչափ,
Երկու շրջան բոլորում են, պտույտ տալիս
Ինչ–որ զգուշ ու կարկամած,
Յեռոյ քայլքը արագացնում կամաց–կամաց:

Պարապելուխ ձայնեղ տղան խաղ է կապում.
— Փէշդ եմ ընկել, Աստուածածի՛ն...
Խումբը բռնում վերջին բառից ու ձգում է.
— Աստուածածի՛ն...

Իսկ հոլեղէն Աստուածածնի անմատչելի կախարդանքով
Աղջիկները ծուլ–ծուլ տալիս,
Մօտ են գալիս,
Բայց չեն մոնում պարաշրջան:

Իր խաղկապն է խաղատացը առաջ տանում.
— Ա՛խ, չանեջա՛ն,
Բարով հասնեմ իմ սիրածին...
Խումբը բռնում վերջին բառից ու ձգում է.
— Իմ սիրածի՛ն...

Լայնանում է պարաշրջանն ամէն րոպէ,
Դհոլն անվերջ չարունակում է տրոփել,
Հանգոյցները է տալիս զուռնան, —
Եղանակն է կատարակւում,
Եւ դհոլը՝ սպառնալով՝
Այնուհանդերձ չի տրաքւում:
Յեռոյ նուագն արագ–արագ,
Փչուր–փչուր կուտակւում է,
Զիգ է տալիս,
Վրայ գալիս,
Ու թէ մէկ էր՝ չորատակւում է:
— Ա՛խ, թէ չառնեմ,
Ես կը մեռնեմ...
Եւ կոպալի թակութակից

Մինչեւ անգամ փուճ դհոլի
Անմաղ դէմքն է փշաքաղւում,
Իսկ դուռնայի ծակուտակից
Արցունքները են կարծես շաղւում:

Պարեկների ոլկոյգ–ոլկոյգ մաղերի մէջ
Մոլորւում է մեղուի նման լղրլացող աչնան քամին
Կամ պլլըւում նայողների վիզ ու լանջին՝ չհայթելով:
— Ֆամիլն զանայ,
Ծոցըդ բանայ...

Հարս ու աղջիկ, ջահել կանայք
Դեռ չեմուչում, նաղ են անում
Ու չեն մոնում պարաչըջան.
— Ե՛կ, ջանեջա՛ն...
Յետոյ արդէն չեն դիմանում
Ոսկորների ու յօդերի տանջող ցաւին,
Ու հնչում է մի ձեւացող,
Թէ ամաչկոտ թռւլ–թռւլ ծիծաղ:
Իսկ երբ տեղից մէկը պոկւում
Ու թռչում է պարաչըջան.
— Ա՛յ ջանեջան...
Մխանեըն էլ՝
լորերի պէս քլթիկ–մլթիկ՝
Հետեւում են ողջ երամով:

Եւ արեւի համ ունեցող,
Զորեքդիմաց ծամ ունեցող,
Մէջքակոտոր, ծնկածալիկ,
Ծոցւոր,
Բոցւոր,
Անկախալիկ,
Յուռնջիկ–մուռնջիկ
Հարս ու աղջիկ՝
Սիրոյ հրչէջ — սիրոյ հրճիպ.
Տասի համար անդութ դահիճ,

Մէկի համար խոնարհ ծառայ,
Ճակատներին բոլոր «չահի»
Ու մէջքներին ոսկէ քամար,
Արեւակից չատ աւելի
Կարմրատակած իրենց չողքից, —
Շատ են պալիս ծլընգոցով,
Յետոյ չարուում իրար կողքի՝
Ինչպէս անտես թելի վրայ
Հապարներանք հուլունքի ծոր:

Պարաչրջանն է լայնանում,
Եւ փոխէփոխ՝
Հանդոյց–հանդոյց, օղակ–օղակ,
Երգ են կապում աղջիկ–տղայ:

— Ի՛նչ ես կտոր–կտոր պալիս,
Ականջ արա, բան եմ ասում,
Պարապլխի ձայնն է հասում:
Խումբը խլում ու ճգում է.
— Ա՛յ եարէ ջան:
— Երբ խօսելու տեղն է պալիս,
Ծօսկան տղի թուխթակ լեզուն... —
Մի աղջիկ է չուտ սկսում:
Օգնութիւն է խումբը տալիս.
— Ա՛խ, Մարէ ջան...
— ... Ծօսկան տղի թուխթակ լեզուն
Սէրից էրուած՝ խաղ է ասում, —
Տղան նրա խօսքն է կիսում:
— ... Չէ՛, բերնի մէջ լեզուն ասես
Կտրուում է բանալու պէս, —
Ծամկտրածն է տղին կիզում:

Խումբը.
— Հա՛–հա՛, հէ՛–հէ, հա՛–հա՛, —

Քրքջում է
Ու թռչում է:
Իսկ ջահելը թէպէտ թալուում,
Բայց եւ ուշքը գլխին ժողվում
Եւ որպէսզի կոտր չընկնի՝
Երբ նորից է հեռքը գալիս,
Պատասխան է մի կերպ տալիս.

— Էրուած սրտով եկել եմ ուխտ,
Որ պակ սրտիդ անեմ մէկ թուղթ...
—Սեղան պահեմ մէկ-մէկ ու ջուխտ,
Որ չբռնի ինձ վիր ու թուղթ...

— Օրօր-չօրօր ով քեզ տեսաւ՝
Հայց ու ջրից կը կտրուի...

— Հեռի՛ք փչես, ա՛յ չան փեսայ,
Դալար չի՛ւ եմ՝ չէ՛մ կոտրուի...

— ... Հայց ու ջրից կը կտրուի,
Կը պայ ձեր տուն՝ պառնայ մշակ...

— ... Դալար չի՛ւ եմ՝ չէ՛մ կոտըրուի,
Աուտ խօսելն ես չինել փեշակ...

Ամբոխը նորից է խառնըւում
Իր գոչերով
Ու կոչերով.
—Դէ, թը՛ռ-թըռի՛,
Հո՛պտա-տըմբա՛:
Եւ գոռչին ու գոռնաչին
Նուաղում են գիլ Թռնցի-ն:

Եղանակը ծալծլուում է,
Պարսուում իրար՝ ալիքի պէս,

Եւ փրփուրը կայտառութեան
Պղպըջում է ջահելների ժժուած սրտում։
Նոյնիսկ պարին չմասնակցող
Նախանձ կանանց բերանի մէջ
Սեւ ծամօնը՝
օգտուելով
Հիացմունքի աղղու պահից,
Հանպատահում, չունչ է քաշում՝
Աւամների հետքով կնքուած իրաւունքով։

Սրա վրի «նապոլէոն»–ի,
Նրա մէջքի արծաթ գօտու
Շողքն է ընկնում վանքի պատին
Կամ դհոլչու նեղ ճակատին,
Յետոյ չքւում չաղ դուռնաչու հռուած աչքում։

Կրակ կտրած կաղ դհոլչին
Հսկայական իր կոպալով
Եղանակը ետ է կծկում,
Ու դուռնաչու թչերն ուռած
Փուքսի նման իջնում են ցած,
Եւ աչքերը, որ խմիչքից ու դող տալուց
Լայնացել են ու կարմրել,
Գուբեան քաշող եզան հսկայ աչքերի պէս՝
Հիմա նորից սառնում են մարդկային տեսք...

Իսկ վաւրի պարսպից դուրս՝
Դարձեա՛լ նուագ, պարեր ու տաղ,
Մանրիկ ժպիտ, վնդուն ծիծաղ,
Շիւ ուռած սէր,
Մլած յոյսեր,
Երազների,
Մուրազների
Լուռ թեւածում,
Կարօտներից ծանրած հոգու
Թեթեւացում։

Այսաեղ՝
հորթուկ դոյզ պատանի
կոխ են բռնել՝
աւազների հրահրոցով.

Այնաեղ՝
թաքուն՝
մի մատանի
Սիրած տղի ձեռքով դողդոջ
Ձափսի գալիս սիրած եարի մատի վրայ
Ու վառում է մատն իր բոցով:

Այսաեղ՝
ծերեր,
որ մանկացած,
վէգ են խաղում կամ նեբկած ձու.

Այնաեղ՝
ջադու պառաւների
Աչկոսէ ու մերկացում:

Նոր ժամանած ուխտաւորները
Վանքի նեբսում, վանքի առաջ,
Դեռ չդոհուած հորթի տրտինդ,
Ու երինջի վերջին բառաչ.
Դեռ չմորթուած ագլորների
Անժամանակ դիլ ծուղրուծու:

Իսկ այս կողմում՝
լարախաղաց
Ու վարվդող մի ծաղրածու,
Եւ մի քամի, որ չվխտաս՝
Ծաղրածուին կապկո՞ւմ է, թէ՞ տնազ անում,
Գլուխկոնծի-պլուխկոնծի՝
Գժուկի պէս թաւալւում է, փոչի հանում,

Յեռոյ յանկարծ, թափ է տալիս կեղտ ու փոշին
Կիրակնօրեայ հագուստներին տղամարդկանց
Կամ ձեռքերն է չուտ մաքրելու սուտ փորձ անում՝
Ջահել կանանց աղղըրերին քամահելով...

Վանքի չուքն է մէկ երկարում, մէկ կարճանում,
Աչես կրիայ մի վիթխարի՝
Մէկ չոքելով, մէկ մրսելով՝
Իր գլուխն է սեւ գրահից
Դանդաղ հանում
Ու ներս տանում:
Իսկ լեռները՝
Նոյնպէս իրենց ստուերներով,
Որ ձգւում են հետզհետէ,
Աստւիսկ թունդ սիրահար կանանց նման
Մօտենում են, ասես կանդնում են թաթերին,
Նայում պիշ-պիշ...

Եւ մինչ խաւրոյկ-օջախների
Անբոց չեղջերն են մարմըրում,
Մատղաշուի նման դոհուած
Արեւակի արեամբ բոսոր
Երկնի ամպերն են կարմրում:
Մութն այլեւս չի ընկրկում բամբ ձայներից,
Որ մնջում են՝ չուզենալով,
Կամաց-կամաց:
Եւ լռութիւն մի վիթխարի,
Նախ դողդոջ ու կարկամած,
Յեռոյ քիչ-քիչ սիրտ առնելով՝
Մօտենում է, ծանր թառում
Շշմած վանքին ու ձանձրացած սար ու քարին:

Եւ ո՛չ մէկը,
Բացի դուցէ մի անմարմին — ներողամիտ հրեշտակից,
Եւ ո՛չ մէկը չի նկատում,

Որ կարճմօրուս մի վարդապետ վեղարակիր՝
Բերանքսիվար պառկած կտրին դիմացի տան,
Ողջ ժամանակ աչքը՝ նրանց
Եւ ականջը՝ եղանակին,
Անապ սրտում հիացմունքի ծփան մի ծով,
Սեղմ չրթերին երանելի–չպուտած ժպիտ,
Նրանց երգ ու նուագին է ականջ դնում
Յափշտակուած–լինքնամոռաց,
Եւ մատիտը ու թուղթն առած՝
Նկարո՞ւմ է,
Թէ՞ պրում է
Ինչ–որ նախչեր ծուռտիկ ու ծուռ՝
Նման կարծես այն դրերին,
Որ դրբացն է թուղթ անելիս միչտ գծմծում:

Ո՞ր դիւղացու,
Ո՞ր միամիտ, աստուածծալախ
Շինականի մտքով կ՝անցնէր,
Թէ յարդեւոր
Ու կարդաւոր
Մի վարդապետ բնդ–մօրուքով
Վանք է եկել՝ վանք չի մտել, —
Վանք է եկել ո՛չ թէ ուխտի,
Ո՛չ քարոզի կամ օրհնութեան,
Այլ հեթանոս ու կռապաշտ
Դատարկ–մատարկ խաղ լսելու,
Որ կապում են աղջիկ–տղայ,
Ձակոտ–լուկուտ:
— Մեղա՛յ ֆեզ, տէ՛ր...

ՂՕՂԱՆՋ ՁՄԵՌՆԱՄՈՒՏԻ

Ձիւնն անվերջ խորանում ու խորանում է.
Արագածն ու Մասիսներն են վայրուց ճնել,
Մինչ տանիքին արքայն արդէն չորանո՞ւմ է,
Թէ՞ թռչնում չալոա-ցօղոա առաւօտից
Եւ իրիկուայ եղեամաչունչ խոնաւ օդից,
Նոյն այդ պահին նկուղներում ու մառանում
Կախաններըը սրսըփալով
Սեղմըւում են, կպչում իրար՝
Իրենց ճխտուն՝ առանց այն էլ նեղ չարանում։
Տաքուկ հողը դառնում է պաղ,
Բարակում են դառնում ճապաղ
Ծիծղուն աղբիւր, ցաւկան վտակ։

Օրըստօրէ՝ պատերի տակ
Էլ ո՛չ նարդի չբխկացընել,
Էլ ո՛չ խաղալ վէպ ու դամա, —
Արդէն կարդին ցուրտ է հիմա։

Եւ նեբկարար աչնան հետքով
Ինքը ձմեռն է մօտենում։
Ինքնավստահ, ծանրաքարոյ՝
Վարագուրուած երկինքներից
Դանդաղօրէն իջնում է ցած,
Անցնում դալիս սար ու քարով,
Նստում ծանրը ու պնդանում
Եւ անշտապ մի լրջութեամբ

Զբաղւում է սա էլ...արդէն նկարչութեամբ,
Նկարչութեամբ, որ մէկ գոյն է լոկ ընդունում...

Երդիկները ձմեռնաչունէ լուսաբացին
Թոնիրների դառը ծուխն են երկինք վինչում՝
Իսկապէս որ կարծես չնչում
Ամբ քուն մտած Սեւ Դեւի պէս:

Երբ ձմեռուայ անծայրածիր սպիտակին
Մարդիկ իրենց մժեղային սէն են խառնում՝
Տաք տներից ելնում են դուրս եւ խեւի պէս
Ո՛ւր են գնում—ո՛ւր են դալիս՝ չես ըմբռնում, —
Տղամարդկանց թաւ բեղերին,
Որ սարեակի սեւ թեւի պէս
Մեկնըւում են տարբեր կողմեր,
Իրենց տաքուկ չունչն է խսկոյն եղեամ դառնում:

Իսկ աղքատի դատարկ դոմում
Մսրան պատի քարերն ամբողջ
Այնպէս առատ են եղեամում,
Որ աղասէր ու դեռ անփորձ
Ցուլ ու երինջ՝
Եղեամը ջինջ
Մոլորութեամբ կարծելով աղ՝
Լիզմզում են եւ ի՛նչ — աւա՛ղ,
Լեղուն քաչել են չտապում՝
Ծանօթացած այն ծանրակիր պատմին,
Որ այդպէս էլ չեն իմանայ,
Թէ կոչւում է հիասթափում...

Տարուայ այս ուշ եղանակին —
Երբ դեռ վաղուց՝
Աչնան տաքին
Հարկաւորը ապել,
մաղել,
Աւելցուկը հորում թաղել,
Սարքաւորել,

Կարղաւորել,
Կժի ճաքին,
Շորի ծակին
Կիր են դրել ու կարկատան, —
Տարուայ այս ուշ եղանակին,
Կարին թառած ծուռվիզ էգի
Միայն տեսքից մարդ է մրսում,
Մինչդեռ այդ նոյն էգի ներսում,
Ձիւն–սառցի տակ
Այնքա՛ն է տաք,
Ինչպէս մարմինն անթեւ ճուտի.
Կարծես վաղուց՝ ամրան մուտին,
Դրսում դերել,
Այսաեղ բերել,
Ու պահում են ձմրան համար
Մի պատառիկ ջերմին ամառ
Եւ մի բաժին անուշ դարուն՝
Ծխածանի դոյներ պահած իր խոտերով,
Իր զմռսուած ծաղիկների ծով հոտերով...

Տարուայ այս ուշ եղանակին,
Երբ կոչտապատ ձեռք ու բաղուկ
Հանդըստանում փոքրիշատէ
Ու դառնում են մի քիչ նազուկ.
Տարուայ այս ուշ եղանակին,
Երբ բահը թանկ, եղանն անգին,
Լուծը երկար, սամին թզուկ՝
Մի անկիւնում, իրար դլխի, պարապ–սարապ՝
Վերեւից են նայում հիմա խեղճ թիակին,
Որով անվերջ պէտք է բակի
Ու կտուրի ձիւնը սրբել, —
Տարուայ այս ուշ եղանակին
Էլ դիւղացուն ի՞նչ է մնում,
Թէ ոչ երգե՛լ, պարե՛լ, հարբե՛լ.
Ժամանակն է սուրբ պահկի,
Մէկ–տասնըմէկ հարսանիքի...

ՂՕՂԱՆՋ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Ձրդար լոյսը դեռ նոր բացուած՝
Թաղուրահօր տան տանիքին
Ջուռնան ղլում է «սահարի» —
Եւ հեռաւոր ու թաղական,
Ազդ–ազգական,
Գիւղ–դեզովի
Հաւաքւում են կամաց–կամաց
Ուրախութեան մի ժողովի,
Որին Թող որ Աստծու կամքով
Արժանանայ ամէն օջախ:

Ու զուռնայի փողն է դառնում
Թէ՛ աչ ու ձախ,
Թէ՛ վար ու վեր:
Մարդիկ օղուն գինին խառնում
Ու մոռացած դարդ ու ցաւեր՝
Ցանձնւում են ուրախութեան:
Ե՛ւս մի թաս չափից աւել,
Ե՛ւս մի դաւ թունդից լմպում —
Եւ սիրտն ի սէր անկախութեան
Գլխի դէմ է ապստամբում:
Իբրեւ ազդու քաջալերանք
Գոռ գոռն է անվերջ դմբում,
Ու կորչում է ամէն վարանք.
Պար են մտնում արդէն նրանք —

Մինչեւ մի պատ կամ մի նանի
Մոլութիւնից նրանց հանի.
— Տօ՛, կը սպասե՛ն հարսի հերանք...

Ա՛խ, վարդապե՛տ,
Այսպէս սրանք
Երդ ու տաղով,
Պար ու խաղով
Պիտի հասնեն խնամոնց տուն,
Պիտի այնտեղ ուրախ կոնծեն,
Պիտի ուզեն հարսի խոնչէն.
Պիտի պաչեն պատուներին
Ու յաղուրդ տան ծարաւներին
Վառ օղիով, գինին՝ աւել:
Ա՛խ, վարդապե՛տ, այնտեղ նրանք,
Ըստ ընդունուած սովորոյթի՝
Դեռ կը սարքեն անմեղ դաւեր.
Կը դողանան չաղլիկ հաւեր,
Աքաղաղներ զառ ու դիրուկ,
Կը թռցընեն ճաչի պնակ,
Կը քաչքշեն իրար ականջ, բեղ ու մօրուք՝
Իբրեւ զուարթ ուրախութեան անմեղ հանաք, —
Ու դեռ կ'երգե՛ն, կ'երգե՛ն, կ'երգե՛ն,
Կ'այրեն հոգի, սիրտ կը մրրկեն:

Դու լսո՞ւմ ես,
— Ա՛խ, ադէ՛ ջան...
Հարսին արդէն.
— Վա՛խ, տանո՛ւմ են...
Իր խեղճ մօրից.
— Ա՛խ, հանո՛ւմ են...

Է՛հ, վարդապե՛տ, ո՞վ չգիտէ,
Էլ ո՛ւր մնաց՝ դու չիմանաս,

Որ հարսնահօր տնից պիտի
Դուրս գան սրանք ուրախ–խնդուն,
Ճամբայ ընկնեն դէպի ժամատուն —
Ոմանք՝ արդէն եռեւառաջ «ուխ գծելով»,
Ոմանք՝ կանանց յետեւներին
Պապչոտօրէն աչք գցելով, —
Պիտի դնան դիւղի ժամատուն,
Լսեն փոչոտ, մաշուած խօսքեր գրաբարի՝
Հասկանալով իմաստը լոկ երկու բառի.
— Տէ՞ր ես, որդեա՛կ..., —
Հապա՛ր անգամ տեսած մի ծէս,
Սուրբ է թէպէտ,
Բայց, վարդապետ,
Նոյնքան ծանօ՛թ ու տապակալի՛.
Վառուող մոմեր ու խնկի ծուխ,
Որոնց հոտից յաճախ կարծես
Մարդու քիթ է խտուտ գալիս,
Ուխտ պահանջող–երդում կնքող Աւետարան,
Որ մազաղաթի իր չուրթերն է իրար տալիս,
Բախտաւորին օրհնանք դառնում,
Իսկ դժբախտին՝ ցմահ դարան...

Հարսանեկան բազմութիւնը տաք ալիքով
Հիմա արդէն, տե՛ս, յորդում է դաւթից ժամի՝
Ճանապարհին կանգ առնելով դռների քով
Սեղան հանած մօտ ու հեռու բարեկամի:

Տեղ են հասնում:
Կրակւում են հրացանները՝
Դէպի երկինք,
Որ մի կէս ժամ
Ապաստանել է մուխ ամպերի
Ջեռքից դաժան:
Կրակւում են հրացանները,
Եւ այդ անմեղ–անչարամիտ մահափորձից

Մեծահոգի երկինքն անքէն
Ո՛չ դատի է տալիս նրանց,
Ո՛չ էլ անգամ վրէժ պահում,
Այլ ժպտում է կապո՛յտ–կապո՛յտ
Ու ծիծաղում մեծավարի —
Կրակոցը կարծես նրան
Միայն խտուտ է պատճառել:

Հարսանքատուն մտցընելիս
Թագաւորի ու թագուհու ղլխին՝ վերից
Ցած է տեղում
Ջամիչ–վիշատ,
Նողուլ–նաբաթ,
Ձիր ու չոր թուխ՝
Կարկըտախատան յորդ անձրեւի խչխշոցով,
Եւ սերկեւիլ, տանձ ու խնձոր՝
Ջատկին ներկած ձուերի պէս բազմերանգ:

Դրան չեմքին
Թագաւորի ու թագուհու ոտքերի տակ
Փշրւում է բոլոր ափսէ մի սպիտակ,
Ինչպէս լուսնի երկուորեակը
Խաղաղ լճում նետուած քարից՝
Որ ցաւ ու չոռ,անբախտութիւն հետը տանի:

Դէ, վարդապե՛տ, հիմա նրանք
Բաժակների չրխկոցին
Պիտի խառնեն հարսանեկան
Քեզ սիրելի ու դուրեկան
Փունջ–փունջ երգերը Ծաղկոցի —
Քիչը՝ ծանօթ,
Շատը՝ նոր դիւտ,
Եւ բոլորը՝
Հետաքրքիր:

Եւ իսկապէս. Հարսանքատան
Ծխոտ–մրոտ օճրքի տակ
Անկրկնելի եղանակով
Գովերգւում է թաղաւորի
Մահուղ չուխան,
Գուլպան պուտ–պուտ,
Քիրման գօտին,
Շապիկը չալ,
Զին հրեղէն՝
Ինքն էլ վրէն.
— Աստծու բարին
Մեր թագւորին,
Մեր թագւորին թագն ի գլուխ:

Այլ մի երգով ցանկանում են այժմ նրան,
Որ նորաբաց ամէն այգ ու աղօթարան
— Բացուէր էդ fո արեւուդ պէս:
Ծիածանը, որ կոչում են կանաչ–կարմիր,
Ամէն անգամ հէնց ուզենայ կապել կամաւ.
— Կապէր էդ fո արեւուդ պէս:
Համաստիւռը, գինեբրուկը գինեբուրմունք,
Անթառամը, որ ծաղկած է ամեռ–ամառ.
— Ծաղկեն էդ fո արեւի պէս:

Իսկ բքաչունչ ձմրան քամին
Զարանում է իր մազի մէջ եւ կատաղում,
Ինչ է թէ, տե՛ս, Հարսանքատան
Դուռն են ահա իր դէմ փակել,
Ու րոպէն մէկ սկըսում է դուռը թակել,
Կամ աւլելով ձեան չեղջերը տանիքներից՝
Բաց երդիկից ներս է մաղում,
Բուռ–բուռ չաղում՝
Կարծես դիտմամբ ուտելիքն է անվերջ ապում,
Որ ամէն ինչ... չուտուելու չափ աղի լինի:

Օճորքի տակ հարսանքատան
Երդում են դեռ Գովխը փեսին:
Այնուհետեւ այդպէս արդէն երգ են դառնում
Ու թագուհու բոյրին իրենց հոտն են խառնում
Ախպերարուն.
— Մէջ սարերուն,
Դեղին սուսան.
— Մէջ ֆարերուն,
Փունջ մանուշակ.
— Էս ձորն ի վեր,
Եւ ձընծաղիկ.
— Էս ձորն ի վար...

Յետոյ արդէն մի նոր խաղիկ
Մէջ է բերում կարմիր կակաչ,
Ճերմակ շուշան, ոսկեծաղիկ
Եւ վարդենիս,
Որոնց նման.
— Անուշ բուրէր ֆռ թագուհին:

Բարեբանող երգը հիմա
Օրօրւում է,
Շորորւում է
Այդու նման մի պտղաբեր.

—Խաղողի ուռ կոճակ կապէր,
Պտղէ դուխ էլ էնոր նման:

Ու երգողի ձայնը ծորուն
Երգի ծայրը եռ ոլորում:
Աւարտում է՝
Հանգոյց տալով...
Ու տեսնում են դէմքերն իրենց
Օղի-գինով լի բաժակում,
Եւ կոնծելով նոյն պահին հէնց՝
Աւերում են դէմքերն իրենց
Ու յետեւից չուտ ճաշակում

Ախ թաս չորուայ,
Մի ֆունտ չաղ մխա,
Եւ այնպիսի՛ ախորժակով,
Ինչքերն առես սրբի նման
Պատ են պահել մի ողջ ամիս:

Դավ–դուդուկից հիմա արդէն ծայր է առնում
Նուրբ ու նազուն մի Ջեռնախաղ՝
Յարուցելով հիացպէին «վա՛յ–վա՛յ... ա՛խ–ա՛խ»:
Հասակակից հարս–աղջկայ
Հրմշտոցից սրտատնդած՝
Ջեմուչումով վեր է կենում
Մի թուխ, վարսեղ, հասուն աղջիկ,
Ու նազում է մի ամաչկոտ թուլ–թուլ ծլծաղ:
Շապանակէ իր աչքերը պատռպտրած թարթիչներով՝
Նա թափանցիկ իր ականջին
Պահ է տալիս անհնազանդ մի սեւ խոպոպ
Եւ կէս մարած քայլ է անում
Դէպի կենարոն՝ պարաչրջան:
Եղանակը մօտենում է ու հեռանում
Եւ որսալով մօտեցումը եղանակի՝
Ամաչելը անմիջապէս նա մոռանում
Եւ դալարուկ մէջքը խոկոյն կեռ–մեռ անում,
Սահ է սահում,
Այնպէ՛ս սահում,
Որ մի վայրկեան... ամէնքի հետ
Դուդուկչի՛ն էլ չունչն է պահում...

Դիւրապրիւռ դափն է յանկարծ ընդոստ զարկում
Ու գոռնում է նուագն ահա
Լի՛ աւելի լարաթրթիռ:
Ջեռքերն, առես խրտընելով, վեր թևարկում,
Յետոյ, կարծես ապահովուած՝
Ետ են գալիս, թառում սրտին:
Խակ ոտքերից մէկը՝ կոթծես

Գորովանքով ապատակում է
Պաչ պահանջող ժժուկ գորգին —
Մերթ կրունկով ու մեր թաթով
Մանրիկ–մանրիկ տկտկում է:
Մինչ միւսը ինքն իր կարգին
Սահում է լուռ, սակայն յուզուած,
Կարծես չոյում մաքուր խուզուած
Ախտ մազերը նոյն այդ գորգի:

Պարո՛ւմ է նա,
Եւ աչքերն են դառնում տամուկ:
Պարո՛ւմ է նա,
Եւ հպարտութիւնից խայտաճամուկ
Մերթ ծալեծալ, փոթ–փոթ գալիս,
Մատնիչօրէն յոյց է տալիս
Իր թաքցըրած ձեւերը պերճ ու խելքահան,
Մերթ էլ կխոտուած ծալքերն ահա
Ետ են դարսւում,
Բացւում, պարզւում
Եւ վաւաշոտ տղամարդկանց
Հայեացքների նետերի դէմ
Կրկին դառնում
Մի խորամանկ ապնիւ վհուկ:

Պարո՛ւմ է նա,
Վառո՛ւմ է նա,
Եւ բոլորը՝ մեծ թէ պուճուր,
Մոռանում են հասակն իրենց,
Դուրս են ելնում տարիքներից, —
Եւ չափ առած թունդ ծաիերի ալիքներից
Արձանի պէս անշարժացած նորահարսի
Քօղն է ուռչում ու կուչ գալիս,
Ու նորատի հարսնաքրոջ
Ջառ լաչակն է բաց–խուփ անում,
Ամէն անգամ մէկ՝ թաքցընում փոսիկն այտի,
Մէկ՝ դունչիկի ոսպանման խալը բանում:

Ծափ է տալիս մինչեւ անդամ նորափեսան՝
Մոռանալով, որ ուրիշի պսակ չէ սա,
Մոռանալով, որ ինքն այստեղ
Ո՛չ մակար է,
Ո՛չ էլ քաւոր:

Եւ խելքամաղ ջահել տղերք,
Տղամարդիկ սիրակեղեք
Իրենց մատնոց–դաւաճանոց աչքերն ահա
Թարթիչների սուտլիկ–մուտլիկ խաղով կոծկում
Եւ թուլակամ չրթունքներն են դողով կոճկում...

Ա՛խ, վարդապե՛տ, յիշո՞ւմ ես դու
Գարնանային այն օրն անցած,
Դպճ ու սիբեխ, դանդուռ քաղող
Այն հարսներին, աղջիկներին,
Փախուստը քո դէպի պուղ խուց...
Վազուց էր դա, վազո՛ւց, վազո՛ւց,
Յիշո՞ւմ ես, դու,
Ա՛խ, վարդապե՛տ,
Ո՞նց չյիշել,
Երբ ողջ պիշեր
Մի տանջալից ծանըր երազ քեզ տուայտեց,
Մեղքն մեխով հողիդ պայտեց,
Քեզ վարուելով՝ նաեւ խայթեց,
Խայթեց՝ լինչ–որ անուշ յաւով,
Անո՛ւշ–անո՛ւշ, լինչպէս հիմա՝
Այս վայրկեանին...

Նոյն վայրկեանին
Մի թուխ կոյսիճ՝ մէջքին քամար,
Հասկին չուխա մէջքապնդուկ,
Քուրայի պէս բոց աչքերին
Այծուխի պէս սեւ–սեւ կամար,
Հայեացքը՝ լուրջ, դէմքը՝ յանդուգն, —

Արջի նման մէջ է գալիս,
Ծանրամարմին պատյտ տալիս,
Բայց կոպալի տեղին հարուած —
Նա՝ նուագին հաւատարուած
Արջից յանկարծ վազը է գառնում.
Թեթեւ ցատկոյլ վեր է թռնում
Եւ չնայած ոչ մի բանից
Ո՛չ կախւում է, ո՛չ էլ բռնում,
Բայց մնում է վեր՝ օդի մէջ:

Ու պարուհու սեւ յօնքերի
Երկաչքանի կոր կամրջով
Անց է կենում մոլորաքայլ
Մնջախաղի մի մտածում:
Յետոյ կամուրջն իր յօնքերի
Դէեռքի է նա վերածում
Եւ թոյլ տալիս իր աչքերին,
Որ վեր ու վար նժար ճօճեն.
Մնջախաղով կչռում է նա
Տղի բախտը՝
Իր «հա»-ն ու «չէ»-ն:

Ու քայլում է աղջիկն այնպէս զգուշօրէն,
Քայլ է փոխում կարծես ոչ թէ ղեռնի վրայ,
Այլ սառույցին.
Ամա՛ն, յանկարծ չսայթաքի ու չընկնի վայր, —
Յաւը ոչի՛նչ, փակ տեղե՛րը բայ կը լինեն՝
Կը դառնայ խաղք ու խայտառակ:
Նոյն այդ պահին
Տղան այնպէս է կոկտում,
Այնպէ՛ս արագ,
Կարծես սրա ոտների տակ,
Ընդհակառակ՝

Ո՛չ թէ սառոյց,
Այլ լոկ կրա՛կ,
Խարոյկի թէժ չեզջ է փռած,
Եւ որպէսզի չայրի իրեն
Աչխատում է քիչ դիպչընել ոտքը դետնին
Ու չատ մնալ օդում՝ թռած...

Կոտրատւում է աղջիկն էլի ու նազ անում,
Եւ ժպիտը՝
Գարնանային երիժնակի ցօղունի պէս
Որքան քաղցր է ու հիւթալի,
Նոյնքան՝ փչոտ:
Եւ տեսնելով, որ աղջիկը չի հեղանում՝
Պարեկ տղան, ցաւը դէմքին, ցատկում է օդ:
Փլուում, դետինն է սասանում...
Ոտերն արդէն յաճախ-յաճախ
Թեք են տալիս մէկ աջ, մէկ ձախ,
Մինչ իրանը՝ դօտկատեզից՝
Ջի էլ չարժուում անգամ տեղից:
Իսկ ձեռքերը... մի կատարեալ,
Մի կատարեալ... ի՞նչ... — պալարո՛նք.
Առաջ ու ետ, վերեւ-ներքեւ, —
Բան են որսում ասես նրանք՝
Մէկ բարկացած ու կատաղի,
Մէկ էլ յանկարծ
Տատամսում են ու վարանում,
Արդէն կարծես
Մթան մէջ են բան որոնում:
Նորից՝ ընդոստ.
— Տաշի՛-տուշի՛...
Յետոյ՝ յուչիկ.
— Հո՛պտտա-տմբա՛... —
Եւ դառնում է պարն աւելի առոյգ ու ժիր.
Ու պարեկի չալէ թումբանն
Իր խոկ հանած հոգմի առաջ

Փափուկ է՝ կարծես դառած
Դարբընոցի փուքսը կաչուէ։

Իրենց դմբոյ էրիկներից դժգոհ կանայք
Մոքների մէջ կամ բացայայտ հոգոց հանում
Ու ձեռքներն են ցաւով տանում
Իրենց կրծքին... ինչի՞ ուռչող։

Մինչ պարեկը
Զմրան պաղած
Հողն է — թը՛կ–թը՛կ — այնպէս դուխում,
Մեխ է կարծես այնտեղ խփում՝
Իր ոտքերով, ա՛չ թէ մուրճով...
Մինչ պարեկի ուսերն ասես
Պար են գալիս ոտներից ջոկ,
Պար են գալիս իրենց համար
Ճօնքերն անջատ՝
Կամ չինելով, կամ քանդելով
Երկու կամար.
Դաստակը՝ ջոկ,
Թաթն՝ առանձին.
Ծունկը՝ չոք–չոք,
Իրանը՝ ձիւղ,
Գլուխն՝ ուղիղ,
Իսկ վիզը՝ թեք, —
Բոլորն՝ անջատ
Եւ առանձին,
Բայց եւ այնպէս՝ բոլորը մէկ...
Նոյն ժամանակ
Շիւ–աղջկայ թեւիկները, աղաւնու պէս,
Մէկ տեսնում ես՝ քիչ է մնում
Թառեն դեռևին,
Ասես սրտուռ կուտի վրայ,
Մէկ էլ տեսար՝ վեր են սուրում,
Ձախր են տալիս,

Ձեռով, ինչպէս լոյնի չորս կողմ,
Գլխի չուրջ են պտոյտ գալիս,
Ու վերջում էլ —
Երբ նպելի մի չարժումով
Կանգ են առնում,
Յանարհաբար պլուխ տալիս՝
Իրրեւ նչան նեղոդութեան,
Որ դադարում են պարելուց, —
Ձեռքերն այնժամ հեղ ու հլու,
Երկու յոդնած աղաւնու պէս՝ թեւը ծալած
Կուչ են գալիս,
Որ անհանգիստ, վայրկվերող կրծքի վրայ
Հանդըստանան...

Ու հնչում է կենաց մի նոր՝
Թաղւորահօր,
Թաղւորամօր
Կայ — չկայի, ծետ ու պետի:

Ա՛խ, վարդապե՛տ, հիմա պիտի
Պատկառելի մի նոր տադով
Կանչեն վեսի պապ ու տատին,
Հօրն ու մօրը,
Ֆիր-ախպորը՝
Ամէն մէկին մի տուն խաղով:
— Որ գան հատեն, դարպաս անեն,
Ծնրիկ գարկեն սուրբ սեղանին,
Հրամեն բարին մեր թագւորին...

Ձեռով արդէն մի բալաձայն կատակասէր,
Սկսելով պաեչտական իր խաղն ասել՝
Գովքի գիմաց պիտի չուզի՛, այլ պահանջի՛
Փեսահօրից՝
Սել մի սեղան...
Փեսախպորից՝
Խոյ մի խորվու...

Փեսաքուրիդ՝
Գուլպայ եօթ ջուխտ...
Իմանալով, որ կը ստանայ
Իր խոպաճան երկի վիմայ.
— Երկու ճիճուղ,
Մէկ գարեհաց...

Յետոյ պիտի հերթով հնչեն
Հերթի դրուած հազար կենայ,
Հազար կենայ աւանդական ու կրկնուող,
Թէպէտ համեղ, բայց չփոխուող՝
Ամէնօրեայ ճաշերի պէս յոգնեցուցիչ,
Որ եւ սրանք կուլ պիտի տան
Թունդ օղիով, գինով անուշ
Եւ յետադարձ ճամբան փակեն
Խաչմամայի պատառներով:

Դեռ, Վարդապե՛տ, այնտեղ ինչի՛ր կը հանդիպես=

Դեռ կը տեսնես ալի՛ք–ալի՛ք ծփան Շորոր,
Ապա՝ Նազպար,
Եւ կաքաւուղ մի հարս կամ կին,
Որ հակառակ իր իսկ կամքին,
Ա՛խ, Վարդապե՛տ, մինչեւ անդամ
Կուսակրօն վարդապետին
Յիշել կը տայ... պիղծ մի ջեննեթ՝
Մեր անալի դրախտի տեղ,
Պիղծ մի ջեննեթ յիշել կը տայ՝
Խարդաւանքով անդոյ չարի:

Յետոյ... ապա...
Դեռ կայ Դարմպար,
Կայ Թռնոցի, կայ Քոչարի —

Երբ սկըսում կռնաբռնուկ՝
Քիչ ծալուելով,
Շատ տարուելով,
Յետոյ արդէն թեւատըրուկ՝
Շեչտով հատու եւ կտըրուկ
Դէպի առաջ քիչ են տարուում,
Այլ մօտէմօտ ծնկածալուում,
Աչես իրար ուժ դումարած,
Մի սի՛րտ, մի կա՛մք, մի մա՛րդ դառած՝
Աչքի համար անտես մի պատ
Պիտի քանդեն իրենց ուսով.
Յետոյ, յանկարծ, ամբողջ ուժով,
Աչես իրար խիստ կարօտած՝
Պիտի ամուր գրկեն իրար
Մէջք ու իրան
Եւ թի՛ռ՝
Թուչեն մէջքատրկուկ:

Եւ ժամանակ առ ժամանակ՝
Իր կոպալի գարկերի հետ
Խաղացնելով ոդկոյկի պէս դուռը բաչը
Խմած գինուց ու եռանդից կարմրատակած՝
Աքլորի պէս կը ծղրտայ չաղ գհոլչին.
— Այ շաբաաաաաա՛շ հա, —
Ու փութաչան թգթռտելով թուման-տատնոց՝
Կը կպցընի իր ճակատին
Կամ կը խրի փափախի տակ՝
Կէսը կախած իր ծոծրակի,
Իր յօնքերի, գէմքի վրայ՝
Թղթէ դուննեղ ծոպքերի պէս:

Եւ կը տեւի դա մինչեւ լոյս,
Մինչեւ բարի աղօթարան,
Երբ որ Պարոն աքլորն, իզո՛ւր,
Երբ որ Տիկին հաւերն, իզո՛ւր,

Զոռ պիտի տան կոկորդներին՝
Ցայտաբարբեն լոյսը բացուած,
Ու չլսեն իրենց ձայնը անգամ իրենք՝
Դհոլ–զուռնի գօրութեանը կուլ գնալով...

Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարոյ ուրախութիւն,
Որ տեւում էր եօթ օ՛ր–գիշեր,
Որ անցնում էր երգ ու պարով,
Կռիւներով գինեյարոյց,
Ու հաչառութեամբ գինեմիջնորդ...
Ա՛խ, միամի՛տ իմ պապերի
Մանկաբարոյ ուրախութիւն.
Սերմի առթիւ՝
Դեռ չցրուած,
Մանկան առթիւ՝
Դեռ չծնուած...
Ա՛խ, անպիտա՛կ իմ պապերի
Բնապարզեւ հարստութիւն
Հաղար երգ ու եղանակի,
Որ չունէին տէր–տնօրէն
Ու զուրկ էին հեղինակից —
Անհատնելի մի դանձանակ,
Որ չաղ տալիս անփութօրէն,
Ցրում էին հայ գիւղացիք
Իրենց մաքուր չրթունքն ի վար՝
Ինչպէս որ միշտ եւ ամէնուր,
Այս անգամ էլ հարուստներն
Ուրախութեան այս առիթով՝
Ցանկանալով սէ՛ր,
միութի՛ւն,
երջանկութի՛ւն,
Բոլորովին մոռանալով այդ վայրկեանին,
Որ հեշտօրէն չի կատարւում ամէն մարթանք,
Որ այնպէս է լինում նաեւ...

ՂՕՂԱՆՋ ՄՐՄՈՒՌԻ

Քսակ թէ լինէր — Աստուա՛ծ չանի —
Իսկ թէ յանկարծ այնպէս լինէր,
Որ այգու պէս անուշ բուրող
Նորահարսի առաջաստում
Գառի նման մշմշալով
Ամէն դիչեր հանգիստ քնէր
Ընդամէնը տաս–տասներեք
Գարուն տեսած նորափեսան՝
Մէջքը հարսին, ղէմքը պատին, —
Այնժամ պիտի հարսն ի՞նչ անէր:

Ա՛խ, նա ինչպէս բուռթ մանգաղին
Անվերջ քսուղ անիւղ յեսան,
Քար էլ լինէր՝ խարտաւէ՛ր պիտի,
Փոչի՛–վոչի՛ պիտի մաշուէր,
Եւ ձեռն ի ծոց ու վիզը ծուռ՝
Մի խուլ անկիւն պիտի քաշուէր,
Գրտնակի պէս լիք ու լխտիկ
Իր թեւերը յօշոտելով,
Անիծելով իր բախտը սեւ,
Երազելով դգուանք ու սէր՝
Պիտի երգէր ողի՛կ–ողի՛կ.
— Իմա՛լ էնեմ, իմա՛լ չէնեմ,
Նար պստիկ ա, շիւարե՛լ եմ...

Իսկ թէ լինէր, այնպէ՛ս լինէր,
Որ ընջաւոր
Ու փընջաւոր՝
Ծամո՛վ մէկին,
Որ կարճըլիկ
Ու կարճուլիկ՝
Համո՛վ մէկին
Օր ծերութեան դարձնէր իր կին
Մի անատամ բիբար խոջա —
Քիթը՝ բարդան, ոտքը՝ քոթուկ,
Աչքը՝ ճպուռ, վիզը՝ ճօճան...
Իսկ թէ լինէր, այսպէ՛ս լինէր,
Եւ տունն իր լի վանդակ չինէր
Ու նա ոսկէ այդ վանդակում
Փակէր կաքաւ մի կլորիկ,
Մի սիրաւոր
Եւ վիրաւոր
Եւ սեւաւոր
Անբախտ լորիկ...
Իսկ թէ ահա այսպէս լինէ՛ր՝
Այդ օրմահու քաւթառի հետ
Նոյն չոր բարձին
Լերկ գլխի դէմ վարսեղ գլուխն
Ինչպէ՞ս դնէր,
Ծմակի պէս պաղ այդ ծոցում
Ինչպէ՞ս քնէր,
Կրակ կողերն ինչպէ՞ս հպէր
Լուլա–սառցին,
Ինչպէ՞ս, ինչպէ՞ս մալուլ երգով
Ծունկ չծեծէր,
Ծամկտրածը իր մարէին
Ո՞նց չանիծէր,
Ինչպէ՞ս չասէր, որ նա արեց
Իր բախտն աւեր,

Ջահել սրտում կրակի պէս
Վառեց ցաւեր.
Աչքը—աչխարք լիքը լաւեր՝
Ինչո՞ւ թողեց կտրիճ քաջին,
Ինչո՞ւ տուեց քաւթառ խոջին.
— Էնոր ոսկուն, նստեն հաւեր,
Քա մարէ՛ ջան, էս տնաւե՛ր...

Իսկ թէ տային ո՛չ թէ հարուստ, բայց ծեր խոջի,
Այլ հէնց մի լաւ՝ սրտով սիրած ջահել քաջի,
Մինչեւ անգամ չոր քարի տեղ խսիր տային,
Զոր գեանի տեղ տային նաեւ մաչուած կարպետ,
Է՛հ, Վարդապե՛տ,
Ի՛նչ է, պիտի բախտաւորուած հա խնդայի՞ն:
Է՛հ, Վարդապե՛տ,
Աղքատութեան ճանկը չընկնի
Մինչեւ անգամ քո թշնամին...
Հարսանիքի դհոլ-զուռնան դեռ չըլուած,
Եւ պահունի չորերն անգամ
Սնդուկի մէջ դեռ չդրած՝
Պանդխտութեան անգութ քամին,
Հարսի ծոցից նորափեսին փոցընելով
Եւ քարէքար ու սարէսար թողընելով՝
Իր սիրածի անուշ համին
Բաժանումի դառնութիւնն է արդէն խառնում, —
Գնում է նա եւ —
Մի՛ տարի, երկո՛ւ, երե՛ք... —
Ետ չի դառնում:
Եւ կարօտից ու տանջանքից,
Անկարելի անրջանքից,
Մարմինն ասես վէրք է դառնում համատարած
Ու նուո՛ւմ է, տնքո՛ւմ, ցաւո՛ւմ:
Սէրն է միայն կուրացուցիչ — դառըն ծխով,
Ինչպէս ծառից հէնց նոր կարդուած — խարոյկ դառած
Թաց ոստերը՝

Անթթուածին քարանձաւում…
Անկողինն է հարսին այրում կրակի պէս,
Օրն է մթնում, իսկ իր տէրը տուն չի գալիս,
Ու —

Էս աւտէր բարձի վրայ
Առանց եար ֆո՛ւն չի գալիս…

Անց է կենում նոր մի տարի,
Ու —

Հացըս թող դառնայ գարի՛…
Կանաչում են պաղ արտերը,
Ու —

Սիրածըդ տանն աւտէր է…
Ջառ են հագնում դաշտ ու լեռներ,
Ու —

Տեսնողիդ աչքի՛ն մեռնեմ…
Եա է գալիս օտարի եարն,
Ու —

Կանչում եմ, շո՛ւտ արի, եա՛ր…

Եւ վէրքերը դառնում են երփ,
Ու երփերը դառնում են վէրք,
Ու արտերը՝ ծանր մի քար, —
Երբ զինուոր են տանում եարին.

Ա՛խ, երթար ու էլ ե՛տ չգար
Քեզի սալդաթ գրած տարին…
Երբ չեն տալիս եարը եարին.

— Որ ախ էնեմ՝ կու գայ արի՛ն…
Երբ խախտում են խօսք ու երդում.

— Տաֆ արի՛ն է մէջս լերդում…
Երբ…

Վարդապե՛տ, ի՞նչ էիր դու.
Մօրից ծնուած հոգ հո չէի՞ր,
Որ լուռ ու մունջ ներծծէիր
Անձրեւ ու ջուր,

Եղեամ ու ձիւն,
կարկուտ ու ցօղ:

Թէ լինէիր մինչեւ անգամ անլեզու հողմ,
Այս ամէնը ինչպէ՞ս եւ ո՞ւր հոգիդ տանէր:
Չէ՞ որ հոգիդ պիտի մի օր
Պոռթկա՛ր,
Որպէս մի արտեզեան խորունկ ջրհոր,
Ժայթքէ՛ր,
Զորս դէին ցրէր ցայտքեր,
Ծխածանուած չատրուանէ՛ր...

ԾԱԽԱԼՈՒՈՂ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ՀՐԱՇԱԳՈՐԾՄԱՆ

Ըն է մինչեւ հիմա որաեղ որ երգն էր՝
Այնաեղ էլ նա էր,
Այսուհետ արդէն որաեղ որ նա էր՝
Այնաեղ էր երգը։

Առաջին անգամ լայն դահլիճներէ
Բեմէդ էր լսում ինքն իրեն հայը,
Եւ բոլորովին ուրիշ էր հնչում
Իր իսկ «Ցույ–տույ»–ը,
«Վայ լէ–լէ — վայ»–ը։
Նո՛յն արտն էր յուրթի,
Նո՛յն սերմը ցանուած,
Բայց... խորն էր հերկը,
Ու բեղուն՝ բերքը։

Հայ հեւհջի վայրի տարերքը,
Հեղեղ մեղեդին,
Տարափ պարերգը
Էլ չէին արդէն հնչում ու կորչում
Ինչպէս հողմերը՝
Դաշտերում լեռնոտ,
Յատկան ջրերը՝
Ձորում ու կիրճում —

Անօգո՛ւտ այնպէս,
Այնպէս ապարդի՛ւն:
Հայ ելեւէջի վայրի տարերքը
Մի կախարդ ձեռքով,
Որեղ որ պէտք էր,
Դառնում էր անձրեւ՝
Ծլարձակ արտում,
Դառնում ջրաղաց,
Էրանի քամի —
Յանկարծա՛ծ ժամին:

Հայ ելեւէջի հոսքը վարարուն
Մի կախարդ ձեռքով մտել էր խոր հուն,
Գտել էր անշէջ ու որոշ հասցէ.
Հասնում էր սրտին՝ ում էլ պատկանէր.
Մօտիկ ղրացո՞ւ՝
Թուսի՛, վրացո՛ւ,
Թէ՞ օտարաձայն հեռաւորների —
Լեհի՛,
Ֆրանկի՛,
Աւրտաըրացո՛ւ:

Այսպէս՝ կալակիտ յորենն է դառնում
Ընտիր սերմնացու,
Ադատաժ քարը՝ սեղան խորանի
Ու պատի վրայ ջուր խմող այծեամ:
Այսպէս՝ դաչտերի ծաղկունքը ցանցիր
Պատկ են դառնում հարսների ձեռքով,
Հարսների լանջին:
Այսպէս՝ եղեամն է ապակիներին,
Լուսամուտների չրջանակի մէջ,
Հանճարեղագոյն բնանկարի կերպարանք առնում,
Եւ յոյսը — այդպէ՛ս — հաւատ է դառնում...

Նա մելամաղձոտ հայ եղանակին
Հայկական ուրախ հորդան էր կցում,

Եւ կարծես արփին ծագում էր յանկարծ,
Ցրում մուժ ու մէգ:

Նա վիրաբոյժի համառ ձեռքերով
Ինչ-որ կոյր ապիք կտրում էր դյուսմ,
Եւ մարմինն ասես ծնւում էր նորից,
Դառնում մօրէմէկ:

Նա... ի՞նչ էր անում:
Լոկ այն էր անում,
Ինչ-որ անում է աւազն ամանին՝
Մաքրում է ժանգից.
Ինչ-որ անում է ջուրը մանչուկին՝
Դունչիկն է սրբում.
Ինչ-որ անում է մայրը մանուկին՝
Ինն ամիս կրում իր կողերի մէջ
Ու պերմաբդկային-մայրական ցաւով
Աւելացընում թիւը աստղերի՛, —
Մի սովորակա՛ն... անսովո՛ր հրաչք:

ՂՕՂԱՆՋ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Ես արտերի փոխանակ
Հորովելը վեղջուկի
Դահլիճներում է հնչում.
— Ջի՛գ տուր, fաշի՛, ա՛յ եզ ջան...
Բայ երկնքի փոխանակ
Շրթունքները պանդուխտի
Բեմերից են մրմընջում.
— Հո՛ւր. են ձգէ մէջ իմ ջան:
Գիւղակների փոխանակ
Քաղաքներում է ծորում.
— կալ ու կուտը պրծած ա:
Հիւղակների փոխարէն
Սրահներում է բուրում.
— խնձոր ունեմ, կծած ա:

...Իսկ մեր խնձորն իսկապէս
Աւնածոր ու վիրաւոր՝
Հազա՛ր տեղից էր կրծած.

Առեւանգած իրարից՝
Մեր խնձորը դարաւոր
Հազա՛ր ձեռքից էր պրծած:

Հազա՛ր եղունգ ու ճիրան,
Հազա՛ր մագիլ էր խրուել
Նրա փխրուն կողերում:

Տիղմաբեր ու թումբաատար
Հապա՛ր հեղեղ էր ցրուել
Նրան անող հողերում:

Ոսոխներից բարբարոս
Շատերն անդամ յաւիտեան
Կորել էին աչխարհից,

Զքուել էին՝ թողնելով
Լոկ պատ մոխիր կամ մատեան
Բնեռապիր ու քարից:

Բայց մնում էր մեզ վրայ
Հետքը նրանց ժանիքի՝
Նրանց արնոտ կնիքի.

Պատնուել էր մեր երկին
Օտարի չունչն անմաքուր,
Օտար երգի ելեւէջ.
Ազ էր ցանուել մեր վէրքին,
Աւազ լցուել մեր բերքի
Եւ ջուր՝ արդար կաթի մէջ:

Ականջ էր պէտք, որ չկի,
Ու ձեռք էր պէտք, որ պոկի
Օտարամուտ ամէն քօղ:
Պէտք էր կոկորդ ու ողի,
Որ տայ դարձած մեր հոգին
Համերգանար ամէն կողմ:

Մարդուն երբ ցաւ են տալիս՝
Հետն էլ արցունք է գալիս,
Որ կակիծը քիչ մարի:
Վէրք է տրում՝ եւ դե՛ղ կայ,
Ելք է ճարում՝ թէ նե՛ղ գայ,—
Այսպէս է կարգն աչխարհի:

Ու եկար դու՝ վիթխարի՛,
Եւ մեր հայոց աշխարհի
Անաբացած հայելուց
Բիծ ու փոչին, խա՛ւ առ խա՛ւ,
Բարեխնամ մի ձեռքով
Կարծես յանկարծ սրբեցին —

Եւ մեզ այնտեղ նայելուց
Աչքերը մեր հարբեցին.
Մե՞նք ենք՝ այսքա՛ն վայելուչ,
Այսպէս կոկի՛կ, յարդարուա՛ծ,
Գոհարներո՛վ զարդարուած:
Զկշտացա՛նք նայելուց...

Այսպէս յանկարծ եւ անձայն՝
Մեր հեքիաթի համաձայն՝
Միայն փոխուում է այդին,
Երբ ոչ այդում այդ անկուր
Կախարդիչ երկն է հնչում
Մեր Հայաբան դառ հաւքի:

Եւ ամէնքս մեր աչքին
Երեւացինք աչակերտ,
Իսկ դու՝
Երկի դասատուն:
Եւ ամէնքս մեր աչքին՝
Թօչնած, խամրած ծաղկաթերթ,
Իսկ դու՝
Բլբուլ Հայաբան:

Եւ այն օրից, վարդապետ,
Դու ծայրը տուիր հրաչքի՛ն —
Եւ յաղթական մի չքերթ
Զգուեց հեռո՛ւ եւ հեռո՛ւ

Էջմիածնի կաւակերտ
Ու սրբատաչ պատերից։

Դու՝ վեղարիդ սեւերում,
Մինչդեռ քո լոյս մատերից
Ծորանք առան չող շիթեր։
Եւ ինչ երկար դարերով
Քո ժողովուրդն էր կիտել
Նմո՛ւշ – նմո՛ւշ, հա՛տ առ հա՛տ,
Դու լիաբուռ–լիառատ
Շա՛ղ տուեցիր աշխարհում,
Շա՛ղ տուեցիր աշխարհում,
Որպէս մի նոր վաշխառու,
Որ տուածի փոխարէն
Բարձր չահ է պահանջում՝
Հիացմունքի չող արե՛ւ,
Գոռոզութեան նահանջո՛ւմ։

Եւ այն, ինչ հայ դիւղացին
Ձիգ էր տուել դարերով
Ձպարանի կամ Լոռուայ
Հերկում, կալում, խոզանում,
Հիմա արդէն, վարդապե՛տ,
Ծաւալւում էր քո՛ շրթից,
Ծաւալւում էր... Լոզանում։

Հայ պատանու վիրաւոր
Սրտի մրմունջն էր հեւում,
Բայց քո՛ բերնից, վարդապե՛տ,
Այն էլ հեռու... ժլլնեւում։

Կոմսուհիները, բարոնները,
Տիտղոսաւոր տէր–տիկին
Քո կատարմամբ լսելով

Մեր Նազպար-ը, Շուշիկի-ն՝
Նետում էին ակամայ
Գոռոզության ու չիկի
Ամէն դիմակ ու կեղծամ
Եւ, մանկօրէն հիացած,
Իրենց մտքում, պատրանքով,
Տեսնում... պարզ մի այծեամ:

Հեռուից հեռու, մօտ ի մօտ
Մեր կարօտն էր սաւառնում,
Ու մեր սրտի խօսքը տօթ
Շիկանում էր քո բերնում,
Սակայն ո՛չ թէ խաղողի
Մի ծանրածոց այգու մէջ,
Ո՛չ էլ կարիճ հայկական,
Ո՛չ էլ արտից, այլ... Բեռնում:

Մի դիշերում դու ձայնով
Նուաճեցիր Վիեննան՝
Սահիպեյով, որ բոլորն
Օտար երգով հիանան:

Լոկ ծիրանի մի փողով
Ու չարժումով մատներիդ
Տէր-անօրէն դու դարձար
Խորթ ու խաժոռ Ցիւրիխում՝
Սահիպելով, որ պղան,
Թէ ինչպէս է մեր դինին
Տաքանալով մեր երդից՝
Սարքում դուարթ կերուխում:

Երբ աճաչակ, բարեսուն
Երեսառած փարիզում
Բեմին բռնեց ու ճօճուեց
Տղամարդկանց պարի սիւն,

Սակայն... լոկ քո՛ երկերով,
Քո՛ նուագով — ո՛չ մի խումբ։
Ու խենթացած ծափ տուեց
Փարիզն ինչպէս ձեռքերով,
Այնպէս նաեւ բաց ու խուփ
Թարթիչներով՝ զարմացա՛ծ...

Ասես մէկէն թարմացած՝
Ներընդունած կապոլիչ
Ինչ–որ առողջ չիթ արեան,
Քեզ լսելով, Վարդապե՛տ,
Զահելացա՛ւ Իտալիան,
Երբ դու հասար Վէնեւիկ։

Ու մոռացած խստապահ
Ծէս ու կանոն–սնոտիք,
Ու մոռացած հաւատի
Կապ ու կապանք, կաղապար՝
Ամէ՛ն մարի ուզդափառ,
Բողոքակա՛ն, կաթոլի՛կ,
Հուս դպացին, որ իրենք
Մարդ են կեանքում ու եղբայր
Երբ մէկ դարձաւ փոթորիկ,
Մէկ էլ ծփաց մեղմաբար՝
Հայ հոգեւոր երգը ծով՝
Լոյս գուարթ–ը, Տէր կեցո–ՙ՛
Որ քո՛ չրթից, Վարդապե՛տ,
Ալի՛ք–ալի՛ք, փե՛րթ առ փե՛րթ
Ծաւալւում էր,
Թաւալւում —
Ելնող–ընկնող կոր ջծով։

Ու Եւրոպան, որ դիտէր
Մի այն ինչ–որ Արեւելք՝
Միաչերտ ու միաչուրթ —

Դժոխքի պէս մօտակայ,
Դրախտի պէս հեռաւոր.
Հիմա արդէն Եւրոպան
Գտաւ մի նոր ժողովուրդ
Եւ հասկացաւ, որ ունի
Նա մի անցեալ դարաւոր,
Եւ դպաց, որ նա ունի
Երակներում հոսք ու եռք
Բազմադարեան
Տօթ արեան,
Եւ երկիրն այդ նորագիւտ
Նոր անունով մկրտեց՝
Աբեւելքի Իտալիա՛...

ՂՕՂԱՆՋ ՄԻՋԱԿՈՒԹԵԱՆ

Ձուն էր նորից։
Սարից ու ձորից
Գալիս էր կարծես մայրութեան բուրմունք
Ու համ պտուղի։
Ոզկոյղներն իրենց ճարահատ լացով
Խնդրում են դառնալ վինու քաղցրը ծոր
Եւ կամ պուտ օղի։

Քամու չնորհիւ ծառերի դառ-վառ
Խաչամն է թռչում թաւալ առ թաւալ,
Այնպէ՛ս, որ հեռուից անծանօթ մէկին
Մի վայրկեան նոյնիսկ կարող էր թուալ,
Թէ փառեաններէի երամն անտառից
Պոկւում է, յետոյ իրարից զատւում։

Կանաչ եղեգնի սրերն անպատեան
Դեղնում են՝ առել ժանգով են պատւում։

Լաչառ փչերը արդէն չորացած,
Արդեօք ո՞ւմ վրայ, ինչո՞ւ չարացած՝
Զգալ են տալիս անցուդարձողին,
Որ իրենք են տէրն այս անփորձ հողի։

Իսկ մէջքակոտրուկ մեղու եւ պիծակ
Համերգ են տալիս, եւ այն էլ ձրի,

Բնութեան հսկայ անբեմ տաճարում,
Եւ ամբողջ օրը ինչ-որ մեծերի
Դուր գալ ցանկացող ճպուռներն անվերջ՝
Քարոզչի նման ճառո՛ւմ են, ճառո՛ւմ:

Աչնան մածունը այնպէս է հիմա
Հասատ սերակալում,
Որ մէջը պիտի փայտէ գդալը
Բահի պէս խրես:

Իսկ չորամամուռ քարերի վրայ,
Զեչոտ ժայռերին
Արեւ են կորզում մողէս գորչաւուն,
Ու կանաչ խըլէզ՝
Իւրաքանչիւրը,
Իբրեւ Աստրծոյ սուր ծաղրուծանակ,
Մի ցամաքային ու քարաբնակ
Ինեզ կոկորդիլոս:

Աստեղութիւնից բոլորովին դուրկ
Ամպերն անքանակ
Գրոհ են տալիս բանակ առ բանակ
Մէն ու մենաւոր արեգակի դէմ,
Որ կարծես իբրեւ փոքր ապրի հերոս
Բիւր դամաճների հոծ ամբոխի մէջ
Կռիւ է մղում ողջ օրը՝ մենակ
Ու երեկոյեան... նահատակւում է
Իբրեւ մարտիրոս...

Այնպէ՛ս դուրեկան, այնպէ՛ս փայփայիչ
Աչուն էր կրկին, երբ Եւրոպայից
Առօք ու փառօք եւ դարձաւ նա տուն՝
Եւրոպան յաղթած:
Բայց թափ չէր տուել դեռ ճամբի փոշին,
Ճակատից ճամբի քրտինքն էր կաթում,

Նա դեռ չէր փոխել հագուստ ու կօշիկ,
Երբ ոտքերի տակ ճահիճը ճօճուէց,
Վտառը վխտաց:

Նա, որ գալիս էր Եւրոպան յաղթած,
Հիմա՝ յաղթութեան արեւը սրտում,
Վաստակած բազկով, հոգով տօնական,
Հերոսի նման դառնում է իր տուն,
Եւ յանկա՛րծ այնտեղ —
ուժը չի պատում
Իր հրով հալել պաղը տնական,
Եւ յանկա՛րծ այնտեղ —
ղղում է իրեն
Իր գալո՛ւց առաջ ջարդուած
ու պարտուած...

Ամբաստանութեան աչեհի քամին
Լցնում է նրա աչքերը փոշով,
Ու բանսարկութեան մացառն իր փշով
Հոգի բզկտում, խոցում է մարմին,
Քանզի ոսոխ է փոտածը թարմին
Եւ հասարակը՝ աղնուազարմին,
Քանզի չի պրծել ու չի վերջանայ
Նրանց դարաւոր վիճարկութիւնը:

Կարկին–քանոնով,
Կարգ ու կանոնով
Արտակարդի դէմ դրոհ էր տալիս
Նոյն ինքը... Նորին Մի՛ջակութիւնը:

Մի՛ջակութի՛ւնը...

Նա աչքեր ունի՛,
Սակայն... ծոծրակին.
Եւ տեսնում է նա,

Բայց ո՛չ թէ պայծառ բոցը ճրագի,
Այլ նրա զգած ատուերը միայն,
Եւ ոչ թէ գլուխ
Մի առաջամուխ,
Այլ պոչը, ապին:

Նա ունի՛ ականջ,
Բայց ո՛չ թէ նոր կանչ,
Այլ անցած կանչի
Թոյլ արձագանգը լսելու համար:

Ունի՛ քաղցրութիւն,
Բայց հիւանդագին-վաղահաս մրգի,
Որ ցած է ընկնում՝
Դեռ չհասած ամառ:

Գո՛յն է ճանաչում,
Բայց միշտ էլ յամառ
Սիրահարուած է քամուող ներկի՛ն...

Միջակութի՛ւնը...

Թէ թռչուն է նա՝
Ապա թուխակ է —
Այն է կրկընում,
Ինչին վարժել են:
Թէ կենդանի է՝
Կապիկ է միայն —
Անում է լոկ այն,
Ինչին մարզել են:
Եթէ ուժեղ է՝
Ապա ջորո՛ւ պէս —
Ուժն իրենը չէ,
Այլ ծնողների զօրեղութիւնն է,
Մի՛ն ծնողների, որ — աւա՛ղ — նրան

Մի՛ բան չեն տուել,
Հասարա՛կ մի բան՝
Ծնող դառնալու կարողութիւնը:

Յուզուել էր ահա
Ու տաղնապում էր Մէյակութիւնը:

Արիւնապակաս պապած խեղճերին
Տենդի ջերմ թուաց այն տաքութիւնը,
Որ անջատուում է սրտից վառվռուն
Եւ ահաղնանում ցրտից չուրչքոլոր:

Ու մարդիկ, որոնց հապուսաը նոր էր,
Ու հոգին հին էր ու կարկատանուած,
Կենարար հովին, զովարար քամուն
Նայեցին իրրեւ ահեղ թշնամու,
Որ դուցէ յանկարծ իր չնչով պակի,
Ու փուլ տայ նրանց կարկատուն հոգին:

Եւ մարդիկ, որոնց խօսքերն էին նոր,
Իսկ միտքը՝ մաշուած,
Ինչպէս ղրամը առուծախի մէջ,
Գոռ հրդեհ տեսան
Լուսարար մտքի վառ օջախի մէջ
Ու սրտապատառ աղմուկ պցեցին.
— Հասէ՛ք, ջո՛ւր ճարէք,
Օգնեցէ՛ք, մարէ՛ք...

Ո՛վ Մէյակութեան անխախտ բնութիւն,
Դու՝ մտքի միայն թուաբանութիւն
Եւ հանրահաշուի երդուեալ ոսոխ,
Դու՝ անծայր երկնի լայնութի տեղակ
Գլխուող – վաճառուող մաուչելի լեղակ,
Բոլո՛ր զարերի դու մե՛ծ յաղթակ,
Անցողիկ փառքի, էժան բախտի զող,

Եւ ամենաղօր... քո այն պատանիքով,
Որ քաջ է յայտնի նաեւ մեծերին,
Բայց որոնք մեծ են նրանով նաեւ,
Որ պիտեն թէեւ,
Բայց այդ պատանիքից
Զեն կարողանում երբեք օգտուել...

Ո՛վ Միջակութիւն,
Ո՛վ երանելի ցմահ խակութիւն,
Ծերութիւն հոգո՛ւ, մտքի՛ մանկութիւն,
Գոհ տիպարը քո սուր ծամածռուեց,
Ինչպէս բութ ցաւից կամ փուչտոցից,
Եւ խեղճ պիւտն ահա Մեսրոպ Մաշտոցի
Բոլո՛ր տառերով ի սպաս դրուեց
Սուտ–Ճխտուանների անվախ բերանին,
Եւ օտար աչքի չեղած չիւղն անգամ
Վերածուեց հսկայ բարդու դերանի.
Է՛լ սրբատաշածուած օրէնքի խախտում,
Է՛լ արատաւոր մտքեր ու երդեր,
Է՛լ ստուեր տեսնել լուսէ դրախտում
Կամ, մեղա՛յ Աստծոյ, դրախտը հերքել,
Հապա՛ մի տեսակ մահացու մեղքեր,
Առաջատուր ենթադրութիւն,
Ոխ ու քէն, նախանձ, խենթ ատելութիւն՝
Կիտուեցին անդիը, բարդուեցին դրով
Նոյն սուտ սրբերի անսուրբ ձեռքերով....

Եւ նոյնիսկ նրա օդը շնչելիք
Ապականեցին չուրջբոլոր այնպէս,
Որ նա, շնչելիս, օդի փոխանակ
Մանրած ապակու փշրանք էր կարծես
Ջոռով կուլ տալիս...
Եւ սիրտը նրա ցաւից կուչ եկաւ,
Ինչպէս պիւղացու սիրտն է կծկըւում,
Երբ ամրան կէսին կարկուտ է գալիս....

Հայդ, վարպապե՛տ,
Հայդ դառնացաւ թալկաթփի պէս,
Եւ դունաթափուեց
Ու պաղ քրտինքով ճակատդ պատուեց՝
Վանքի ծեփի պէս:

Հայեացքը նրանց, ում պիտի որ դու,
Ըստ հին օրինաց, եղբայր կոչէիր,
Կամ աչքդ տայիր, կամ աչ պահէիր,
Հայեացքը նրանց դաղում էր հիմա
Եւ այրում էր քեզ՝ եղինջի նման...

Այս անմխաբան Միսթանութեան
Պաղ պատերի մէջ,
Ջար ու փոքրոգի, խղճուկ ու չնչին
Այս վատերի մէջ
Էլ ինչպէ՞ս, էլ ո՞նց նրանց սաղ դայիր,
Նրանց մէջ ինչպէ՞ս դու քեզ դգայիր.
Մի չհասկացուած, մի հին սրբի՞ պէս:

Չէ՛, փոխուել էին ժամանակները,
Պիտի դգայիր... միայն որբի՛ պէս...

ՂՕՂԱՆՋ ՀԱՐՑՈՒՄԻ

Ձա որը էր ծնուել ու սնուել կեանքում,
Եւ ոնց սկսուեց՝ այնպէս էլ դնաց.
Անձնական կեանքում նա միշտ որը մնաց՝
Որը օթեւանող հինաւուրց վանքում:

Այդպէս էլ մնաց անտուն ու անտեղ՝
Լոկ խոնաւ մի խուց, թղթեր ու կանթեղ:

Այդպէս էլ մնաց մենիկ ու մենակ,
Հոգին՝ աննկուն, ինքը՝ անյենակ:

Ամենից առաջ նա հայր էր ծնուել...
Այդպէս էլ կեանքում չունեցաւ բալիկ,
Որ տան անկիւնում օրօրոց դրուէր,
Կամարից կախուէր յուռութ-խաղալիք,
Եւ ինքն էլ հակուած՝ նաճիկ-նայ առէր,
Իսկ երբ մեծանար՝
Տը՛պ-տը՛պ-տը՛պ վազէր,
Ու հօր թղթերը խառնէր, խլրտէր,
Անվերջ բլբլար,
Եւ չիւը դալար
Աննկատ լցուէր ու նոր բուն դառնար,
Երջանիկ մի օր տեղ ու տուն դառնար...

Նա ունէր մառնե՛ր —
Տաքուկ ու նրբին,
Աղերսո՛ղ մառներ՝
Շոյելո՛ւ համար, ցաւը մեղմելո՛ւ,
Գրկելո՛ւ համար, կրծքին սեղմելո՛ւ:
Սակայն որտեղի՞ց եւ ինչպէ՞ս պանէր
Մի ժիրիկ մանչուկ,
Հետն էլ՝ թեւանոցուկ
Գանգուրիկ
Քուրիկ...

Նա ունէր չրթե՛ր —
Այրող կարօտից
Դողացո՛ղ չրթեր՝
Պաչելո՛ւ համար ու համբուրելո՛ւ,
Եւ — պիտի կեանքում անյաղթ մի պապակ
Հա՛ նրան ղրկէր
Օտար թաթիկից չոյանք մուրալու,
Թմփլիկ թուչիկից հայհոյելու մի պատ...

Եւ ունէր նա սի՛րտ՝ սիրելո՛ւ համար,
Մի սիրտ՝ զերուելով տիրելու համար,
Մի սիրտ՝ սէ՛ր համակ,
Մի սիրտ՝ սիրոյ ծո՛վ,
Իսկ ինքը՝ սիրուց յաւիտեա՛ն ցամաք,
Ինքը՝ սիրուց սո՛վ,
Ինքը՝ մենակեաց ու կուսակրօն —
Ինքն երեն ծիւրող մի սիրոյ կերոն,
Որ վառուում է յար խորանի խորքում
Անմարդաբընակ դափ-դատարկ վանքի
Եւ լուսարարի աչքին ու հոգուն
Իր մուխն է տալիս, լոյսը՝ ոչ ոքի...

Ինչո՞ւ է յաճախ
Կեանքը այնպիսի չար խաղեր խաղում,

Որ մտածելիս՝
Մարդու սրտի մէջ արիւն է պաղում:

Դեռ ոչի՛նչ,
Եթէ չեղեալ Մովսէսին աղարիչն անդոյ
Գերադասել էր ու նախընտրել
Միջնորդ իր միջեւ ու ժողովրդի՝
Միաժամանակ խեղճ ու կրակին ծնելով կակազ, —
Ե՛կ ու թարգմանիր քո թլուատ լեզուով
Պատգամներն Աստծոյ, մտքերը խրթին:
Դեռ կարելի էր աւել ու պակաս
Զեղեալի համար անդոյին ներել:
Բայց... մելոտոններին
Վերցնել ու զրկել տեսողութիւնի՞ց,
Բեթհովէններին՝ լսողութիւնի՞ց,
Կոմիտասներին թոյլ չտա՞լ սիրել...

Ինչո՞ւ է յաճախ
Կեանքը այնպիսի չար խաղեր խաղում,
Որ մտածելիս՝
Մարդու սրտի մէջ արիւնն է պաղում:
Ինչո՞ւ, եւ զարձեա՛լ, եւ կրկի՛ն ինչո՞ւ,
Եւ ի՞նչ է ուզում զրանով ասել.
Իր ո՞ւժն է չեշտում,
Կարողութի՞նը:

Եկէք նախապէս, առյաւէ՛տ ու մի՛չտ
Ընդունենք կեանքի զօրեղութիւնը,
Միայն թէ երբե՛ք էլ այնպէս չանի,
Որ աշխարհ գալիք նոր մի Կոմիտաս
Իր անմեղ սէրը սրտում ղնղանի,
Իբրեւ զատուածի,
Դատապարտուածի՝
Լերդ-լերդ արիւնով
Ծեփելով բանաի դուռն ու պատերը...

... Ո՞վ էր այդ թաքուն–մեղաւոր սիրոյ
Անաւոր դժբախտ–երջանիկ ակրը,
Վարդապե՛տ, ասա՛,
Չկա՞ քեզ պարտ.
Քեզ հիմա ո՛չ ոք չի բանտարկի, —
Որդի մի ժպտուրդ քեզ կ'ունկնդրի:
Վարդապե՛տ, ասա՛.
Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,
Ո՞ւմ է սուրբը պէտք,
Ե՛կ դու մարդացիր:

Ինքըզ թէժ կրակ՝ մի՞թէ, Վարդապե՛տ,
Բռնադատակ կեանքում յար սառել ես դու
Կուսակրօնի քո սուրբի տակ:
Վա՛ւ, դա կը լինէր ծանր մեղանչում
Կեանքի՛ դէմ,
Գարնա՛ն,
Պատրաստութեա՛ն:
Թէ յայթահարել եւ առել ես դու
Քո սիրասարսուռ տաք թեւերի տակ
Խումար–Շողեր–իդ կամ Սոնա եար–իդ՝
Իրրեւ կեանքի դէմ գործած մեղքերիդ
Միակ թողութիւն:
Ասա՛, Վարդապե՛տ,
Ո՞վ էր քո սէրը,
Բախտի պէս թաքուն
Քո սիրոյ ակրը:

Չէ՛, նա չէ՛ր կարող չլինել կեանքում:
Նա պիտի՛ լինէր:
Բայց ո՞վ է եղել:
Ինչպէ՞ս իմանալ,
Որտեղի՞ց պեղել:
Ասա՛, Վարդապե՛տ, մի՛ պահիր թաքուն.
Մի՛ խոստովանիր, այլ հպարտացի՛ր,

Ո՞ւմ է սուրբը պէտք,
Ե՛կ դու մարդայիր:

Ո՞վ էր նա, ի՞նչ էր անունը նրա.
Սոճա՞ էր արդեօք, խումա՞ր էր, Շողե՞ր,
Ականջին ունէր արտաճեւ օղե՞ր,
Նա՞լ ունէր արդեօք, ո՞ր այտի վրայ:
Ունէր Տիրամօր աչքեր ու յօնքե՞ր,
Տիրամօր կոնքեր,
Տիրամօր ծունկեր,
Տիրամօր հասակ,
Մազերը՝ պսակ,
Շապիկը՝ կապոյտ,
Շորը՝ ոսկեկար, —
Ճարտար ծալկոցի քանքարի պտուղ՝
Դարեդիպ եկող մի մանրանկար,
Որ կարծես ե՛ւ կար, ե՛ւ բնաւ չկար,
Որ թէպէտ ունէր
Ձկամրոյզ ոտքեր...
Թէ՞ ոչի՛նչ չունէր, այլ ունէր լոկ քե՛զ,
Այլ ունէր լոկ քե՛զ — մի ամբո՛ղջ աշխարհ,
Եւ ապաչում էր, որ դու չլքես՝
Դառնաս օրուայ հա՛յ եւ ո՛չ թէ...նչխար:
Եւ աղերսում էր, չուզելով նպատակ
Ու նուապելով՝ տրտում թեւերիդ...

Իր դառ ու վառուղ նա ո՞նց էր սպասում
Վարդապետական ճրնշող սեւերիդ...
Եւ մի՞թէ քեզնից նա չպահանջեց,
Եթէ պահանջեց,
Ինչո՞ւ նահանջեց՝
Լացով
Ու հայցով
Ինչո՞ւ չառնջեց,

Ա՛խ, ինչո՞ւ անվերջ չհանեց հոգիդ,
Որ ուրիշ հարուստ նա տեսնէր հագիդ —
Որ ազատուէիր վեղարից քո սեւ,
Որ դրսից նո՛յնպէս լինէիր լուսեղ՝
Վանքից աշխարհի դիւրկը դառնայիր,
Ամենամարդըդ նո՛ր մարդանայիր...

Հա՛յր սուրբ, դո՛ւ ասա.
Ո՞վ էր քո սէրը,
Ներքին ու տոկուն,
Բախտի պէս թաքուն,
Երջանիկ — անբախտ
Քո սիրոյ տէրը:

Ո՞վ էր քո չարդուս–չորդուս Շողեր–ը,
Քո Շողակաթը, Շողիկը, Շողը,
Որ ընդունում էր իր լռիկ սրտում
Անլուր ցաւերից այրող դողերը,
Ինչպէս չանթերն է իր մէջ ընդունում
Բարեգութ հողը,
Իսկ քո բերկրանքի չորդերից ծածան
Իր աչքերի մէջ քաշում ծիածան...

Ո՞վ էր, որտեղի՞ց, ինչպէ՞ս էր գալիս՝
Իւրայիններին անվերջ խաբելով,
Տնեցոց առաջ լեզու թափելով,
Սիրտը հեւհեւ, կարօտից մարած,
Ահն ու երկիւղը,
Վախն ու սարսափը
Փայտիրի նման հոգու մէջ թառած, —
Որտե՞ղ էր գալիս, որ իր ափերով
Դալուկ ճակատիդ ամպերը վանի,
Որ չար աշխարհից մի պահ քեզ հանի
Ու տանի —
եւ ո՞ւր —
Թշուառն ո՞ւր տանի...

Ա՛խ, խեղճն ի՞նչ անէր,
ի՞նչ հոգ տար ղվխին,
Նա ինչպէ՞ս դառնար քեզ համար նեցուկ
Իր թոյլ ձեռքերով ու սիրով ծածուկ,
Ինչպէ՞ս օգնէր քեզ, ինչպէ՞ս պաշտպաներ,
Երբ տիխտուրթեան հալա՛ր դեսպաններ,
Քուրմե՛ր մթութեան,
Անվերջ, չորս կողմից, առանց դիմելու,
Ամէն օր մի նոր առիթ հայթայթում,
Հարուածում էին, խոցում քեզ, խայթում,
Երբ քո չուրջըդոր հին ոխն էր պայթում,
Ճայթում նոր քէնը,
Ցայտում նախանձը,
Երբ քո ոսկեհատ արտուր ցորնի տեղ
Սևեմ էին հաչում բոլած ագանձը, —
Մի անբախտ Շողեր իր սիրով ծածուկ
Էլ ինչպէ՞ս օգնէր, դառնար քեզ նեցուկ...

ՂՕՂԱՆՋ ՓԱԽՈՒՍՏԻ

Մաքերով տարուած խոհուն քայլելիս
Դաւադրաբար ոտք էին տալիս,
Թիւ—թաւադրլոր անուն ճակերում
Քինախնդրօրէն փայտ ու ձոպ խըրում,
Բայց նա՝ Առաքեալ, պիտի՛ որ կեանքում
Չկարողանար երբեք ընդհատել
Իր ճանապարհը առաքելական:
Բայց նա՝ Ուսուցիչ, ի՛նչ էլ ոչ լինէր,
Պիտի՛ որ դառնար մեռած խաղերի
Առաջին պլիը, մխակ քերական —
Թաղուածը պեղէր,
Շպրտուածը թեղէր,
Բերէր մէկտեղէր,
Մեր խալ ու տապի մօտիկ — հեռական...

Նա՛, որ ծնուել էր ապրելու կեանքով մի ընկերական,
Ուրախանալու միայն ապրումին,
Տրտմելու դարձեա՛լ ամբողջ համայնքով,
Հիմա ատիպուած ապրում էր մենակ՝
Մենաւոր ծառի խշշոցո՛վ տխուր,
Մենաւոր ծառի ամբողջ համայքո՛վ:

Հսկայ, պտպտո՛ւն, միայնա՛կ մի ծառ,
Որին առիթով եւ կամ անպատճառ
Անվերջ փայտերեսում ու քարում էին,

Պաղի պակասին խանգարում էին
Մէ՛կ օր, տասնըմէ՛կ,
Բայց... քանի՞ տարի,
Եւ մի՞թէ ցմահ...

Եւ ինչպէս կոպը վտանգի դէպքում
Աչքերն է ծածկում բնազդով բարի,
Այդպէս, վարդապե՛տ, այդպէս էլ հիմա,
Կարեկով իրենց խորտուբորդ ուղին՝
Ոտներդ են ահա տալիս զարտուղի —
Էջմիածընից քեզ հեռացընում,
Տանում եւ մի օր... Պոլիս հասցընում:

ՂՕՂԱՆՋ ՊՈԼՍԱԿԱՆ

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Նախ՝ յունական մի հեռեբա,
Ապա՝ տիկին Բիւզանդիոնի,
Այնուհետեւ՝ տաճկաց խանում, —
Իսկ իմ նախնին՝ կռուից դարձող
Կնակարօտ մի վեռերան,
Որ լեռնակոյտ տենչանքի հետ
Մշտախայտանք ծով խանդ ունի,
Եւ ինքն իրեն չուայտելով,
Ցուի վառնելով
Ու հառնելով՝
Աւրէն քանի՛ եւ քանի՛ դար
Քեզնից բնա՛ւ չի կըշտանում...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Դու՝ հեռեբա, տիկին, խանում,
Դու՝ պէրուէի մի կախարդիչ,
Ամառալանջ, նոճեթարթիչ,
Մարմարայի պարեգօտով,
Բոսֆորական կապոյտ գօտով,
Մահիկայօնք, արեւաչեայ,
Մի ըզվլխիչ սիրավաճառ՝
Դէմքով բարի, իսկ սիրտը չար,

Որ հնապանդ մեր ընտանուց սառեցընում,
Մեզ մտաներին՝ ուզածի պէս՝ պարեցընում,
Շղթայու էր ոչինչ չարժող մի ժպիտով,
Մի ժպիտով,
Որ չատ չուտով
Պիտի բաշխէր ուրիչ մէկին, —
Շա՛տ հասկացող,
Քի՛չ զգացող՝
Անո՛ր, անկի՛ղք, — լոկ չահագէ՛տ,
Լոկ հաշուարա՛ր — խելօք մի կին,
Որ ո՛չ կարդին մօտն էր տանում,
Ո՛չ էլ պոնէ կարդին վանում,
Եւ... մեզանից ամենամեծ յաջողակին,
Որ կարդող էր Բիւզանդիոնում դառնալ կեսար՝
Դարձընում էր չա՛տ-չա՛տ... միայն խեղճ տնփեսայ...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Հայաթաւալ հայ պատկերիս
Նախ՝ բորբոքել չինծու խանդով,
Յետոյ՝ փորձուած համանու պէս
Տրուած նրանց խենթ ախեբին
Ու հրայրքի տենդ-տապերին՝
Հիւթերն ամէն եւ արիւնը,
Քրտինքը ծով եւ ուխտը
Քամել ես դու քո արշանդով,
Իսկ երբ նրանք
Հէնց ժառանգից են խօսք բացել,
Դո՛ւ, որ պիտես
Կատուի նման ցկինել պլուին,
Փոխարկուել ես իսկոյն ջորու —
Զորացել ես ու ամլացել...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Քանի՛ անփառ ու աներա կոծիկ
Քո հողերում մենք ենք թաղել,
Մինչդեռ պատուն ո՞վ է քաղել:
Քանի՛-քանի՛ հայ աերուհիներ
Ցանել են ակիմ,
Ցրել հունդերը
Ու հասցրել բերք ու բարիք —
Ողջն՝ ուրիշին,
Իսկ մեզ՝ կարիք...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Շքեղ ու ճոխ, չքնաղ ու պերճ,
Արծաթաթակուռ ու ոսկեքիվ:
Շուք ենք առել քեզ դարերով՝
Մեր սրբատաշ սուրբ քարերով,
Մեր անասել նուրբ կարերով,
Մեր աչքերի փայլ ու ցոլքով,
Մեր մատանեի ծով չնարհքով,
Ջճարուկիք — չեզած ճարով,
Մեր քանքարով ու հանճարով
Պճնել ենք քեզ,
Զուսպ՛լ, զուսպ՛լ
Եւ ամէն ինչ այլոց ձգել...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Մեսրոպաթել դու մի հանդոյց՝
Մեր պատմութեան պարանոցին
Բախտի ձեռքով պնդուած մանկուց.
Դու՝ անջինջ կիր օրհասական,
Մենք՝ մի ճակատ խեղճ ու դալուկ.
Դու՝ նոր սֆինքս փոքր-ասիական
Ու դարաւոր մի հանելուկ,
Մենք՝ դարաւոր մի առեղծուած.
Դու՝ էլ'ն ալիքիդ ոտքատպծուած,
Եղծուա՛ծ,

Կեղծուա՛ծ
Մի չար տաճար,
Իսկ մենք՝ զարձեա՛լ հաւատացեալ...

Պոլի՛ս, Պոլի՛ս...

Դու՝ դիւասիրտ — հրեշտակադէմ,
Ներսիդ՝ դեհեն,
Դրսիդ՝ եդեմ —
Կերտուած ձեռքով մարդակերպար սատանայի...

... Նոր էր պրծել հայ ջարդը նոր՝
Ադանայի՛,
Ու 30 000 դիակ հող էր մտել,
Բայց չէր փտել.
Ելդըզ քէօշքի տէրն արնախում ու սեւանուն
Սալոնիկում իր ձեռքերն էր դեռ լուանում՝
Գահը դիջած զաւակներին իր արժանի,
Որ նորաձեւ եւրոպական տարազի տակ
Առժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք.
Գրասճառ խանութներին յուշափեղկում
Բուրում էին դեռ հեթանոս արբշիռ բոյրեր՝
Կախարդ ձեռքով ամենազօր Վարուժանի
Խառնուելով Գողգոթայի ծաղիկների հոտին անթով.
Դեռ հրահան իր մատներով Սիամանթոն
Շանթազրել էր կամենում կարմիր լուրեր,
Ու Թէքէեանն էր յղանում
Մի Յարութիւն հրաչալի,
Երբ Կոմիտասն այստեղ եկաւ՝
Բո՞յն դանելու,
Թէ՞... արթմնի քուն մտնելու...

Այդ դիւերը, ա՛խ, թող ձգուէր–երկարանար,
Այդ դիւերը թող քարանա՛ր,
Որ չբացուէր բախտորոշիչ օրն այն դժնի
Ու քեզ հանէր,
Պոլիս տանէր...

ՂՕՂԱՆՋ ՆՈՒԱՃՄԱՆ

Թպուկ ծառերը հնչո՜ւն են չորանում՝
Տաք ու պաղ քամուց,
Ջերմաստիճանի անկամ,
Ճակատագրումից։
Վիթխարի մայրին կրկին նորանում,
Շիտակւում է չուտ՝
Մինչեւ իսկ անպուճ ճակատագրումից
Մորունկ նոր վէրքին դանում է նոր ճար՝
Ապաքինուելով բուժիչ այն խէժով,
Որ ուրիշ դէպքում կոչւում է... հանճար։

Եւ ահա նորից նրա թարմ վէրքի
Բերանն է դոցւում,
Ու բացւում նրա բերանփակ հոգին,
Ու բացւում այնպէ՛ս,
Որ բնաչխարհն ողջ ու չոլի
Յարութիւն առած չունչն է զգացւում
Պոլսոյ թաղերում հայրենապապակ։
Բացւում է նրա հոգին բերանփակ
Ազրիականի ու Մարմարայի հեռու ափերին,
Եւ ինքնամոռաց — ցնծուն ծափերի
Որոտից մի պահ
Ծովերն իսկ հպարտ
Ուռչում են թէպէտ, զարկւում ափերին,
Բայց... մի այնպիսի՛ հարուածով զգոյշ,

Բայց այնպէ՛ս անճայն, յամրացած այնպէ՛ս,
Ինչպէս... նկարին Այվազովբսկու...

Մի հայ վարդապետ —
ո՛չ միայն անպէն,
Մինչեւ իսկ առանց խաչ ու արծաթի,
Եկել էր՝ նորից Պոլիան առնելու,
Եւ անառ Պոլիան խնկապէս առաւ,
Բայց ոչ թէ իբրեւ պէօրպաշէօ Ֆաթիհն՝
Ուժգուժ հորդայի սանձը ձեռներում,
Զէնքով ու զօրքով,
Բարբարոս ձեռքով
Կրակի մատնած հիւսիս ու հարաւ:
Նա անառ Պոլիան խնկապէս առաւ,
Վերադրաւեց, միայն թէ... երգով՝
Վիրաւոր հայի արդէն երգ դարձած
Դարաւոր վէրքով,
Մի երգչախմբով,
Որ նա՝ դողթենեցուց սերուած երգասան,
Ծորին խորհրդով կոչել էր Գուսան,
Մի երգչախմբով,
Ուր ձուլուել էին
Շուրջ երեք հարիւր պարման ու կուսան, —
Մի խումբ վիթխարի՝
Մասեաց մայիսեան եղեռնուտի պէս
Բազմաւօսափուն,
Վանայ լճի պէս ծփան ու ծափուն,
Արաքսից առոյգ, Եփրատից հոսան,
Բայց Արտածից չեչտուած ու հաւաք՝
Շուրջ 300
Հնապանդ, խոնարհ ու հլու զաւակ,
Հնապանդ, խոնարհ ու հլու մկկի՛ն,
Որ զաժան կեանքի ահեղ տաժանքով
Իր հայր զառնալու իրաւունքն առմիշտ

Փոխել էր նրա լոկ երազանքով,
Եւ հիմա —
Յանկարծ չուրջ 300
Սլրեվի դաւակ՝
Հօ՛ր ընչով ընչոպ,
Հօ՛ր ձայնով հնչող՝
Մի սի՛րտ, մի հոգի, մի կամք, մի արիւն,
Շուրջ 300···

Իսկ ինչո՞ւ երեք:
Հա՛յր սուրբ, վե՛ց էր պէտք,
Այո՛, Վարդապե՛տ,
Պէտք էր 600՛,
Որ··· մեր վեցպարեոյ ահեղ որբութեան
Ամէ՛ն մի տարուց,
Վեց հարիւր տարի անվե՛րջ չամփուրուած,
Փայփայանքից դուրկ ու չհամբուրուած
Մեր ժողովրդի մթմուռից դոչէր
Ամէ՛ն տարուայ դէմ՝ մի՛ անմեղ բերան
Եւ — ա՛յն քաղաքում, որ չէները մեր
Իր լեզուով ասած՝ դարձրեց վերան՝
Ջարդելով սիւները, ձեղուն ու դերան.
Եւ ա՛յն քաղաքում, որ վեց դար սրբեց
Մեր դինով, արեամբ եւ արտասուքով,
Մեր հայրուսաի տեղ մեզ մաշկն էլ դոփեց,
Պղծեց ա՛յն, ինչ որ մենք էինք պաշտում՝
Մեր սուրբ սուփրայով կօչիկը սրբեց,
Ոտքերը լուաց մեր հայի տաշտում···

Շուրջ 300 պարման ու կուսան՝
Մի համահաւաք — քաղմամի դուսան,
Որ առանց մի պուտ արիւն թափելու
Եւ առանց դաւի, առանց խաբելու,
Մի դաշնամուրով ու սրինդ — փողով,
Վեց հարիւր չուրթով ու ձեռքով մի դոյզ,

Թէ յարուցելով լայ ու արտասուք՝
Ապա յուղելով, ո՛չ ահ ու դողով,
Թէ յարուցելով կանչ ու աղաղակ՝
Ապա ցնծութեամբ, ո՛չ թէ երկիւղով,
Առա՛ւ, նուաճե՛ց, դերե՛ց մի քաղաք,
Որ մի քաղա՛ք չէր, ոչ էլ տէրութիւն,
Այլ միանգամից երկու մայր ցամաք՝
Մի երկկողմանի եանուսեան դիմակ —
Կիսով ասիական — կէսեւրոպական,
Մէկին՝ միջնաբերդ, միւսին՝ մատոյց,
Այստեղ՝ ասպական,
Իսկ այնտեղ՝ այտոյց...

Եւ նա՛, որ երէկ ափրեց Եւրոպան
Ու հիմա դարձել Ասիան էր դերում,
Նա՛, որ ընկել էր մի յուրթի խոպան
Եւ իր քրտինքով ջրած հերկերում
Է՛ւ խոփ էր լինքը, է՛ւ լուծ, է՛ւ ճոպան,
Սերմնացան այնպէս՝ լինչպէս որ տափան,
Հիմա թեբեւս նա դուր էր ուղում
Պոլսում բաց անել երաժշտանոց.
Զէ՞ որ նա լինքը մի մարդ էր թէպէտ,
Հազարի նման մի հայ վարպետ,
Մի մարդ էր, սակայն
Կարծես մի մարդ էր բազմահատորեայ,
Մի մարդ էր, սակայն
Ինքն էր մի ամբողջ կանաչվատորեայ՝
Երգիչ, նուագող,
Խաղեր հաւաքող,
Որքան խմբակա՛ր՝
Նոյնքան ուսուցող,
Որքան հնապէտ՝
Մեռած խաղերի դայլայլիքը լուծող,
Նոյնքան պատմաբան՝
Գարաւոր երգի մայրուղին դծող.

Եւ մի երգահան, եւ մի տաղասաեղծ,
Որի քրտինքի ամէն մի կաթիլ
Դառնում էր նոր երգ ու նոր եղանակ.
Է՛ւ աստուածային մեր Պատարագի
Մի նոր հեղինակ,
Է՛ւ կոմիկական օպերեաայի
Ուրախ խաղաստեղծ,—
Մի մարդ, որ սակայն
կարծես թէ մարդ էր բաղմահատորեայ,
Մի մարդ, որ սակայն,
Ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա...

Եւ ահա նրա կախարդ ձեռքի տակ
Ծերուկ խաղերը գառնում են կարծես
Անկեղծ մանուկ,
Որ կամաց-կամաց
Իր թոթովախօս լեզուն է բանում.
Թո՛ղ որ դեռեւս
Ինչ-որ տեղերում թլիկ է տալիս,
Բայց կ՚անցնի եւս մէկ-երկու տարի,—
Էլ համբը որտե՛ղ, էլ ի՛նչ փակբերան...

Մարմին է առնում Աննուշ օպերան,
Որ էլ հարց չտայ հեգնող Ֆիգարոն,
Թէ ո՞ւր են հապա Մոսին ու Սարոն...

Մարմին է առնում Աննուշ օպերան.
Եւ ժողովրդի
Արցանդից յուրթի
Միեւնոյն տարում լոյս աշխարհ եկած,
Նոյն ժողովրդի
Կարեվէր սրտի
Հոգսերից, ցաւից, յոյսերից երգած,
Նոյն հոլը հերկած
Սերմնացան երկու

Մէկտեղ են բերում բերքը պանծալի —
Սիրով զումարում հանճար հանճարի...

Մինչ ինքը այտեղ՝
Արդեօք Պերայի Պանկալթի թաղո՞ւմ,
Արդեօք Իչհանայ կլդո՞ւմ ման պալիս,
Թէ՞ քաղաքամերձ չքնաղ Հայկէսդում,—
Մինչ ինքը այտեղ՝
Իր մխաքը լողում,
Թողնում է Պերա, Պանկալթի, Պոլիս
Ու հառնում նորից
Ո՞ւր... էջմիածի՛ն:

Ա՛խ, նրանք այնտեղ յաճախ, շա՛տ յաճախ
Խուց էին մտնում լոկ լուսարացին,
Իսկ ամբողջ գիշե՛ր,—
Ծնրադիր չաուախցին...
Ինչպէ՞ս էլիշել՝
Որքան էլ թուայ անցած ու հեռու:

Նա ձեմարանի պահակն էր ծերուկ՝
Անտուն ու անտեղ այդ նախայ քեռին:
Նրա մայտափուչ խառնակ յօնքերի
Տեղ-տեղ վրտնդուած կամարի վրայ
Դարդարտուած էին կնճիռներ մռայլ՝
Ամէն մէկն ասես կամարին վայել
Մի-մի ձեղնափայտ, փոքր ու մեծ գերան,
Ու թէ ծոմռուած վեղից ու տակից՝
Ապա ճակատի պատից ու տաքից:

Եւ ամէն անգամ, երբ նախայ քեռին
Իր խակ մտքերի քամուց սարսեղում՝
Կամարն էր ցնցում քանդուած յօնքերի,
Գերաններն անվերջ վեր ու վար թռչում,
Չո՛ր ճօճուում էին, բայց չէին վրչում...

Թալել էր քեռին՝ ինչ ունէր կեանքում,
Թողել հայրենի Սասուն ու Շատախ
Եւ հիմա՝ պրկուած աչկից ու ականջ,
Մենակ, չորպլուխ՝ պահակ էր վանքում։
Եւ ամէն պիչեր սոսինձ սաների
Կպչուն խնդրանքով եւ ապաչանքով
Ձեղճ Նախոյ քեռին կամաց–ակամայ
Դառնում էր կրկին Սասուն ու Շատախ՝
Միչտ սկըսելով.
— Է՛հ, լաո՛, մաստո՛ղ...
Ու նոյն աննուագ խոր հառաչանքով
Ամէն օր պատմում Սասնայ մի ծռից,
Քուռկիկ Ջալալուց, կեծակէ Թրից,
Մարութայ սարից,
Ապռատաքարից։

Դիցաբանելով վիպում էր քեռին,
Բայց եւ վիպածին խորունկ հաւատում՝
Ապրում նրանց հետ, նրանց պէս դատում,
Նրանց աչքերով սիրում ու ատում։
Վիպում էր քեռին ու երգում տեղ–տեղ.
— Դառնամ գողդումին...
Ագգին ու տոհմին...
Ու նորից վիպում ու երգում հերթով
Իր ծերունական խզուած կոկորդով.
— Էնոր լէ ծծէ՛ր — լուսնակ էր ջուխտակ
Մեզի լոյս տալու...
Էնոր լէ ճակա՛տ — մէյդան էր, լաո՛,
Քուռկիկ ջալալու...

Եւ Նախոյ քեռու միամիտ մտքով
Ինչպէ՞ս անց կենար,
Թէ ինչքան պնար՝
Այնքան աւելի ինքը կը յիշուէր
Այն խեղօք սանից, որ յետոյ թէպէտ

Հազաւ սեւ վեղար, զարձաւ վարդապետ,
Բայց ուշք ու միտքը տուեց երկերի:
Նախայի մաքով ինչպէ՞ս անց կենար,
Թէ միշտ յիշուելիս՝ ինքը խեղճ քեռին
Կը կանգնէր կոպքին ինչ–որ ... վաղների:

Այո՛, վարդապետ, վիպը ծռելով՝
Այդ խեղճ ու կրակ անպրապէտ քեռին
Նայում էր կոպքից դառով վաղներին
Եւ պահանջո՞ւմ էր,
Թէ՞ ապաչում էր,
Որ դու քո գործով Սասնայ ծռեր–ով
Ջրատես նրա Նիբելունգներ–ին.
Զեռքի դէմ՝ բապուկ,
Շուրթի դէմ՝ բեբան,
Օպերայի դէմ՝
Քո նոր օպերան...

Քո ժողովուրդը՝ արեան ծովերում,
Նորոգուող վէրքի անյուր ցաւերում,
Իսկ նրա որդիք՝ պատմութեան մուժից
Գոռ գոչում էին իրենց յոյժ ուժից,
Պահանջում՝ յիշել գործերից իրենց,
Ցայդոց պատկառած փորձերից իրենց —
Կենաց ու մահու պայքարից արդար:

Այստեղ էր ահա, որ Դաւթի կոպքին
Գալիս էր կանգնում մի կարմիր վարդան
Ու հանում էր քեզ Պոլսոյ Պերայից,
Դէպի Ասարայր ու Տմուտ կանչում,—
Եւ քո ականջում
Ամբերդն էր հնչում
Այն հերոսական նոր օպերայից,
Որ այս անգամ էլ կոչւում էր Վարդան...

ՂՕՂԱՆՋ ՄՐՑԱԻԱՐՏԻ

Ես մեկ անգամ յոլթաբչաւով
Արշէն անցած կէս–Եւրոպան,
Այնուհետեւ նաւաճելով սիրտն Ասիայի,
Ծլացնելով նէյնիմական ու ասպային
Երկացաւի ծանրը նոպան՝
Հիմա նորից հրաւիրուեց նա Եւրոպա —
կանչուեց Բեռլին,
Յետոյ՝ Փարիզ:

Ականաւոր երաժիշտներ ողջ աշխարհից —
Ջմահալա՛ն, բարձրաճաչա՛կ, անմխիթա՛ն, —
Միջազգային Ընկերութեան Համաժողո՛վ:
Եւ սիւնազարդ սրահներում լուսաւոր
Իւրաքանչիւր ժողովրդի երգ ու խապկից՝
Զեկուցումներ,
Իւրաքանչիւր ժողովրդի պար ու տապից՝
Երգ — ցուցումներ:
Իսկ բոմանդակ ու բոպմատրի Արեւելքից՝
Մէ՛կը մեայն...
Ուրիշները, սրտի զորով,
Զեկուցման հետ բեմ են հանում
Նուագախո՛ւմբ, պարե՛կ, երգի՛չ:
Իսկ սա՛...
Ինքը մեկնաբանում,
Ինքն էլ ձեռքը ծոցն է տանում,
Ծոցն է տանում
Ու... զուրս հանում —

Օրկեստրի տեղ մխայն... մի պարզ ծխրանի վող
Եւ, փոխանակ մենակատար անհատների,
Ինքն է յանձնում իր չուրթերին ու մատներին,
Ու... մի փոքրիկ, փայտէ մի փող
Մէկ հնչում է օրկեստրային ամբողջ թափով,
Մէկ՝ դայլայլում ու դեղդեղում,
Մերթ ժայթքում է ու մերթ դեղում,
Մերթ կուտակում ու բարդում է,
Մերթ՝ խենթ հոսքը մատով նեղում,
Ուզածի պէս հունից չեղում
Ու վերջում էլ աւարտում է
Ինքը՝
    ինչ-որ հանդոյց-կապով,
Իսկ դահլիճը՝ ընդոստ ծափով:
Յետոյ՝ փողը ծոցն է տանում
Ու վերատին մեկնաբանում
Եւ, մի վայրկեան տալով դադար՝
Նորի՛ց դառնում մենակատար —
Ինքն է երգում սրբի ձայնով...

Ա՛խ, վարդապե՛տ, նորից այսօր
    Մաքերից՝ մէկ,
    Աչքերից՝ մուժ
Դու ցրեցիր,
    Աչխարհում մեզ
Դու պարզերես դարձրեցիր,
    Իսկ ինքըդ քեզ՝
Կրկի՛ն յաղթող մենամարտիկ,
Որ ծափերի տարափի տակ
Ցած է իջնում բեմից մարախ,
    Ցած է իջնում,
Որպէսզի նո՛յն այդ ձեռքերով,
    Իբրեւ հերոս —
    Դեռ կենդանի՛
Վեր բարձրանայ... պատուանդանին:

ԵՂԵՌՆԻ ՀԱՄԱԶԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ԸՆԴՀԱՏՈՒԱԾ

Ցրտապայից նա վերատին սիրով դարձաւ
Իր Գուսանին եւ խազերին
Իր Անուշ–ի նոր մասերին,
Իր Վարդան–ի պոռ բառերին:

Հնչիւններից պիտի կերտէր մի յուշարձան,
Որ հաւասար պիտի լինէր
Իր վեհութեամբ Սասնոյ սարին.—
Պիտի երգով ողբմի տար
Բաղդասարին, Սանասարին
Ու նզովէր Մարայ չարին.
Հորովելով Դաւիթ տլան
Պիտի մենակ՝
անեղ–անլուծ՝
Գեղչուկի տեղ դուքան քաշէր,
Յետոյ՝ դօրքին հանգիստ թողած,
Մարայ տիրոջ սիրտը խաշէր...

Պիտի՛, պիտի՛...

Վարդապետի
Գիշերածալ վեղարի տակ
Բացուում էին լուսաթաթախ առաւօտներ՝
Մէկը մէկից պայծառ ու տաք,
Մէկը մէկից վառ ու յստակ:

Կրծքի ներքոյ սիրտը թինդուն
Կարծես անվերջ նոյնն էր պնդում՝
Երաժշտի՛ր։
Ամենակուլ խորշակի դէմ ու երաշխի՝
Երաժշտի՛ր։
Թշնամու դէմ, նրա նեղման,
Օղակի դէմ նրա սեղման,
Ընդդէմ նրա երդի, ձայնի, նրա չեչտի՝
Երաժշտի՛ր։
Մինչեւ պահըդ հրաժեշտի՝
Երաժշտի՛ր։

Երաժշտում եւ դեռ պիտի
Ցորդաբեխուն երաժշտէր,
Վիշտ երգելով՝ ցրէր վշտեր,
Յոյս երգելով՝ հաւատ չեչտէր,
Սուտը հերքած՝ ճիշտը ճշտէր,
Բայց... մի ահեղ պիչերուայ մէջ
Սրիւն հապան կանաչ դաշտեր,
Եւ յոյս, հաւատ, կեանք ու անուրջ —
Օր ցերեկով ողջը դարձաւ մի վատ երազ։

Սկիզբ առաւ աշխարհակուլ մի պատերազմ...

ՂՕՂԱՆՋ ՎԵՐՋԻՆ ԳԱՐՆԱՆ

Ամէնը առաւ աչխարհակուլ մի պատերազմ,
Իսկ գարո՛ւն էր...

Լեռնաչխարհի կատարներին
Ձիւնը՝ կիսուած պատառների,
Արտասուում էր գլուլ-գլուլ,
Շրջանցելով լեռ ու բլուր,
Առու դարձած՝
Հոսում էր ցած
Այնքա՛ն սիրած ու չափրած քարձունքներից,
Եւ խառնելով պուտ-պուտ արցունքն արցունքներին՝
Հովիտներում լայն էր փոխում հեծկլտոցի
Ու գալարքով վիշապ օձի
Ձոր ու կիրճ էր իրեն պցում,
Դառնում էր գետ, մի գետ ելմա՛ն,
Ու չէր գտնում խօսքեր նեղման՝
Ծանր խաբուած կնոջ նման...

Ողջ աչխարհում՝
Մահ ու արիւն,
Իսկ գարո՛ւն էր...

Ծաղիկները են աչքով անում այստեղ-այնտեղ,
Եւ ամէն թռուփ, ամէն ցօղուն

Դառնում է լաւ մի լուրով, դառնում առել՝
Երկուն քամու մառերի տակ:

Օրը՝ օրին, եւ օդն արդէն
Մեղմ է այնպէս, հոգն այնպէս տաք,
Ասես համայն աշխարհով մէկ
Մի մայր բարի,
Սիրապորով
Մանուկ հոգին է ջերմացրել
Իր բերանի տաքուկ պոլով...

Մարեմ՛ը,
Ջարդե՛ը,
Հո՛ւր ու հրդեհ,
Արնակոլոլ հազա՛ր սրտեր,
Իսկ դարո՛ւն էր...

Եւ չոլակաթ առաւօտներ
Ջինջ ցօղով են թրջում ոտներ,
Թաւ ոտաբոթով ծառեր դուրսում,
Ծաղիկներով ու կանաչով
Պճնում ոչ թէ լոկ արօտներ,
Սարահարթներ,
Այլ մինչեւ իսկ ոտնահարուած արահետներ...

Ամէնուրեք քոյրեր ու մայր
Հարազատի մահ են կոծում,
Իսկ մի թռչուն յիմա՛ր-յիմա՛ր
Ինչ-որ ուրախ երգի համար
Ողջ ժամանակ ձայնն է փորձում...

Ամէն ծառից՝
Նոր մի տաղիկ,
Ամէն քարից՝
Նոր մի խաղիկ.

Ու դաշտերում՝ չաղն է չողում,
Ու ծալիկները են վողվողում,
Էս մի համեստ ծնկածալիկ
Աչխատում է ոտքի ելնել՝
Մի կերպ չակել ծռուած ցօղունն
Ու...ո՛չ մի կերպ չի յաջողում...

ՂՕՂԱՆՋ ՆԱԽՃԻՐԻ

Ինկածաղկի պէս
Մեզ էլ չյաջողուեց ոչ մխայն նորից
Շահել վեցդարեայ ցօղունը մեր կոր,
Այլ բարբարոսի նոյն դաժան ձեռքով
Ցօղունն այս անգամ արմատից հատուեց՝
Հայկական հարցից Թուրքիան ապատուեց
Հայաստան երկրում հայ չքաղնելու
Մի ահեղ ելքով,
Որ ոչ լսուած էր, ոչ էլ տեսնուած
Մարդկային ցեղի
Երբեւէ կրած անպատուութեան մէջ
Եւ մինչեւ անգամ իրենց Թուրքերի
Արիւնով հունցուած սեւ պատմութեան մէջ։

Մի ո՛ղջ ժողովուրդ մէկ–մէկ Թրատել,
Մի ամբո՛ղջ անտառ արմատից հատել...

Եւ կոյսեր, որոնց ծոցի մէջ լուսէ
Լուսնի լոյսն անգամ ծածուկ չէր հոսել,
Որ երկչոտ էին, ինչպէս եղջերուն,
Որ աննիւթ էին, ասես յօրինուած
Մի հովուերգական վէպի էջերում.
Աղջիկները,

Որոնք բառից անպարկեշտ
Ու չոյիչ խօսքից
Երկնքի նման բռնկւում էին չիկնանքով ոսկի.
Ամօթխա՛ծ, ջաքո՛ւր, լուսաւո՛ր կոյսեր,
Որ Ֆրանսերէն անվիլ պիտէին
Լամարթին, Վիկտոն, Ալֆրեդ դէ Միւսէ
Եւ անդլերէն՝
Թենթ Օֆելիայի
Տրտում երգն էին արցունքով ջրում,—
Օֆելիայի պէս այժմ ցնորուած՝
Հելագաբուածի իրենց ճիչերում
Դարձեա՛լ մոռանալ չէին կարենում
Ա՛յն դժոխքը սեւ
Եւ բռնաբարող ա՛յն ասկեարներին,
Ա՛յն էնիչերուն,
Ա՛յն անասունին խօսուն, բայց անբան,
Որի բութ գլխում
Եթէ խլւում — չարժւում էր մի բան,
Ապա մարդկային միտքը չէր,
Օ ո՛չ,
Այլ միայն... ոճի՛ր:

Մարդիկ, որ չունեն մարդկային ոչինչ,
Մարդիկ, որ մարդ չեն,
Այլ աւելի չուտ մարդակերպ կապիկ,
Որ եօթ տարին մէկ օճառ չեն տեսնում
Եւ եօթ տարին մէկ չեն վոխում շապիկ,—
Հիմա ամէնուր
Նորապսակի սուրբ առապատան են պղծում անպատճ
Հայոց մայրերին անում անպատիւ,
Պնդուկի նման՝
Քարերով ջարդում
Գանգերը նրա՛նց,
Ոլքեր Աստծու պէս

Հրաչքները էին օրէցօր կերտում
Ու եթէ Աստծուց տարբերւում էին,
Ապա այնքանով,
Որ նա անզոյ էր,
Իրենք՝ իրական,
Եւ հիմա սակայն
Ձեռքն անասնական
Ջնջում էր եւ մ՛յդ տարբերութիւնը,
Ջնջում էր քարո՛վ.
Հայոց աչխարհի հայկական քարը
Ջարդում–փշրում էր հայոց քանքարը...

— Ո՛վ արդարութիւն,
Թող որ ես թքեմ ճակատին քո լաց...—
Գոչել էր մէկը,
Որ հիմա նոյնպէս քարով էր ջարդուել,
Գոչել ո՛չ հիմա,
Այնժամ էր պոչել,
Երբ խուժանն այս նոյն,
Արիւնով հարբած,
Գազանի նման,
Դրդուելով միայն վայրենուն յայտնի
Իր պատճառներից
Ո՛րերորդ անգամ մոխիր էր թողնում
Մեր արտ ու այգուց,
Մեր տաճարներից:
Բայց հիմա՛, հիմա՛,
Երբ կոտորա՛ծ չէր,
Երբ ջա՛րդ չէր,
Այլ մա՛հ —
Մահ համատարած եւ համապլային,
Մահ ծերի՛,
Մանկա՛ն,

Խելքի՛,
Հակայի՛,
Երբ մահուան մըտիկ,
Երբ մահուան բուք էր,
Այլեւս հիմա ո՞րտեղ էր Թուքը,
Որ արդարութեան ճակատը լաքէր:
Ա՛խ, չորացել էր հայոց աչխարհի
Բերանն ու բուկը:
Էլ ինչպէ՞ս թքել
Եւ այդ ո՞վ Թքէր,
Թէ հայոց երկրում էլ մա՛րդ չէր մնում,
Բամանդակ մի ապր Թէ կուլ էր պնում
Թուրք եաթաղանի պատրոյ պոպպատին,
Հայոց հայելիք Տիպրիս — Եփրատին,
Սեւ արաբների չէկ անապատին —
Օ՛րը ցերեկով,
Ո՛չ Թէ աննկատ:
Եւ ունեցե՞լ էր արդարութիւնը երբեւէ ճակատ:
Օ ո՛չ,
Նա ունէր մխիթյան քամակ,
Քամակ մի խելօք,
Որ չուռ էր առել
Մի բնաջինջուող հինաւուրց ապրի՝
Նախապէս նրան պրկելով պարկով ու փրկով բաղկից:
Ու Թէ կար ճակատ,
Դա ռուս—ասճկական այն ճակատն էր լոկ,
Որ մօտենում էր՝
Աչես խելով
Կատարուղնների,
Կարուղների ահաւոր ճիչը,
Որ մօտենում էր,
Սակայն...

Եւ սակայն նրանց մեջքն ի՞նչ էր,
Անասուա՛ծ Աստուած,

Ինչո՞ւ էր արևում այդքան անօրէն
Եւ ահեղ մի դատ:

... Կար երկաթուղի,
Որ պիտի անցնէր Բեռլինից–Բաղդադ:
Անապատներով այն արաբական,
Որտեղ կանաչը
Կայարանների ղէմքը չի պատռում,
Ուր չկան չէներ,
Աւաններ ու տուն:
Մեղքը հայի՛նն էր, որ յօժարակամ
Չէր դնում ապրի չէկ անապատում,
Չէր լքում բնիկ հայրական տունը,
Իր բազմազաբեան չէնն ու աւանը՝
Ամուր կարինը, անառ Սասունը,
Իր ծոցուցո Մուշը, պոպաճ իր Վանը...

...Բուլանղակ մի գար, գարուց աւելի՛,
Տենչանքն էր կիզում ռուսաց նաւերին.
Իրենց ձնառատ ու պաղ հիւսիսում
Երազում էին, կարօտով յիշում
Լուսեղ արեւելք, արեւոտ հարաւ,
Ու խենթ տափանքի խօսք էին բանում
Այն Գարպանելին՝ պչրուհուն պառաւ,
Որ չէր դիմանում
Առանց հոմանու,
Բայց սրանց — ինչո՞ւ — թողնում էր ծարաւ:
Նապը՝ նապ, սակայն ... յետո՞յ, ի՛նչ դառաւ,
Եւ ահա ռուսներն էլ չէն դիմանում:
Մեղքը հայի՛նն էր.
Նա թուրքի աչքին այլ բան չէր թւում,
Քան յաջող քամի
Եւ մի առագաստ, որ ինքն է պարզում
Մոսկուի կայմին...

... Մտտոռներըն այս թանկ–էժան գարում
Նաւթի փոխարէն, ի ցաւ խելօ հայի,
Դեռ Անգլիայում ջուր չէին վառում:
Բոլոր ծովերը՝ նո՛յն Անգլիային,
Մինչդեռ նաւթի ծովն, ա՛յ, Մուսուլումն է:
— Եւ մեղքը ո՞ւմն է,
Իհա՛րկէ հայինն...

...Արդէն օսմանեան կաւէ հսկայի
Ծեփն է ճաքճքում
Ու մէջքը ճկւում՝
Բանականութեան տաքուկ չոլերից.
Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ
Պոկուել են նրա կաւէ կողերից:
Նոյն աննեղելի մաքին է հակւում,
Նոյն ախտով նաեւ հայն է վարակւում՝
Իր մասն է ուզում իր խակ հողերից,
Գոռչ է ուզում իր այն փողերից,
Որ յափշտակել
Եւ ճչալ ուզող բերանն են յետոյ
Քացիով վակել:
Նա պահանջո՞մ է,
Թէկուզ ապերասում կամ անբրջո՞ւմ է,
Մեղաւո՛ր է նա,
Էլ բանն ինչո՞ւմն է:
...Քերծում են եղունգ,
Պատունդ են քաչում,
Վանք կեղտում ժայռից,
Քարից նուռ տաչում,
Դարպասի աչքին յօնք–կամար քաչում,
Արճան էն ձուլում, չինում ապարանք:
— Եւ մեղաւոր են այստեղ էլ նրանք...

... — Հաչիչ չեն ծխում,
Ձմռում են վինի,

Ապրում անթախան եւ առաքինի,
Զեն պահում հարեմ,
Ոչ էլ նեղքինի,
Եւ չունեն մոլլա,
Որ կապի չալմա.
Նրանց քեչիչը վեղարաւոր է:
— Եւ... մեղաւո՛ր են...

...Զեռքի հետքերը նրանց հայրերի
Կնիք են դրել այս նոյն վայրերին՝
Իբրեւ սեպագիր
Կամ չաղախ ու պիր,
Իբրեւ չիրմաքար
Կամ որմանկար,
Իբրեւ մագաղաթ
Կամ թուներ–ջրանցք...
—Եւ ո՞ւմն է մեղքը, —
Իհա՛րկէ նրանց...

...Ինչպէ՞ս չկարել այն կսկծոդը չար,
Որ ցաւից յանկարծ կարող է ճչալ,
Կարող է հայցել փրկութիւն ու ճար...

...Պէտք ապաւորել այն լերը աչքի՛դ էլ,
Որ երազանքից չոդում է պայծառ
Եւ կամ մատնում է ապրած կսկիծը
Ու դրանով իսկ դառնում է պատճառ,
Որ օտարները... լացոդին խղճան՝
Տեսնելով նրա ալի արցունքը...

...Ինչէ՞ս չջարդել յանցաւոր ծունկը
Եւ այն մեղսակից յամառ ամմունկը,
Որոնց յենուելով՝ մարդը արնաքամ —
Եւ գազա՛նն անգամ —
Ուզում է դուրս գալ ժանտ գերութիւնից...

Ուրիշ աւելի յանցաւոր բան կա՞յ։
Դեհ ևկ, մի՛ ելնի համբերութիւնից,
Դեհ ևկ, թուրքօղլի, յաւից մի՛ վընդայ...

...Մարդիկ դիտէին սիրել ուատել,
Գիտէին խորհել ու համեմատել
Խոյս տալ յաւերից,
Դաւերից ծլպտեալ,
Ծարաւել լոյսին,
Աբեւին ժպտալ։
Թէ անսահման էր նրանց տանջանքը,
Անծայր էր նոյնքան նրանց անրջանքը։
— Ահա եւ նրանց ծանր յանցանքը...

...Ունէին նաեւ մէկ ուրիշ յանցանք,
Որ ահաւոր էր։
— Գիտէ՞ք թէ որը.
Երբ մարդ ո՛չ մի կերպ չի կարողանում
Ընդմիշտ մոռանալ մի յիմա՛ր անուն՝
Ի՛ր իսկ անունը եւ ազգանունը։
— Ի՛նչ յանդգնութիւն, դուք հասկանո՞ւմ էք...
Եւ նա ուզում է նոյնիսկ չդատուե՞լ,
Խուսափել արդար կարդ ու կանոնի՞ց։
Ուրեմն՝ պիտի ա՛յլ կերպ ապաւուել
Այդ լերը անունից եւ ազգանունից։

Իսկ դա անունն էր ո՛ղջ մի երկրի,
Ո՛ղջ մի ազգ էր դա կրում ու պահում...

Եւ քաղաքակիրթ այն Եւրոպայում,
Ուր ոչ ծանօթ էր հայոց հին գրին,
Հայոց պատմութեան ու պատմագրին,
Դառնում է դոկտոր ու պրոֆեսոր՝
Դեռ օրը նոյնիսկ չդարձած կէսօր.
Եւ քաղաքակիրթ այն Եւրոպայում,

Ուր մարդկայնութեան փութանց նոպայում
Շատերի համար դարձել էր փեչակ
Մեղ էրկի՛նք հանել՝
Հային անուանել
Ասիական մթնում պիտութեան մշակ,
Է՛լ ջահ, է՛լ կերան, է՛լ միակ վարոս,
Իսկ թուրքին կոչել բիրտ ու բարբարոս՝
Իրենց համեմատ այնքա՛ն վայրենի,
Որ պէտք է նրա հողը հայրենի
Վաճառքի հանել
Կամ մէջ–մէջ անել,
Որպէսզի... հողը չմնայ խոպան:
Հիմա լուսաւոր այդ նոյն Եւրոպան
Առանց չիկնանքի այնտեղ էր հասել,
Որ ժառանգներին արնոտ սուլթանի
Դասեր էր տալիս՝
եղեռնի՛ դասեր,
Դասեր նախճիրի՛, բարբարոսութեա՛ն՝
Իրեն պահելով... դէրը լրբութեան:

Այդ նոյն Եւրոպան
Նման չէ՞ր հապա
Հարբած — արնախում այն թուրք պինուրին,
Որ ձանձրանալով պառերից նարդու
Կամ թուղթ խաղալուց,
Իր թուրը դնած հայ յղի կնոջ
Սուրբխորան փորին՝
Գրաղ էր պալիս, թէ ի՛նչ կը բերի.
— Աղջի՞կ, թէ տղայ,—
Եւ մանկաբարձի նչտարի տեղակ
Թուրն էր կատարում կեսարեան հատում...

Իսկ նա կին չէր, ո՛չ, այլ Մայր Հայաստան,
Որի սրբազան ու տաք արվանդում
Մի լոյս մանուկ էր սկսում խաղալ,

Մի վահաղնակերպ–դաւթաղէմ տղայ,
Որ յղացել էր փրկութեան լոյսից
Ու անուել էր մեր անմոռուկ յոյսից՝
Այն ճանապարհին, որ զարաւոր էր,
Ծանր ու խորդուբորդ:

Բայց Եւրոպան էլ ունէր ճանապարհ
Եւ, որպէս ճամբորդ,
Նա... կռուացրեց իրար հետ չնեը,
Որ իր՝ ճամբորդի բանը յաջողի:
Իրօք· ի՛նչ էլ որ լինէը–չլինէը,
Բայց պակաս չկար չան պէս հաչողի:
Ընդդէմ թուրքական ահեղ վոհմակի՝
Մեր չունն էլ քոսոտ, բայց սպառնագին
Ցանցառ փուչերն էր հա՛ փչաքաղում:
Գելխեղդ դամփռուի դեր էր նա խաղում,
Մինչդեռ իսկապէս առնապահ էլ չէր,
Այլ՝ աւելի չատ՝ միայն առաքանդ:
Տէրն ընկած տեղը նա պիտէր հաչել,
Սրա կամ նրա փէչերից կառչել,
Եւ խեղդել պիտէր՝ միայն... առնական·
Հաւ ու ճուտերին:
Տէրն ընկած տեղը նա չուն էր քսու,
Որ պօրեղին է ինքն իրեն քսում,
Փաթում ոտերին:
Բայց ամենից չատ ու ամենից չուտ
Նա իր բուվանդակ արած–չարածով
Մի չուն էր անտէ՛ր, փողոցի՛ մի չուն,
Որ... պոչ է մնում լոկ թոցըրածով...

Եւ այս չնային զզուբռատուքի մէջ
Մի ո՛ղջ ժողովուրդ
բնի՛կ,
տեղակա՛ն,
Շան թաթերի տակ քիչ մնաց կորչէր·
Մազ մնաց դառնար թղթէ տեղեկանք·

Մի ազգ, որ կուռքեր չատ էր ճանաչել,
Բայց որի... նոյնիսկ տառեմը չուն չէր,
Այլ եզը հերկող,
Այլ ջուրը երգող
Եւ ամպրոպածին փողը՝ եղեգան...

Ու երկրաշընդի այն ծանօթ մառում,
Որին Հայաստան, Հայք էին ասում
Փարաւոններից մինչ Պուանկարէն,
Հիմա Օսմանի թոռները բռի
Վիլհելմ կայսեր հետ ուղեցին քերել
Դարերով հնչող «Հայաստան» բառի
Բոլո՛ր տառերը,
Նրա ապագան,
Մշահոտ ներկան
Եւ մինչեւ անգամ
Անցած դարերը:

Եւ համարեայ թէ իրօք քերեցին:
Իսկ Գլադբաոն —
Լոյդ —
Վիլսընը
Զխանգարեցի՛ն...

ՂՕՂԱՆՋ ԵՂԵՌՆԱԿԱՆ

Քանպարե՞լ։ Ինչի՞ համար…

Գարուն էր։ Չեկած ամառ՝
Փուլ եկաւ երկնակամար,
Չուն մաղեց՝ մեր բաց պլխին,
Չուն մաղեց՝ կրակի՛ պէս…
— Գարուն ա, ձուն ա արել…
Գետերը մեր երեսման
Հոսեցին՝ երակի՛ պէս…
— Արուինը ջուր ա դառել…
Ջորերը չիրիմ դարձան,
Վիհերը՝ գերեզմանոց.
— Ջուրը մեր տուննն ա տարել…
Ամէն քար՝ լուռ մահարձան,
Ամէն տուն՝ վառման հնոց.
— Բնաւեր հաւ ենէ դառել…
Ինչքան բառ՝ ո՛ղջը մըրմունջ։
Ինչքան երգ՝ ո՛ղջը լալով.
— Ջուլում էր, զուլո՛ւմ, լաո՛…
Թրի ղէմ, սրի, հրի՝
Լոկ մանպաղ, լոկ բահ ու մաճ.
— Տնաւե՛ր–բնաւե՛ր լաճ…
Մեր հողը, մեր հայրենին,
Մեր երկիրն ամայացաւ.
— Սե՛ւ կապիր, սեւսիրտ մարէ…

Հինաւուրց առհմիկ մի ապէ
Ջմեռաւ, այլ... մահացաւ.
— Գարուն ա, ձուն ա արել...

Գարուն էր: Ամառ եկաւ,
Ջաղ հանեց ձորում կաքաւ,
Իսկ հայը ղրկուեց ձապխց,
Իր պոռթկան թոնրի տաքից,
Իր մօրից, հօրից, եարից,
Իր բնից ու աչխարհից.
— Գարուն ա, ձուն ա արել...

...Ա՛խ, ինչպէ՞ս, ո՞նց մոռանալ
Աբհաւիրքն այն օրերի.
— Աշխարհում ով մոռանայ՝
Ջուխտ աչեով թող բոդ բոռանայ...
Գառնաբաժ, հովիւ, նախրորդ
Եա չեկան առը-ձորերից...
Կէսօրին էլ ո՞վ երդէր.
— Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում...
Հնձուորը արտում մորթուեց
Իր ձեռքի սուր մանգաղով...
Խեղճ հարսը էլ ո՞նց երդէր.
— Բաղուորին հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում...
Ձկնորսը վանայ ծովում
Ձըփրկուեց ճարպիկ լողով...
Աղջիկը պո՛ւր էր կանչում.
— Իմ ծամթել տամ լողուորչուն...
Երկրի մէջ մարդ չըմնաց՝
Մարդ թագէր մարդու նման...
Ա՛խ, մնաբ մէ՛կը գոնէ
Ու կանչէր.
— Դլէ եամա՛ն...

Ա՛խ, ինչպէ՞ս, ո՞նց մոռանալ
Աւհաւիրքն այն օրերի·
— Աշխարհում ով մոռանայ՝
Ջուխտ աչքով թող ծոռանայ...

...Ջահերը վառ մնացին
Ժամերգուող եկեղեցում,
Ժամհարին կախ տուեցին
Պարանից զանգակատան...

Ջաղացից աղուն բերող
Ալրոտուած խեղճ դիւղացուն
Իր սայլը դադար դարձաւ,
Ալիւրը՝ արնոտ պատան...

Մայրն ընկաւ՝ ծիծը թողած
Իր թըմփլիկ մանկան բերնում,
Ծծի տեղ ցից խրելով՝
Խեղդեցին մինուճարին...

Տատն ընկաւ՝ ձեռքը մեկնած
Կըչկըչան հաւի թառին —
Երբ հիւանդ թոռան համար
Խորտիկ ճուտ էր բռնում....

Կալի մէջ պապիկն ընկաւ —
Իր ոսկէ թեղն էր էրնում,
Որպէսզի տուրքը թուրքին
Օր առաջ չուտ վճարի...

Ով ծաղիկ հաց էր թխում՝
Ծորովուեց թոնրի ծխում...

Ով հասել ուխտատեղի,
Վառել էր մոմը ղեղին,

Մամի դէմ լինել էր ծունը
Ու հայցում էր Աստըծուն,
Որ բախչի մի լաճ տղայ,
Իր արեամբ մոմը մարեց՝
Զաւարտած «ՏԷՐ, քեզ մեղա՛»ն...
— Գարուն ա, ձուն ա արել...
...Ծոցեցին ու ըընկեցին,
Հատեցին հասատ ու բարակ,
Յօշեցին ու տանջեցին,
Փշրեցին, տուին կրակ,
Վաթեցին արիւն–արցունք,
Ներկեցին ճոր ու բարճունք,
Քանդեցին երկինք մի լուրթ,
Մորթեցին մի ժողովուրդ,
Հայտառատ մի ողջ աշխարհ
Սարքեցին փշրանք–նշխար,
Սո՛ւր նշխար՝ չա՛ն բերանում,—
Ուզեցին մէկ հայ թողնել,
Եւ այն էլ ... թանգարանում...
— Գարուն ա, ձուն ա արել...

ՂՕՂԱՆՋ ԱՓՍՈՐԻ

Ինչո՛ւր Աստծուն պատահեցին...

Ալա՛ն-թալա՛ն,
Կեռ եաթաղա՛ն,—
Ում որ պէտք էր՝ փոդոահեցին,
Գազանաբար ճղոահեցին,
Ոսկորները սրածելով.
Քարափիններից վար ածելով՝
Դիակներով խեղդուողների
Ծանրացըրին հոսք ու հոսանք,
Ջհարցնելով մանուկ ու ծեր:
Եւ ո՞վ կոծէր,
Կուրծքը ծեծէր.
— Էս ի՛նչ բեափուր դարի հասանիֆ...

Ինչու՞ Աստծուն աղաչեցին...

Թէ բիւրաւոր հայ խաչեցին,
Հազարաւոր այր ու կանանց
Անդող ձեռքով տեղահանած՝
Քշեցին... ո՞ւր.—
Դիեր ալ-Զոր:

Մերկ ու բոբիկ, խեղճ ու անպօր՝
Անցան նրանք աւաղներով
Արաբական անապատի —
Մի մահուղի, ուր ամէն քայլ
Դիակներով ուղենչուեց,
Եւ նորացաւ նո՛ր Գողգոթան՝
Ահագնացած տասնապատի՛կ...

Մեր փրկութեան աղաղակներն անցան ի դուր,
Ի զո՛ւր հնչեց ողջ աշխարհով մի ահազանգ,
Որ լոկ դարձաւ, վերջ ի վերջոյ, թառանչ մի սուր—
— Էս ի՛նչ fեաֆուր դարի հասաւիf...

...15 թիւ: Ապրիլի 10...

Ապրիլական արբշիռ բոյրեր,
Գարնանային ծաղկածլում,
Կանաչների չքահանդէս,—
Եւ... ծաղկաբոյր դիշերուայ մէջ
Հեռուներից մօտենալով
Գաղտագողի, ծածուկ, անտես,
Խորշակը նոյն,
Որ տարել էր միլիոն Հայեր,
Խորշակը նոյն անցաւ նաեւ
Պոլսոյ բոլո՛ր հայ թաղերով՝
Իր հրեղէն ոտների տակ
Խաչխչելով ու թաղելով
Վերջին յոյսի չունչը մեր տաք...

Ահե՛ղ դիշեր,
Որ բորբ ներկուեց ո՛չ արեւով,
Այլ մեր արեա՛մբ,
Ու կողոպտեց խորաններըը հայ կաճառի,
Խորաններըը հայ դպրութեան սուրբ տաճարի,
Բոլոր ճիւղերը կտրատեց

Հայ հանճարի
Ծաղկուն ծառի,
Ու մատեանից հայ մեղեդու
Ամենավառ էջը հատեց...

Եւ անուննե՛ր, որոնք երէկ
Հնչում էին փաղաքչական մանկիկնևրով
Մերձաւորի ու մտերիմ բարեկամի սիրոյ շրթից
Եւ յիրաւի հպարտութեան տրուփ պոկում
Մի բովանդակ ժողովրդի լեցուն սրտից.—
Թէ կեանք էին՝ հիմա յանկարծ
Մի դիչերում դարձան լեղենդ,
Ապրող մարդուց յանկարծ դարձան
Մի մտովին կերտուած արձան...

Ա՛խ, պերայի պանկալթի թաղ...

Այս փողոցի ծանօթ մայթով
Երէկ անցաւ Սիամանթոն,
Որ հանդիպի վարուժանին՝
Անց կենալով Կոմիտասի տան առաջ սեմը,
Եւ հնչիւնի ու խօսքերի ձեւ առանայ
Այն ամէնը, ինչ կատարեալ ու վսեմ է,
Անանձնական ու դեղեցիկ:

Ա՛խ, Գալաթիոյ եռատոնաբար եկեղեցի...

Քո դարաւոր գմբէթի տակ
Իրիկնային ժամերգութեան առաջ պահերին
Պատարագիչ Կոմիտասին չէ՞ որ երէկ
Լսում էին հիացմունքով
Զոհրապ, Սեւակ...
Քանքարալից հազար դլուխ —
Փոքր ու աւագ,
Մխահաւաք՝

Հակառակ էին հայ մեղեդու սրբութեան դէմ
Ու յղանում նոր մեղեդիք՝
Հնչիւններո՛վ, խօսքո՛վ, դրչո՛վ,
Արձանակերտ նրբին մուրճո՛վ,
Երանդների պնակի՛ մէջ,—
Ցեառդ, մէկտեղ ակմբուելով
Պանկալթիի այնքան ծանօթ
Ու սիրելի տնակի մէջ՝
Խնդրում էին վարդապետին
Երգել կռունկ կամ խնկի ծառ,
Երգել Ջինար ես...
— Ջինար ես՝ կեռանալ մի...—

Սակայն ինչպէ՞ս չկեռանաս,
Երբ կացինն է բունըդ տաշում,
Երբ սղոցն է ճիւղքըդ մաշում,—
Դէ՛, արի եւ—
կեռանա՛լ մի:

Ի՞նչ.
— Մեր դռնէն հեռանալ մի՞...
Ա՛խ, ո՛ր չունը կը հեռանար:
Իսկ եթէ չուն, գայլ ու գազան
Կամ անխնայ սրի քաշում,
Կամ աքսոր են բռնի քշում
Ամբողջ մի ազգ՝ աստա՛ղն-աստա՛ղն,—
Դէ՛հ, արի եւ —
...Հեռանա՛լ մի:

Ո՞նց.
— Եա՛ր, Աստուածդդ կը սիրե՞ս...
Բայց ո՞ւր է, ա՛խ, ո՞ւր է Աստուած:
Եթէ կոյր ու խուլ է Աստուած,
Եթէ «Գթա»ն դուր է տուած,
Նման Աստծուն ո՞նց կը սիրես...

Ի՞նչ.

— Հեռու ես՝ մոռացո՞լ մի...

Ո՞նց մոռանալ: Ե՛կ մոռացիր,
Որ ապրիլեան այն ահաւոր
Ու ոճրապարտ լուսաբացին
Բարբարոսի խուժդուժ ձեռքեր
Սուրբ խորաններ կողոպտեցին՝
Խորաններըր հայ կաճառի,
Հայ դպրութեան սուրբ տաճարի,
Բոլոր ոսաերն անդթօրէն կտրատուեցին
Հայ հանճարի
Մաղկուն ծառի,
Սուրբ մատեանիդ հայ մեղեդու
Բոլոր էջերն ամենավառ
Դարճան մոլի հոդմին աւար,
Մի դիչերուամ պոկոտուեցին ու գաոուեցին,—
Շէկ աքսորի սեւ վիակուղուդ չազատուեցին
Ո՛չ մի հանճար,
Ո՛չ մի տաղանդ,
Ո՛չ մի քանքար՝
Ով որ Պոլսում եղեռնական այդ զարնան կար..

Մարդիկ, որոնք կամքով վերին
Անցնում էին եւ պիտի որ անցնէին դեռ
Իրենց ճամբան անմահութեան ու սխրանքի,
Բոլո՛րը մէկ՝ հիմա արդէն
Կարում էին ուղին մահուան,
Ճանապարհը աքսորանքի...

Մի–մի քուրմեր՝
Լեցուն բանիւ ու մեղեդով մեհենական,
Հիմա պիտի ըմբոչխնէին
Թոյն ու լեղին դեհենական....

Դե՛հ, բերա՛ն բեր,
Որ չթաքի,
Եւ քարէ սիրտ,
Որ չճաքի։

Ու ձկտում էր ճանապարհը աքսորանքի.
— Քելէ՛–բելէ՛, բելբի՛դ մեռնեմ,
Քո գովական խելբի՛դ մեռնեմ...

Ձգտում էր նա հայ բրդացած դիակների ստորոտով,
Միջահատուած մանուկների թաղում հայցող բլրի մօտով...

Մարտիրոսուած հայ մայրերի կոնքերը սուրբ
Ուզում էին ամօթն իրենց
Անապատի փոչով ծածկել,
Դեղին փոչո՛վ,
Ո՛չ թէ փէչով,
Որ եւ չկար,
Ինչպէս չկար ո՛չ սրբութիւն,
Ո՛չ էլ Աստուած...

Լլկանքի մէջ նահատակուած
Անմեղ կոյսեր,
Ու լոյս հարսեր,
Ձանուում էին լանջերն իրենց
Ծածկել հողով անապատի,
Դեղին հողո՛վ,
Ո՛չ թէ քօղով
Որ եւ չկար,
Ինչպէս չկար ո՛չ սրբութիւն,
Ո՛չ էլ Աստուած...

Դե՛հ, չլթո՛ւնք բեր,
Որ չանիծի,

Դե՛հ, բեր բռունգք,
Պրկուած կռո՛ւի,
Որ չդառնայ քենայարոյց կրքի խոյանք
Ու մխճուի երկնքի մէջ՝
Իբրեւ նպո՞ւք,
Ո՛չ, ի՛նչ նպուք —
Իբրեւ Աստծու եւ երկնքի լիրք հասցէին
Մի առնական թռունդ հայհոյա՛նք...

Իսկ աքսորի ճանապարհը վախճան չունէր:
— Գելէ–գելէ՛, քերնի՛դ մեռնեմ,
Գո աննուշիկ ձէնի՛դ մեռնեմ...

Ամբարակուած հայ չէնեբից,
Իբրեւ նշան կենդանութեան,
Ահապարհուր ոռնում էին անբուն շներ՝
Ցիմարաբար չըմբռնելով,
Որ այսուհետ
Շունը մարդուց աւելի է գերապատուած
Նրանց կոլմից,
Որ կոչւում են մարդ ու Աստուած:

Բեկուած անե՛ր,
Այրուած չէնե՛ր
Եւ մարդկանցից գերապատուած անասուն չնե՛ր,
Որ երէկուայ իրենց տիրոջ
Լուռ դիակն են նախ հոտոտում,
Ոռնում՝ կարծես այրող ցաւից,
Ոռնո՛ւմ, մնպո՛ւմ,
Մէ՛կ օր, երկո՛ւ —
Յետոյ՝ մղուած ծանր սովից՝
Երէկ իրենց կերակրող ձեռն են ուտում,
Գոմաոցով իրենց տիրոջ դէն յօշոտում...

Իսկ աքսորի ճանապարհը վախճան չունէր,
Այլ հանդրուան...

— կայնի՛ր, կ'ըսեմ, կայնի՛ր, ո՛ւշ է,
Ոտքդ բռքիկ՝ ճամբէն փո՛ւշ է...

Աքսոր քշուող մէկ այլ քարվան,
Մէկ այլ վայրի հրամանով,
Մէկ այլ աեղում
Պառկոտել է իրար կողքի:
Եաթաղանի պաղքոց չոլքից
Զո՛ւր ես դոցում աչքերը քո, խե՛ղճ Վարդապետ,
Դու չես նայում, բայց տեսնում է Սիամանթոն,
Որ կողք–կողքի պառկածներին
Փողոտում են մէկ–մէկ, հերթով՝
Դեռ չսպանուած թշուառների
Ահից սառած
Աչքի առաջ:
Չէ՛, Վարդապե՛տ, չե՛ն փողոտում,
Այլ ճղոտում
Ու ճղելով կիսակենդան՝
Դուրս են թափում
Միայն նրանց...ապիքները:
Ի՞նչ հասկանաք:
Չէ՛ք հասկանում,
Թէ կիսամեռ այս հայերի ապիքներով
Ինչի՞ համար, ի՞նչ է անում
Շնաբարոյ այս խուժանը,
Որ դորձում է մեծ եռանդով,
Որ քրքրում ու տնտղում,
Ապիքներում... ի՞նչ է պեղում:
Տատամսելով ուսն է թոթուում
Մահատիպար Սիամանթոն,
Ու Սեւակը Զոհրապին է
Հարցնում հայեաց աչքով անում:
Չէր կռահի եւ աչառութ վարուժանը,
Եթէ վայրի նոյն խուժանը
Իր աենչանքը չիերածէր հատ–հատ խօսքի–

Ճղռտում են մարդկանց այսպէս,
Ու դեռ ապրող իրենց զոհի երակներում
Փնտռում են — ի՞նչ — փընտռում...ոսկի՛,
Ոսկեդըրամ, որ, մի գուցէ, կուլ են տուել...

Ճանապարհն այս դժոխային
Կարող էր եւ անվերջ տեւել,
Բայց սարսափի օրն է մթնում,
Եւ քարվանը արդա՛ր—արդա՛ր,
Եւ քարվանը դատապարտեա՛լ,
Զանկըրըի բանտն է մտնում:

Բանտ թուրքակա՛ն,
Եւ պատրաստուած... հայի՛ համար.
Քամնելի լկանքների՛,
Անպատուութեա՛ն,
Ոչ թէ արդէն երազելի մահի՛ համար,—
Մի բախտ դժխեմ,
Մի անողորմ ճակատագիր —
Հիմա արդէն ո՛չ անմարմին, ո՛չ էլ անզոյ,
Այլ գնդանի դրան առաջ պահակացած
Թուրք ասկեարի արիւնկղակ կերպարանքով...

Եւ այդ պահին.
— Տէ՛ր, ողորմեա՛...
Աղաւել, քան երբեւիցէ,
Եւ աւելի, քան այլուրեք,
Այնքա՛ն տեղին, ժամանակի՛ն,
Ա՛խ, վարդապե՛տ, դուխ է հայցում
Տխրալալուկ ամբողջ մի ազգ
Քո սեւասուպ սուրբ բերանով.
— Տէ՛ր, ողորմեա՛...
Եւ գնդանում նեղ ու անճուկ
Պղպջում է մի լայն փղճուկ,

Մի տաք փղձուկ տղամարդկանց,
Որ եղեգան լրենց փողով
Թունդ են հանել սիրտը դողով.
Որ սրտառուչ լրենց տողով
Ու երգերով լրենց թովիչ՝
Գարնան նման լոկ վըրդովիչ,
Ծայր են տուել չիթ արցունքի —
Ո՛չ թէ ցաւի կամ տրտմութեան,
Այլ յուզառատ հիացմունքի՛...

— Յաղագս հարց, եղբարց մերոց
Որք են տարեալ ի գերութիւն,
— Տէ՛ր, ողորմեա՛...

Իսկ հայրերը արդէն չկա՛ն,
Եղբայրներին թուր ու ճկան
Վերջ են տուել ասր ու ճորում,
Ուր ջրի պէս եւ ջրի հետ
Տաք արիւնն է նրանց ծորում...

— Շիջո՛ գիւր վառ հնոցի,
Փրկեա՛ զմեզ, ամենագո՛ւթ...

Բայց ապօթքից այդ ի՞նչ օգուտ,
Թէ հնոցի
Ահեղ բոցին
Կուր է տրուած հայոց աչխարհն,
Ազգը հայոց՝ ցախի պէս խառն...

— Հայցեմք ի բէն արտասուելով
Եւ պաղատիմք զայս ասելով.
— Տէ՛ր, ողորմեա՛...

Ի՞նչ էր պահում վազը նրանց՝
Շանճարտուր այս մեծ արանց,
Ի՞նչ մի վախճան բարերասի —

Անչուչա՝ պոհի՛,
Ո՛չ հերոսի...

— Ընկալ զմեր աղաչանըս,
Լո՛ւր, գթառա՛տ, եւ ողորմեա՛...

Ա՛խ, թէ լսէր ու պթառատ եթէ լինէր՝
Գաղանապէմ այս խուժանին նա կը պինէ՞ր
Ու չա՞ղ կը տար դաչտ ու սարին՝
Ակնիկ — Արձէշ,
Վանիկ — Կարին...

— Ցոյց մեզ զիս ողորմութիւն,
Տուր աշխարհիս խաղաղութիւն...

Խաղաղութի՛ւն....
Եթէ այսպէս պնար քիչ է՛լ,
Մէկ էլ տեսար՝
Խաղաղութիւնն իրօ՛ք իջել,
Վեր է ածել չէն աշխարհը մի չիրմատան,
Ուր այլեւս չեն էլ ճարուի ապրող մարդիկ,
Որ բիւրաւոր հանդչողնեըին երանի տան....

— Տէ՛ր, ողորմեա՛...

Ո՛չ, վարդապե՛տ, ո՛չ, չոլոքմա՛յ,
Իսկ քեզ պատժեց պատժով մի նոր՝
Զառա՛ւ հոպիդ,
Ինչպէս առաւ
Նրա՛նց հոպին,
Որոնք միւս օր՝
Շիկաղեղին անապատի
Աւազի պէս ծարա՛ւ–ծարա՛ւ,
Աստուածծային աչքերում՝ սով,
Զանուելով նոյնիսկ յոյսով,

Անգամ թրից կամ դնդակից չխոցուեցին,
Այլ պարզապէս... այլ պարզապէս... քարկոծուեցի՛ն...:

...Ի՞նչ էր արդեօք այն պատճառը,
Որ քեզ զատեց
Եւ անջատեց
Քո բախտակից ու սրտամօտ
Ընկերների դժխեմ բախտից՝
Քարկոծուողի սուղ ղրախտից
Քեզ նետելով մի լայն դժոխք,
Ուր ոչ մա՛հ կար,
Ոչ կեանքի չո՛ղք:

Ա՛խ, նրանցից ինչի՞ համար քեզ զատեցին,
Քեզ, այդքան ուշ, ինչի՞ համար ազատեցին:

Ազատեցի՞ն:
Ի՞նչ: Ազատե՛լ...

Եթէ դա՛ էր ազատուելը...

ՂՕՂԱՆՋ ՄԹԱԳՆՈՒՄԻ

Ա՛խ, ելթէ դա էր...
Գթառատ Տէրը
Թող որ եւ առնի իր պատեհը,
Թող որ պատո՛ւ իր պատեհուց:

Ինչ է դաչնամուր եւ ինչ է սեղ՝
Մոռացա՛ն նրա ճարտար մատները...

Ինքը Պանկալթու էր տան մէջ, այստե՛ղ,
Եւ Զանկըրըի բանտի պատերը
Արդէն նրանից չատ-չատ են հեռու,
Բայց ուղեղի մէջ... բայց ուղեղի մէջ,
Կարծես թէ կպած նրա թաղանթից՝
Մթան մի փուլայ եռո՛ւմ էր, եռո՛ւմ,
Մերթ իբրեւ ինչ-որ անմարմին զեռուն,
Մերթ իբրեւ ջրի խաչող դոլորչի,—
Պատոյտ էր տալիս ծանր ու բոլորչի,
Պատոյտ էր տալիս
Ու պոկ չէր դալիս...

Երբ անցնում էր նա Պանկալթու մայթով՝
Մի ձայն էր հնչում
Յաճախ ականջում.
Թւում էր՝ ձայնեց իր Սիամանթոն,
Թւում էր՝ իրեն Դանիէլն է կանչում...

Իրիկնանալիս էր տան սրահում
Թուում էր՝ տեսաւ վէնք ու վրահում
Այն վարազադէմ տաճիկ ասկեարին,
Որ ձեռքը տարաւ չիխակոլ քարին,
Որ... ճչում էր նա,
ճչում սոսկալի
Եւ խակոյն վառում մոմեր ու կանթեղ:
Վառում էր, նաոում:
Ու մէկ էլ յանկարծ
Աչքերն էր չրջում այստեղից այնտեղ,
Արի՛ւն էր թուում բոցը կանթեղի...
Ու փչում էր նա մոմեր ու կանթեղ...

Վեր–վեր էր թըռչում յաճախ անտեղի,
Աւելի յաճախ... լինում էր այնտե՛ղ —
Լինում էր այնտեղ՝ իր Հայաստանում՝
Կարինում, Մուշում, Վանայ ոստանում...

Ինքը՝ Պոլսո՛յ մէջ,
Իսկ մի՛տքը՝ այնտե՛ղ...

...Աստւմ են՝
այնտե՛ղ —
Հայաստան կոչուած անհայ աշխարհում,
Կուժկոտրուկները,
Որոնց մոմապոյն ծաղկաթերթերից
Փռւում էր չորս կողմ կինու թանձրը բոյր,
Հիմա —
Եւ ընդմի՞չտ —
կարմիր են հագել
Ու կինու բոյրը
փոխարկել արեան մի ծանրը հոտի,
Որ դղրդում է
Քոչուոր քրդերի նախրի պնչերը:

Իսկ պեղեցկապաչա բաղեղը կանաչ,
Որ չի ախորժում տղեղութիւննեը,
Լուռ մագլցում է քարափներն ի վեր,
Որ իր սեփական կանաչ թեւերով
Արեամբ ողողուած ժայռերը ծածկի,
Շղարշի փերծել,
Որոնց դուրս պրծած ցցերից քարէ,
Ինչպէս ժանիքից
Թէպէտ չուզելով,
Բայց ծածանւում է յաղթական քամուց
Հայ հարս ու կանանց
Երբեմնի դունել տաբատից մի մաս՝
Արեւի՞ց արդեօք,
Թէ իրենց կրած անլուր սարսափից
Այժմ դունաթափ, այժմ ճերմակած,—
Թէպէտ չուզելով,
Բայց ծածանւում է յաղթական քամուց
Իրրեւ... հարկադիր անձնատուրութեան սպիտակ դրօշ...

Իսկ այն ծերպերը,
Որտեղ մագլցել չի կարողանում
Բաղեղը նոյնիսկ,
Ու տեղ չի գտնում քարաքոսն անգամ,
Կարմի՛ր ծերպերը՝
Մէկ երկա՛ր — մէկ կարճ սիւներով ճերմա՛կ,
Նման վիթխարի քարէ բացօթեայ մի եկեղեցի՝
Հայոց լեռների ամֆիթատրոնում,—
Իսկ այդ ծերպերը տնքում են խեղճ-խեղճ
Լսողութիւնից բոլորովի՛ն զուրկ,
Եղ ու նուագից բա՛ն չհասկացող
Բարբարոս քամու պաղ մատների տակ,
Եկեղեցի պէս նոյն տակտն են տնքում.
— Այս ի՞նչ պատահեց...
Այս ի՞նչ պատահեց....

Իսկ յիմար կկուն,
Որ իր թռչնային անթռիչք խելքով
Ջղում է թէպէտ, բայց չի հասկանում,
Թէ ի՛նչ պատահեց,
Միամի՛տ կկուն
Ամէն գարնան հետ—եւ մինչեւ ձմեռ — ընդմիջումներով
Եթեր կը ճամբի
Իր հայրենականչ աղղանչանը հեռագրային.
— Կո՛ւ–կո՛ւ–կո՛ւ (լսէ՛ք),
Կո՛ւ–կո՛ւ (ի՛նչ եղաք)...

Ա՛խ, ի զո՛ւր կկուն կ'աղղանչանի.
Ովքեր մեռել են՝ չեն լսի նրան,
Ովքեր կը ցրուեն աչխարհի վրայ
Մի բուռ գարու պէս՝
Հաւերի առաջ,
Մի կուշ արեան պէս՝
Պղտոր ջրերում,
Թէկուզ եւ որսան աղղանչանը՝
Սրտերով իրենց,
Բայց չէ՞ որ, աւա՛ղ,
Չէ՞ որ կարող են լոկ պատասխանել
Կարօտից մարող սրտի բաբախմամբ,
Կսկիծից թացուող թարթուամով կոպի,
Ջայրոյթից ուռչող երակի զարկով,
Սակայն ոչ երբեք
Ուրախ ու զուարթ վերադարձողի
Ֆայլով կենսաթինդ.
— Դո՛ւ–դո՛ւ (գալիս ենք),
Դը՛ւ–դը՛ւ–դը՛ւ (եկա՛նք)...

— Դեհ ե՛կ, վարդապե՛տ,
Մի՛ խելագարուիր...

...Այնտեղ՝
Երկնաչու Սասնայ լեռներում,
Ժայռեր ու ծերպեր մալլցկլու մէջ
Ընկուզենիները անպամ մրցում են լչայծեամի հետ՝
Երանց ճիւղաւոր եղջիւրների պէս
Բուսնելով ժայռի մաղոտ ճակատին...
Եւ այնտեղ՝
Սասնայ սարում ու ձորում,
Ծառի տերեւին,
Փչերի վրայ,
Մանանայի պէս դադպէննն էր ծորում,
Որ չինականը դար հաւաքէր:
Սակայն... երկնային մանանան փոխուեց
Երկրային ահեղ մի պատուհասով.
Եւ հիմա այնտեղ՝
Հին Որսասարի քարերի վրայ
Գառնարած Դաւթի երկաթ տրեխի թողած հետքերում,
Ինչպէս խաղալիք — փոքրիկ դուռի մէջ,
Անձրեւաջուրն էր քրմծիծաղ տալիս
Պաղ կիսալուսնի ներում ակնարկող բառերի վրայ...
Սասնայ վիպական Մարութայ վանքում
Ուխտաւորի տեղ բուերն են անքում՝
Այս փուչ աշխարհի բանը խորհելով...
Ընկոյղի վրայ ընկոյզ է փտում.
— Հաւաքո՞ղ չկայ...
Ոչխարները վայրի ու վայրենացած
Բարձրիկ սարերից անվախ իջնում ցած,
Հասնում են մինչեւ Մշոյ բայ հովիտ.
— Կրակո՞ղ չկայ,
Նոյնիսկ դո՞ղ չկայ...
Ձմռրի տաշտում ցկնում է կատուն.
— Նկատո՞ղ չկայ...
Եւ տանու կովեր,
Թէպէտ մոռացած չոմեր ու մսուր,

Ըստ սովորութեան՝
Տանջւում են սաստիկ
Իրենց սափորուած լեփլեցուն կուրծքից.
— Որ կթո՛ղ չկայ, —
Եւ խուլ բառաչով
Քարերի չեչոտ ափին են քսում.
— Որ խոտո՛ւտ չդայ...
Աչքերն են լիզում Սասնայ մանանան
Եւ փորկապ ընկած՝
Թաւալ են տալիս
Հին տաճարների սուրբ խորաններում՝
Իրենց ոռնոցով
Զէնով Օհանի տնաղն անելով,—
Էլ չե՛ն վախենում
Սասնայ ծռերի ուրուականներից...

— Դեհ է՛կ, վարդապե՛տ,
Եկ ու մի՛ ծուռիր...

...Լուսաստղն այնպէս պայծառ է չոլում
Նեմրութի վրայ,
Աահս աստըղ չէ,
Այլ մի պղնձէ
Նոր կլայեկած թաս է հովուական,
Իսկ կաթնծիրը
Օտարերկրացուն պարզապէս ճերմակ մի ամպ է թւում...
Եւ հայի որդին,
Հրաչքով փրկուած հայի խեղճ որդին
Օտար ճամբորդի իր անճնապրով եթէ երբեւէ
Ոտքով համբուրի փէչը Սիփանայ,
Թերեւս պիտի վահաղնի ճամբան
Նո՛յնպէս չփոթի ճերմակ ամպի հետ...

—Դեհ է՛կ, վարդապե՛տ,
Ու մի՛ ցնորուիր...

...Իջել է այնտեղ
Մի ծոյլ լուսթիւն սարդոստայնային,
Որ յօրանջում է՝ ականջ դնելով,
Թէ ե՞րբ կշտացած պայլերը դոնէ պիտի դկրտան,
Ինչքան չլինի՝ ձայն է կենդանի:
Եւ որովհետեւ պայլը սակաւ է յափեցած լինում,
Էլ ի՞նչ է մնում,
Թէ ոչ մրափել
Քուն բերող «չարքաշ» նուագի ներքոյ —
Թէ բախտը բերի՝
Տարուայ մէջ մի օր
Այս բնակատուրկ վիլայէթը գան
Զիբիթ–ոսաիկան...
Տարին մէկ անգամ՝
Մրափ յարուցող նուագը «չարքաշ» —
Ո՛չ Ծիրանի ծառ,
Ո՛չ Մոկաց Միրզա,
Եւ ո՛չ փեսին գովք,
Զգիտի ծորայ Հորովել–ն այստեղ,
Ոչ էլ Էրսեւակն աւուշ,
Ո՛չ էլ կալի երգ·
Հայաստան կոչուած անհայ աշխարհում
Զգիտի՛ հնչի հայ պարեկանակ,
Հայ երգ
Ու խաղիկ...

— Դեհ ե՛կ, վարդապե՛տ,
Եկ ու մի՛ ցնդիր...

...Ու պէշ գոմշի պէս
Գիշերը պիտի ծանրօրէն պառկի՝
Իր եղջիւրներին երկինքը պահած,
Եւ լուռ որոճայ
Մի կերպ կուլ տուած նախճիր ու ոճիր,
Որ հետո չի մարսում անասո՛ւնն անգամ...

Մութի թանաքը եղեռնի մասին եղերգ կը դրի.
Բայց առաւօտեան,
Թանձր թանաքը կը ջնջուի այնպէս,
Ինչպէս... արիւնը եւ հարցը հայոց...

Իսկ առաւօտը...
Նա ամէն անգամ
Երեխայի պէս աչքը կը բացի մխամտօրէն,
Եւ ամէն անգամ այնպէ՛ս կը թուայ,
Թէ ոչի՛նչ, ոչի՛նչ կեանքում չի փոխուել.
Ուր որ է մայրը բակից ձայն կը տայ
Իր քնկոտ որդուն՝
Ցնփոր խնոցու չըմփ–չըմփոցը մի պահ կարելով...
Եւ դիւղի վրայ
Նորից կ՝ալիքուի նախրի բառաչը,
Այդիների մէջ հովի հառաչը ծաղիկ կը թափէ...
Ջուրը՝
մարդերի փխրուն թմբերը մկան պէս ծակած՝
Լորտուի նման առաջ կը սողայ...
Մօտիկ արտերից,
Առը չուռ տալիս,
Ծոփը կը վայլի հայելու նման,
Եւ չողքը կ՝ընկնի դրացու հարսի շարմաղ երեսին՝
Նրան մի վայրկեան ահաբեկելով,
— Ամա՛ն, այ ամա՛ն,
Այդ ո՞ր ջահելն է
Սիրտ անում նրա դէմքին չողք դցել,
Իսկ եթէ մարդը իմանա՞յ յանկարծ.
— Ամա՛ն, այ ամա՛ն,—
Իսկ եթէ մարդը իմանա՛յ յանկարծ՝
Արի՛ւն կը թափուի...

Իսկ առաւօտը,
Երբ ամէն անգամ աչքերը բացի,
Մի պահ խաբուելով երեխայի պէս՝

Քիչ յետոյ արդէն
Նա իրեն կը զգայ հայի որբ մանչուկ.
Կ'ուզենայ կանչել՝
Բայց ձա՛յն չի ելնի,
Կ'ուզենայ լացել՝
Արցունքնե՛ր չկան,
Կ'ուզենայ գոնէ, վերջապէս, մեռնել,
Բայց ... մա՛հ էլ չկայ,—
Զէ՞ որ սերում է
Պուճուր Մհերի անիծուած ցեղից...

— Դեհ ե՛կ, վարդապե՛տ,
Ու մի՛ խենթանայ...

Մշոյ լայն դաշտում,
Ծայրից մինչեւ ծայր,
Անվերջ կը սուրայ կարօտեալ քամին
Եւ մէն մի հատիկ երդիք չի գտնի,
Որ դուրս պոռթկացող ծուխը խլելով՝
Վայրի կատուի պէս
Քինոտ զզվի կծիկը նրա...
— Դեհ ե՛կ, վարդապե՛տ,
Եկ ու մի՛ դժուխը...

Բիւրակն էր կոչւում,
Օսմանցին եկաւ
Եւ, թարգմանելով, բինգեոլ անուանեց՝
Տաս հազար աղբիւր,
Տաս հազար լճակ:
Եւ հիմա... հիմա
Այդ տաս հազարն էլ մարդ են երազում,
Որ գայ ու թեքուի իրենց ակունքին,
Իրենց ափունքին,
Իրենց հայելում իրեն տեսնելով՝

Ծարաւը կոտրի՝
«Օխա՛յ» ասելով,—
Թէ չէ՝ ի՛նչ աղբիւր,
Թէ չէ՝ ի՛նչ լճակ,
Թէ չէ՝ աղբիւր ես —
Լճակ կը դառնաս,
Թէ չէ՝ լճակ ես —
Կը դառնաս ճահիճ,
Կը դառնաս տանը պատաւաճ օրիորդ,
Մինչդեռ հարսնութեան առոյգ բնապէրը
Ծառւտ է տալիս,
Մինչդեռ մայրական սուրբ հիւանդութեան
Նոյնիսկ ծապիկը ծնծելուց յետոյ՝
Ջորը չի՛ անցնում...

Եփրատ էր կոչւում
Եւ... Մուրատ ասուեց,
Ջհանդամի պէօ՛ղը, թող կոչուէր Մուրատ,
Միայն թէ պետը պետութիւն անէր՝
Գերաններ տանէր
Եւ ոչ թէ դիակ,
Առուտրի խրձե՛ր, կոճդեր ափ հանէր,
Եւ ոչ թէ պանդեր, ուսեր ու դիակ...
Միայն թէ պետը պետութիւն անէր՝
Գեղջուկը բանէր,
Տնկէր ու ցանէր,
Գետն էլ իր ջրով մէկը տաս անէր:
Ծոր քարափներին ամայութեան մէջ
Նրա ջրերով այօրիք բանէր...
Բայց հիմա... հիմա
Էլ ի՛նչ վար ու ցանք,
Էլ ի՛նչ ճար ու ջանք,
Ա՛խ, էլ ի՛նչ ջըրտուք,
Էլ ի՛նչ ջրատոց:
Ինչպէս մտքի մէջ

Հասուն ալբիկն է տեսնում մատանի,
Գետն էլ կամուրջ է միայն երազում:
Ու... խեղճ Եփրատը
կամուրջ է տեսնում... լոկ երազի մէջ...

— Դեհ ե՛կ, վարպապե՛տ,
Մի՛ խելագրկուիր...

— Քանի՞ ժողովուրդ վանայ լիճ ունի,—
Օտար դրքերում եւ օտար լեզուով
Օտար մարդիկ են այս հարցը տալիս,
Եւ ոչ թէ վանից դրկուած վանեցին,
Որ հա՛րց չի տալիս,
Այլ հաստա՛տ ասում.
— Էս կեանքում՝ մեր վան,
Էն կեանքում՝ դրախտ...

Ա՛խ, Բխայնայի ու Բղնունիքի,
Տուչպայ եւ վանայ սրտաճե՛ւ ծովակ:
Վարպապայ սուրբ սար,
Սիփան ու Նեմրութ
Իրենց ստուերը — ուռկանի նման —
Նետում են այնտեղ,
Եւ տառեխի տեղ
Որսում են դոյներ,
Որ անո՛ւն չունեն,
Որ անո՛ւն չունեն:

Իսկ Այկեստանի բոյրերից արբչիւ
Եւ Արտամեդի հոտերից դինով՝
Խոր քուն է մտնում քամին Ոստանում,
Այն խնճորենու հոծ ստղարթի մէջ,
Որի պտուղը թափահարելիս
Ջատում ես նեբսից

Զոյլ կոլխիների իրար գարնումը՝
Դեղին սաթերի հատիկների պես։
Փրկուած վանեցին
Այսուհետեւ այդ ե՞րբ կարող է լսել
Այդ ձայնը ծանօթ եւ օտարոտի...

— Եթէ լսելք ունես՝
Եկ մի՛ թռցըրու...

Նոյն Այգեստանում
Ու նոյն Ոստանում
Եթէ գարթնում է դինովցած քամին,
Ապա գարթնում է
Ծոցուր ծառից կաթող մրգերի
Թմփոցից միայն,
Ու դինովցածի մոլոր քայլուածքով
Լճակն է նետւում,
Որ նրա ջրով քիչ դղաստանայ։
Եւ տաքուկ քամու մօտիկութիւնից՝
Լիճը կնոջ պէս սրսփում է լուռ
Եւ ամաչելով սուրբ Աղթամարից —
Մեղայ է գալիս՝
Իր ալիքները ձեռքի պէս մեկնած...

Ա՛խ, ալիքնե՛րն այդ,
Այդ ալիքնե՛րը...

Ձիգ ամիսներով ջուր ու սապոնի երես չտեսած
Տաւարածն անդամ
Թէ մերկանալով մանի վանայ ծով,
Իրեն յաւ թրջի ու դուրս գայ ջրից —
Կեղտի ո՛չ մի հետք,
Եւ մաշկը մէկէն թաւիշ է դառնում՝

Անցուլ երինջի կռնակի նման...
Վանեցին ուրեմն օճառ չէր առնում
Եւ հարըստացաւ ա՞յլ դրամներով,
Թէ՞ Շամիրամի դարաւոր առուն
Այգիների մէջ,
Արտերի վրայ,
Հանդում ու ճորում
Ոսկի էր փառում...

Ա՛խ, Վանայ ծովակ...
Երբ մուրճն էր թառում
Սիփանայ գլխին,
Լանջին Նեմրութի
Ու յետոյ նաեւ քարափին Վանայ՝
Ջնջելով անջինջ սեպագրերը,—
Ծովակի վրայ երբ մուրճն էր թառում՝
Երկինքը համակ
Հեզ չուռ էր գալիս ջրերում ծովի,
Եւ ալիքների աչխոյժ խայտանքը
Չէր թուում ծփանք.
կարծես թէ ջուրը
Իր կաթսան ընկած չէկլիկ աստղերի
Հրից էր եռում:
Բայց աստղե՞րն էին բոցկլտում այնտեղ,
Թէ՞ ազատուելու յուսահատ ճիգով
Լող էին տալիս
Հազա՛ր ու հազա՛ր Վանայ կատուները՝
Վառուող աչքերով,
Թէ՞ ցոլում էին
Հազա՛ր ու հազա՛ր քարեր թանկագին՝
Շարժելով Վանայ ակնագործների
Նախանձը անկուչտ...
Իսկ ամենից վերջ՝
Երկնի ջատագով Մեծ Արջը
Իր մեծ փլավքամիչով

Ցած էր կռանում,
Անձայն ճոպիւնով թաքուն նետուղում
Վանայ լճի մէջ,
Որ... թարմացընի նրա լապուրով
Գոռոզ երկնքի պոյները խամրած,
Սակայն... քամիչի ծակոտիկներից
Լապուրը նորից թափւում էր ներքեւ,
Եւ Վանայ լճի համեմատութեամբ
Երկինքը դարձեալ խամրած էր մնում
Ու մի՛շտ կը մնայ...

Ա՛հա, Վանայ ծովա՛կ,
Բայց ախտը քե՛զ լինչ
Երկնքի խամրելն ու չխամրելը,
Եթէ քո շուրջը եւ քո քաղաքում
Ծնրադրել է խաւարը հիմա՝
Աղօթարարի ջերմեռանդութեամբ,
Որ չյամենա՛յ,
Այլ յարատեւի՛
Իր չոզահալած իշխանութիւնը:
Իսկ քո հեռաւոր–մօտաւոր քոյրը՝
Լիճը Սեւանա՛յ...

Վարդապետ իմ խե՛ղճ,
Բայց եւ բախտաւո՛ր,
Բայց եւ բախտաւոր, որ չկխտէիր,
Թէ իր սեփական արիւնի գնով
Սեւանայ լիճը լոյսեր պիտի տայ
Ծերպերի՛ն անդամ՝
Ճարտարանելով քարայծեամների
Դժդոհութիւնը եւ վռչտոցը,
Սակայն ո՛չ մի կերպ չկարողանայ
Լոյս տալ մթնախեղդ քաղաքին Վանայ,
Վանայ ծովակի խաւար ափերին,
Նրա հեռաւոր–մօտաւոր քոյրը՝

Իր թանկ արիւնը լոյսի վերածած
Լիճը Սեւանայ...

— Դեհ ո՛ւր, վարպապե՛տ խնդճ ու բախտաւոր,
Եթէ կարող ես՝
Ել մի՛ խեւանայ...

— Համայն աշխարհում այդ քանի՞ երկիր
Ունի Արարատ:
Ո՛վ էլ որ չասի՝
Աստուածաշունչը
Իր մատաղաթէղ ղէմքը ղէմ կ՝անի
Ու կ՝ասի՝ կարդա՛:
Այդ քանի՞ երկիր Արարատ ունի,
Իսկ Արարատը...
Էհ, անունը կայ — ամանում չկայ...

Վարպապետ իմ խե՛ղճ,
Բայց եւ բախտաւո՛ր,
Բայց եւ բախտաւո՛ր,
Որ չկիսէիր,
Թէ հայ կոտրվի երիտասարդներ՝
Ալպիականներ բարձունքներ սիրող,
Մասիսի դիմաց կը նստեն պնակք,
Որ պնան կապրեկ,
Էլբրուս պնան,
Լեռներ մագլցեն
Նոյնիսկ հեռաւոր սահմանի վրայ չին–ռուսական,
Այնինչ Մասիսի լանջը կուսական՝
Համբուրուած լոկ իր ա՛յն վեհապուհից,
Որ Հայոց Վէրքից արնաքամ՝ ընկաւ, —
Այնինչ Մասիսի լանջը կուսական
Մատնե՛ր է տենչում՝
Հայի տա՛ք մատներ,
Որ հըպուե՛ն իրեն,

Իրեն դուրդուրե՛ն,
Իրեն ունենա՛ն...
Ու դեռ կան հայեր,
Որ հաւատում են գոյութեանն Աստծոյ:
Թող գիտութիւնը նոյնիսկ պապանձուի՛,
Աստծուն ժխտում է Արարա՛տն անգամ՝
Աստուածաշնչի սրբազան լեռը՝
Բախտո՛վ իր դժխեմ...

— Դե՛հ, մի՛ թըռցըրու խելքըդ, Վարդապե՛տ...

Վարդապետ թըչուա՛ռ, բայց եւ բախտաւո՛ր:
Քո մտքով անցա՞ւ, որ Մասիսն, այո՛,
Մեր նոր ու վերջին ոստանի առաջ,
Մեր հայրենաքաղց աչքերի հանդէպ,
Կարծես թէ դիտմամբ ու միտումնաւոր
Մեզ անխղճաբար պիտի պրպըռի՛
Մեր փակուած վէրքը նորից նոր բանայ,
Մաղնիսի նման անվերջ ձգելով՝
Գէթ մօտիկանալ
Թոյլ չտայ բնաւ...

— Դեհ, ե՛կ, Վարդապե՛տ,
Ու մի՛ խենթանայ...

Ի՞նչ կայ աւելի ծանր ու խղճալի,
Քան թէ կակիծը որդեկորոյս մօր:
Իսկ եթէ դա էլ քիչ են համարո՞ւմ
Եւ սպանուածի դիակը, դիտմա՛մբ,
Տնկում են թշուառ մօր աչքի առաջ —
Ո՛չ թէ մի չաբաթ,
Այլ ձի՛ւ տարիներ...

— Դե՛հ, եթէ մայր ես՝
Եկ մի՛ ցնորուիր...

Մեզ լաւ է ծանօթ
Ծաղրուծանակը այս հոդեխարտիչ,
Դա ծանօթ է մեզ քանի՛ դար արդէն:
Մեր հայրենասէր թագաւորներին
Ու հերոսներին
Այսպէս պարսկական դահիճներն էին
Մորթազերծ անում,
Մէջը լցնելով դարման ու չոր խոտ՝
Ծղոտուխլակ չինում
Ու բռնի դնում
Մորթազերծուածին պաշտողի առաջ,
Որ... աքանչանան մէկը միւսով...

Այրարատն — այսպէ՛ս — դրել են ահա Երեւանի դէմ...

— Դեհ ե՛կ, վարդապե՛տ...

ՂՕՂԱՆՋ ՅՆՈՐՄԱՆ

Եւ պատկերներից այս ահագարհուր, բայց եւ իրական
Նախ ցնորուեցին աչքե՛րը նրա
Եւ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...

Անկենդան դարձաւ նայուածքը խոսուն.
Վայրի աղմուկի,
Ինչ ապազակի,
Ժխորի տեղակ
Մի զերեզմանուղղ լռութիւն տիրեց
Նրա հոգու մէջ.
Գլուխը նրա,
Որ մի երկնային լուսաւոու էր ցարդ,
Հիմա փոխարկուեց մի մոլորակի —
Նոյնն էր արտաքուստ,
Բայց ինչպէ՞ս, ինչպէ՞ս, ինչպէ՞ս էր նոյնը,
Եթէ լուսաւուն... էլ լո՛յս չէր տալիս...

...Նա չհասցրեց զոհել Վարդանին
Գոռ Աւարայրի ճակատամարտում
Եւ ինքը զոհուեց —
Ա՛խ, ո՛ւր էր՝ զոնէ Վարդանի նման:
Մեր խաղ ու տաղի գօրավարն ուժեղ
Վախճան ընդունեց՝ որպէս նոր Մուշեղ,
Ում վերջին խօսքը նա դիտէր անգիր
Դեռ ձեմարանի առաջին տարուց.

— Զվատթարագոյն մահս ինձ եհաս,
Ո՛հ, թէ՛ դիպեալ էր ի վերայ ձիոյ...

Մեր խարդախ բախտից՝
Նա չընկաւ մարտում եւ ձիու վրայ,
Այլ պոհուեց անլուր դաւաճանութեամբ...
Մեր դժբեմ բախտից՝
Նա չհասցրեց իր օպերայում
Թշուառ Անուչին խեղացնորել,
Եւ ի՛նքը, ի՛նքը, ի՛նքը խենթացաւ...
Մեր դաժան բախտից՝
Սասնայ ծռերին երգել չտուած —
Նա ինքը դարձաւ նոր Փոքր Մհեր
Ու դեռ կենդանի, ողջ-ողջ պնդանուեց
Հոգեբուժարան — Ապռաւաքարում...

...Ով մաղապուրծ էր մահից, վարդապե՛տ»
Քեզ կորցնելու ցաւից ահաւոր
Աչքերըս լիքը լաց ա մրմնջաց,
Առանց խօսքերի եւ անեղանակ
Էրւում եմ, էրւում այրուելով երգեց, —
Սակայն... անօգո՛ւտ:

Ով առուփախով, դաղթով էր փրկուել,
Անպօրութիւնից կրկին մոռացած
Հայի անարդար Աստըծոյ հանդէպ
Իր քէնը արդար՝
Երկնքին նայեց լուռ պաղատանքով, —
Սակայն... ապարդի՛ւն...

Ինչ եկեղեցի, որ չէր աւերուել,
Եւ ամէն տաճար,
Որ ժամերգւում էր դեռ հայ աշխարհում»
Պատարագիչի դողդոջ շուրթերով
Պահպանիչ ասաց՝ կեանքիդ ի խնդիր, —

Սակայն... չվրկե՛ց.
Հայեացքըդ կրկին անկենդան մնաց,
Գլուխըդ, որ ցարդ լուսատու էր մի,
Դարձաւ մոլորակ՝ պաղած ու անլոյս...

ՂՕՂԱՆՋ ԱՆԱՆՑ ՍՈՒԳԻ

Պոլսին մօտիկ, Շիշլի գաշտում,
Երկու տարի զնդանուեց նա,
Որին մի ողջ աղգ էր պաշտում:

Բժշկում են... Ի՞նչ են բուժում,
Ուղեղի վէ՛րք, մթապնաձ մի՛տք,
Որ մնում էր թանձըր մուժում...

Ովքեր նրա միտքը պաշտում
Եւ կորստին դեռ չեն հաչտւում,
Ուղարկում են նրան Փարիզ:

Փարի՛զ, Փարի՛զ...
Երկու տարի դեռ չի անցել,
Ինչ նա այդպէս քեղ էր գալիս,
Որ էր ճայնով, սրինդ-փողով,
Որ էր մտքով, խելքով պայծառ
Գերէր մի ողջ Համաժողով:

Փարի՛զ, Փարի՛զ...
Հիմա զարձեա՛լ,
Վերատին է նա քեղ գալիս —
Ո՛չ երդելու, նուագելու,
Ո՛չ հիացմունք հաւաքելու:
Նա՝ մարմըրող ու վիրաւոր՝

Էլ թեւ չունի, որ յաղթ սուրայ,
Էլ հուր չունի — վառի քուրայ...
Ո՛չ «բռաւո»,
Ծափուն «ուռա»,
Եւ ո՛չ էլ «բիս» —
Փարի՛զ, Փարի՛զ...
Գալիս է նա,
Որ մի՛աք մուրայ...

Փարի՛զ, Փարի՛զ...
Եղիր բարի՛
Ի սէր Աստծոյ՝ պթա՛ծ եղիր —
Այս ծուռ ճամբից նրան չեղի՛ր
Ու բեր չիտակ ճանապարհի.
Այնպէ՛ս արա, որ նա դարձեալ
Քեզ ողողի մաքուլ պայծառ,
Որ երկերով սիրտըդ վառի,
Նուագի փող,
Շորոր պարի...

Փարի՛զ, Փարի՛զ...
Եղիր բարի՛,
Մի ողջ ազգի եւ աչխարհի
Լոյսն ու յոյսը դուր մի՛ մարի...

Բայց խեղճ Փարիզն ի՞նչ դեղ ճարի,
Ինչպէ՞ս փրկի քո հանճարին,
Թէ մեկնելիս, նաւի վրայ,
Աշակերտներն իր սիրասուն
Ծաղկեփունջ են տալիս նրան,
Իսկ նա... նրանց բառ չի ասում,
Ոչ էլ ժըպտում բարի՛–բարի՛,
Իսկ նա... փունջը չի հոտոտում,
Այլ — անտարբեր — ծովն է նետում"
Պաղ հայեացքը սար ու քարին...

...Ա՛խ, Վիլ–ժուի՛ֆ,
Վա՛խ, Վիլ ժուի՛ֆ:
Դու՝ վարիդեան խուլ արուարձան —
Եւ մեզ համար յանկարծ դարձար
Անգութ բախտի մը վարժուհի,
Որ համոզէն, տարինեւրով
Հաչեցրեց կամա՛ց–կամա՛ց
Մեզ ահաւոր մեր կորստին,
Մեր յոյսերի, համբերութեան
Հիւթը չիթ–չիթ, պուտ–պուտ քամած՝
Հասկացրեց, որ վերատին
Յարութիւն են առնում... միայն
Հեքիաթների, լեգենդների ձիւ չարանում,
Բայց ոչ երբեք... հիւանդանոց — բուժարանում...

...Տարուայ հետքով ողջոյ տարին, —
Բուժում չկա՛յ քո հանճարին...

Տարուայ հետքով տարին գնաց,
Եւ խաղերը մեր հինաւուրց,
Որոնց ամբողջ քսան տարի
Նա մայրական իր ջանքերով
Ու ձեռքերով մեղմ ու բարի
Անխոնջօրէն ոտքի հանած՝
Քայլելու էր վարժեցրել,
Դրել ուղիղ ճանապարհի, —
Նոյն խաղերը հիմա նորից
Քար կտրեցին ու կոնդ դարձան...
Այն խաղերը, որ համր էին որպէս արձան
Եւ բովանդակ տաժանակիր քսան տարի
Մանկան նման մարդուում էին հունչ ու բառի,
Հիմա նորից պապանձուեցին ու համրացան, —
Ինչ արած էր երկար ու ձիւ քսան տարում՝
Ձար մի հոդմով ցրիւ եկաւ քար ու սարում...

Տարինների ոտնահետքով
Նոր տարիներ վրայ հասան.
Մէկ–տասնըմէկ՝ դարձան քսա՛ն։

Տարուայ հետքով տարին գնաց,
Իսկ նա՝ մեռած — անթաղ մնաց։

Քսա՛ն տարի անթաղ մնաց
Մի սո՛ւրբ դիակ,
Սուրբ ու մի՛ակ։

Քսա՛ն տարի անթաղ մնաց
Զար նզովքով ի՞նչ դժոխքի...

Տարուայ չունչը՝ տարուայ հեւքին —
Մէկը մէկից սկիզբ առան,
Իսկ նա՝ նման Զմրուխտ հաւքին,
Նման հաւքին մեր Հազարան՝
Ո՛չ դնդակուած, ո՛չ էլ մորթուած,
Այլ ճակատի բուռթ հարուածից ուշակորոյս —
Քսան տարի լուռ թփրտաց՝
Գոնէ... չթողնելով հնարք ու յոյս
Փարատելու մեր ցաւը խոր,
Աւարտելու կոծն ու սուգը,
Մեր հոգու մէջ չորացնելու
Սանդեր փորող արտասուքը...

Քսա՛ն տարի մեռած — անթաղ,
Ե՛ւ մահացած, ե՛ւ ողջանդամ
Մի սո՛ւրբ դիակ,
Սուրբ ու մի՛ակ...

ԱՀԱԳՆԱՅՈՂ ԱՐՁԱԳԱՆԳ

ՂՕՂԱՆՋ ՎԵՐԱԾՆՄԱՆ

Ա՛խ, վարդապե՛տ,
Մեռած դանդաղ,
Մեռած թէպէտ,
Բայց եւ անթաղ,
Բայց եւ անփուտ մեր սրբութիւն.
Կարելի էր եաթաղանով,
Ջարդով,
Խարտոով,
Դաւով — անդաւ
Բնաջնջել մի ո՛ղջ անտառ, —
Անմարդկային մի լրբութի՛ւն,
Եւ այդ մտքից դարձուբելի
Չխեներանալ չէ՛ր կարելի:

Սակայն չարի խոփը դիպաւ ժեռ քարերի,
Եւ ժանգոտած խոփը նրա չդիմացաւ:

Դու՝ փարիզեան վիլ–ժուիֆում
Այդ չիմացար...

Դու չիմացար, որ աչխարհում
Գայծակեցին ահեղ չանթեր:
Դու չիմացար, որ աչխարհում
Ճայթեց մաքրող մի փոթորիկ,

Եւ ապրէը քո որը ու անտէր,
Արդէն պատառ եւ պատառիկ,
Բզի՛կ–բզի՛կ, ծուա՛տ–ծուա՛տ,
Լքուած Աստծուց եւ մարդկանցից,
Զրկուած անպամ յուսոյ պանճից,
Ի դէմս ամէն բարեկամի
Լոկ տեսնելով ծախու կաւատ,
Մինչեւ մրուր դատարկելով
Վհատութեան պաւ ու պաւաթ, —
Նոյն ապրէը քո յանկարծ մէկէն
Վերստացաւ նոր մի հաւատ.
Հոգեւարքի իր մահիճում
Հոգեդարձը վերածնուեց,
Մի նոր կեանքի յոյսով ղինուեց,
Գտաւ մի հին, սակայն եւ նոր,
Բոլորովի՛ն նոր բարեկամ,
Որ ղեռ չկար չորս տարեկան,
Բայց անճնադոհ եւ ահապին՝
Քո օրմահու աղաղակին
Իր օգնութեան չտապոլի
Ոտնաձայնով արձադանգեց.

Եկաւ, փրկեց,
Որբիդ պրկեց,

Քո թուլացած դօտին պրկեց,
Քո ցիրուցան ուժը բրդեց,
Անարգուածիդ յարգեց խորունկ,
Եւ տէր կարդեց բախտին քո նոր:

Իմ ժողովո՛ւրդ հնամենի,
Ինչպէ՞ս պանել ղեռ չստեղծուած
Բառն այն, որով հնար լինի
Քեզ ճչտօրէն անուանելու:
Դու՝ պատմութեան մութ առեղծուած,
Դու՝ մարդկութեան բարդ հանելուկ,
Տեղն ու տեղըդ՝ գարմանալի...

Քեզ որտեղի՞ց այն բանալին,
Որով կեանքի դուռն ես բացել,
Այն դարաւոր
Հաստ դուռը, որ
Փակուել է միշտ, չբախացել
Քո լուսաւոր ճակատի դէմ:
Քեզ որտեղի՞ց այդ բանալին,
Քեզ որտեղի՞ց,—
Ասուած դիտէ...

Քեզ դարերդար հալածելով,
Խուժդուժօրէն սրածելով,
Սպաննեցին,
Խաչ հանեցին,
Սակայն մնաց դեռ հայութիւնն,
Առանք կրկին մենք յարութիւն,
Եւ ո՛չ իբրեւ մի նոր Յիսուս,
Այլ... հայի՛ պէս:

Դարեր ի վեր վառում են մեղ,
Այրում են մեզ, դարձնում մոխիր
Հնոցի մէջ խոլ չարութեան,
Քուրայի մէջ քէն ու՛ ոխի,
Ու տաք մոխիրն անգամ թրջո՛ւմ...
Սակայն ոգին մեր հայութեան
Թէ այրուեց էլ, ո՛չ, չի՛ կորչում —
Ելք է ճարում նոր յարութեան,
Եւ... ո՛չ որպէս փիւնիկ թռչուն,
Այլ... հայի՛ պէս.
Սակայն ոգին մեր հայութեան
Աւելի ճիշդ՝ չի՛ մոխրանում —
Միեւնոյնն է, թէ չարութեան
Հուրը թէժ է կամ մարմանդ է,—
Չի մոխրանում,
Այլ ճախր անում,

Սաւառնում է ոդին հայի,
Եւ ... ո՛չ իբրեւ հեքիաթային
Կախարդական սալամանդըր,
Այլ ... ի՛ր նման՝
Հայ ոգո՛ւ պէս...

Դիակներով ձորն է լցւում,
Դիակներով վիհն է խցւում,
Արիւն հագնում սարաւանդը...
Հարուածում են մեզ մահացու,
Վէրքի վրայ նոր վէրք բացում....
Ջարդեր յայտնի, դաւեր ծածուկ,
Կործանումներ դունակ-դունակ,
Դժխեմ բախտի մատեանի մէջ
Սպառումի հազա՛ր սիւնակ...
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ,
Ինչի՞ նման կամ որպէս ի՞նչ —
Ա՞յս ... ա՞յն ... թէ սա՞:
Իսկ մենք՝ տոկուն ու կենսունակ՝
Հէնց...որպէս հա՛յ...

Արցունքն՝ աչքում,
Վէրքը՝ կրծքին,
Պատա՛ռ-պատա՛ռ, ծոբատ թէպէտ,
Քո ժողովուրդը, վարդապե՛տ,
Ջնդանումիդ քան տարում
Ընդմիշտ ասաց մնաս բարեւ
Ամէն բանտի ու գնդանի,
Մտաւ հզօր մի ընտանիք,
Ուր փոխադարձ ջերմ սէրն էր սիւն,
Նոյն երազը՝ ծածկող տանիք,
Մի ընտանիք, որի ներսում՝
Ո՛չ դժտութիւն,
Ո՛չ էլ «իմ-քո», —
Համայնական հսկայ մի տուն՝

Յաւէտ ամուր ու հաստատուն
Եղբայրութեան պնդած հիմքով...

Մեր կեղեքման ու մեր տանջման,
Մեր վերահաս բնաջնջման
Ահեղ մտքից ցնորուելով,
Դու չիմացար, որ հորուելով՝
Ցանձնուելով խաւար հողին,
Զփոեցինք մենք հողի տակ,
Այլ վազի պէս մեր խաղողի,
Երբ որ հասաւ դարուն՝ տաք,
Հողի մէջ էլ մեզ ուղղեցինք,
Գարնան շնչով ընձիւղեցինք
Ու կանդնեցինք՝ նոքի՛ց չիտակ:

Իսկ պարո՛ն էր,
Ի՛նչ պարուն էր...

Եւ դարաւոր մեր արիւնը,
Պատանօրէն տաք պղպջաց,
Հին աւիշը, նոր աւիւնը
Կրկին եռաց մեր քնի մէջ,
Անցաւ ջարդուած ճիւղքի միջով —
Ու մեր ծերուկ հողին ճչաց
Նորածինի ղնդուն ճիչով:

Զլիացանք փրկուած քիչով...
Թէ պաղ էինք՝
Շուտ հալուեցինք
Ու չատացա՛նք,
Ծաւալուեցի՛նք,
Դարձանք երկիր անափ–անհուն:
Եւ ուր կ'ուզես՝
Հայ մի անուն,
Որ մեր պատուն է պահպանում,

Մեր մեծութիւնն է վեր հանում,
Դռները բանում պանծացումի,
Հեռու տանում համբաւը մեր...

Երէկ դեռ որբ ու սովապար՝
Մենք չողացինք անբաւ պանճով.
Ծովից դրկուա՛ծ, մի ապրի անծո՛վ —
Եւ տուեցինք մենք... ծովակալ...

Արդէն վաղո՛ւց, վաղո՛ւց թէպէտ
Կորցըրած զօրք, սպարապետ,
Ոտնահարուած՝ բանակներից,
Ապրած դրոհ, ջարդ ու արշաւ,
Եւ — քո աւեր տնակներից
Ծնունդ առան բիւր զօրապետ,
Գեներալներ ու... հայ մարշալ...

Դարեր լ վեր
Մարմինը մեր,
Մարմինը մեր խեղճ ու տոկուն
Ցխաուսի պէս չարչարեցին:
Բայց... քիչ էր դա:
Հասան հոգուն —
Նաեւ հոգուց մեղ դրկելու
Մի անհոգի ճար ճարեցին.
— Ո՛չ մի երգիչ՝ մեզ երգելու,
Մեր մահն անդամ դուվերգելու:
Ո՛չ մի երգիչ...
Եւ չարեցի՞ն:
Այն էլ ինչպէ՛ս, ի՛նչ արեցին...
Բայց — ո՛վ հրաշք — պէտք չէր մի դար,
Որ ծնէինք մենք... Զարենցին,
Որ... չծնուեց մօրից արդար
Եւ ուժ չառաւ նրա կաթից,
Այլ... դուրս թռաւ մեր հեքիաթից՝

Իբրեւ եղբայր մի արժանի
Սիամանթոյ – Վարուժանի.
Կրտսե՛ր եղբայր, կրտսե՛ր դաւակ,
Որ պիտի պայ եւ ա՛յն անի,
Ինչ չարեցին մինչեւ — աւաղ...

Մենք՝ մատնուած ջարդ ու գաղթի,
Անբախտներից անբախտ՝ կեանքում,
Բազմաստեղեան հոծ երկնքում
Մենք՝ դուրկ անպամ աստղի՛ց բախտի —
Հիմա փրկուած չար ու անգութ
Սամում–խորչակ–ուրպաղանից,
Ոպջ աչխարհին երէկ անյայտ
Մեր երկնասէր Բիւրականից
Ոչ թէ անյայտ կամ դեռ հեռու
Աստղի ծինն ենք աղաչարում,
Այլ եւ պոնում հաղարաբիւր
Աստեղաբո՛յլ —
Աստեղասփի՛ւռ,—
Եւ պխտութեան յոպնած դէմքով
Անց է կենում թարմ մի դեպիւռ...

Նոյն երկնի տակ, նոլից այնտեղ՝
Արդածի ճնոտ լանջին,
Ուր չէր վառւում Լուսաւորչի
Առասպելեայ ոչ մի կանթեղ,—
Վերին կամքով ոչ արարչի,
Այլ հայորդու
Մտքով արթուն
Փնջւում են արդ, դառնում կանթեղ
Կոսմիկական ճառագայթները...

Անցած՝ ամէն որոգայթները,
Ցանցե՛ր, թակա՛րդ, դարա՛ն, ծուղա՛կ,
Որս դառնալու վախի տեղակ՝

Մե՛նք որսացինք... ձուկը ոսկէ,
Ոսկէ ձուկը՝ բախտից քինոտ —
Երբ մնում են բազում ազգեր
Իրենց կոտրած տաշտակի մօտ...

Դու մեր անթաղ, բայց եւ անփուտ
Տրոփասիրտ մեր սուրբ մումիա.
Թէկուզ մարած, բայց վառուելիք
Մեր հոգու ջահ հազարմոմեայ.
Դու չիմացար եւ որտեղի՞ց,
Ինչպէ՞ս պիտի իմանայիր,
Թէ Մասիսի սուրբ փէշերից
Մինչեւ լանջը Հիմալայի,
Անունովդ հպարտացող մի կուարտեռ՝
Քեզ իւրովի կրկընելով,
Քո հարկադիր կաչկանդումն է, որ կ՝աւարտէր՝
Սկիզբ տալով քո վերահաս արձակ կեանքին,
Հետզհետէ ահազնացող
Անլռելի արձագանգին՝
Երկրից երկիր,
Սրտերից սիրտ,
Շուրթերից շուրթ՝
Արեւաչատ հայրենիքիդ երկնքից լուրթ
Մինչեւ Կարպատ ու լանջերը Հիմալայի...

Դու՝ երազկո՛տ — եւ չիմացար,
Ա՛խ, որտեղի՞ց իմանայիր,
Որ այն, ինչ քո ազգամեծար
Ու մեծ հոգով դո՛ւ կամեցար՝
Որպէս երա՛զ, մտքի չքո՛ւնջ,
Պիտի մի օր ստանայ չո՛ւնչ,
Ստանայ ձե՛ւ...
Դու չիմացար,
Եւ որտեղի՞ց իմանայիր:

Մինչդեռ հիմա, հիմա... Նայի՛ր...

ՂՕՂԱՆՋ ՄԱՐՄՆԱԻՈՐՈՒԱԾ ԵՐԱԶԻ

Ես միայն մեր նոր քաղաքամայրում,
Այլ մինչեւ անգամ գիւղական վայրում
Երաժշտական ուսումնարաննե՛ր,
Դպրոցնե՛ր պարի:

— Դեհ ե՛կ, վարպապե՛տ, ու հաւատ ճարի...

Աղջկնակ, մանչուկ, բալիկներ սիրուն,
Զուարթ ու կայտառ մի մատաղ սերունդ,
Եւ նրանց ձեռքից բռնած տատիններ
Տանում են դպրոց ու եռ են բերում...

Պատանի—պարմանն ու նորատիները՝
Աչքները սեւսաթ, դէմքները սուտակ,
Ձեռքներին սրինդ, չեփոր ու ջութակ,
Պայուսակներում ու թեւերի տակ
Տպագիր տետրեր քո նոտաների՝
Խանութից գնուած, դպրոց տանելիս:

— Դեհ ե՛կ, հաւատա նման բաների...

Որպէս նորօրակ հոյակապ տաճար
Եւ մեր պատմութեան ու մեր քերթութեան
Օջախ մի անշէջ ու սուրբ մի կաճառ,

Մատենադարա՛ն ահա, Խաղաղէտ,
Մի չէնք փառակազմ ու հրաշակերտ,
Ամենապարփակ մի չտեմարան,
Որտեղ պահւում է հունձքը մեր հոգու՝
Մեսրոպեան տառի կնիքը վրան,—
Եւ նրա կողքին՝
Մէկ այլ չինուքիւն
Անցուդարձողի ուշք ու միտք գերող —
Հայոց Առաջի՛ն Կոնսերվատորիան՝
Քո ամենասուրբ անունը կրող:

— Դեհ է՛կ, վարդապե՛տ,
Ու խօսքեր ճարի...

Մկրտուած ոգով քո սուրբ հանճարի՝
Քանի՛ երգչուհի, քանի՛ հայ երգիչ,
Եւ քանի՛–քանի՛ հայ երաժիշտներ՝
Գոյասիրահար եւ գոյապաշտներ,
Ելած քո աղբի բեղուն ընդերքից՝
Բեմերի վրայ համայն աշխարհի
Մեր տաղ ու պարի
Թովչանքն են ցրում,
Բուրմունքը փռում
Մեր բան ու բառի:

— Դեհ է՛կ, վարդապե՛տ,
Մի՛ ժպտայ բարի...

Մեր երգի հունը լայնացընելով,
Համանուագի չարքեր ծնելով՝
Ճախրում են Նորքից մինչեւ Նիւ–Եորք,
Սեւանից մինչեւ գոռ Նիագարա
Քանի՛ երգաստեղծ ու նուագարար:
Ու նրանց ամէն նոր համերգի մէջ,

Ու նրանց իրե՛նց — եւ ամէնքի՛ մէջ —
Դո՛ւ ես — հօր նման արիւն ես դարձել,
Փոխարկուել ջրի, նոր կերպ ստացել:
Դո՛ւ ես, Նահապե՛տ, դո՛ւ ես այն հաւի–ը,
Որ հայութիւն է հաղորդում նրանց
Իսկոյն ճանաչուող հայ ազգանուանը,
Հայկական չունչն ու անառես ա՛յն ոգին,
Որ համակում է նրանց ամէնքին,
Եւ որ աչխարհն է զգում–հասկանում,
Ինչպէս Եւրոպա՛ն, այնպէս էլ Ասիա՛ն,
Այն չունչն ազգային, մշտառկայ ոգին,
Որ կեանքում նո՛յնպէս ունի ազգանուն՝
Քո՛ անունը սուրբ, քո՛ — կոմիտասեա՛ն...

— Դեհ է՛լ, մահացա՛ծ,
Ու մի՛ համբառնայ,
Դեհ արի՛, պանդո՛ւխտ,
Երկիր մի՛ դառնայ...

ՂՕՂԱՆՋ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Ո՞ր վերադարձա՛ւ...
Ներանից առաջ
Աչխարհասըփիւռ մաղապուրծ հայեր,
Դիպուածն էր որոնց չար մահից պահել,
Որպէսզի յետոյ տայ լաց ու հառաչ
Եւ — ի տրխտուր — իր հերթին տանջի.
Աչխարհասըփիւռ — մաղապուրծ հայեր
Կրկին հայրենի հողն էին դառնում,
Մարած չէնների կրակը խառնում,
Որ ծուխը վինչէի,
Երդիկը չնչի
Սէգ Մասիսների աչքի յանդիման,
Փէչերի վրայ Արադածների —
Ի հանդստութիւն բիւր ընկածների:

Վերադառնում էր, դալիս էր հիմա
Նա՝ անթաղ զոհը նոյն առուփախի,
Խելաբորբոքը նոյն սառ ու պաղի,
Այն մխակ յոյսը եւ ապաւէնը
Մեր պար ու խաղի,
Մեր երգ ու տաղի,
Մեր հինն ու նորը իրար չաղկապող
Ծիածանակերպ այն ժապաւէնը,
Որ հատուեց մի օր դանակով չարի

Եւ որին ահա քսա՛ն ձիգ տարի,
Նախ՝ վերախոհման ակընկալիքով
Եւ ապա՝ առնչով հանդստանալու —
Սպասում էինք՝
սիրով բանալու
Մեր ժպտուն ներկան ծիծռուն գալիքով:
— Գալուստի՛դ մեռնի ֆո կարօտ եարը
Ախպէ՛ր ջան, արի՛, դեհ արի երթա՛ւիք...

Նա՝ հեռապնաց մեր կարօտեալը,
Նա՝ մինուճարը, զաւակը մեր թանկ,
Նա՝ հէգ պանդուխտը մեր քսանամեայ,
Վերադառնում էր, գալիս էր հիմա.
— ... Ֆո գալո՛ւն մեռնեմ,
...կարօ՛տըս առնեմ...

Սեւ էր գնացել՝
Քեղ-ժօրուքը սեւ,
Վարդապետական մութ վեղար հագած —
Սեւ էր գնացել՝
Եկաւ ճերմակած...
— Ա՛խ, շատը կուլ տամ, գոնէ ինչն ասեմ,
Անաստուա՛ծ Աստուած, բա ֆո՛ ինչն ասեմ:
Գնացել էր նա —
Հիմա բերեցին.
Գնաց՝ սեփական ոտքերի վրայ,
Իսկ հիմա նրան՝
Մեր տաղերէցին
Ահա բերեցին... ձեռքերի՛ վրայ...
— Վա՛խ, մէրդ մեռնի,
Ծաղկաթափ ևռնի...

Գնաց այն պահին,
Երբ ահի՛,
Մահի՛
Շունչն էր մոլեգնում որպէս չար խորշակ,
Երբ կուլ էր գնում ողջ ցեղը հայի,

Ու դեռ չէր փակուել մի պատանային
Մարդակերպարան անկուշտ ախորժակ,—
Եւ հիմա հեռուից դառնում էր նա տուն,
Մի տուն, որ փրկուած ամեհի հողմից՝
Շինուել էր կրկին եւ ամէն կողմից
Խաղողի վազով երեան էր պատում:
— Գարուն է, արի՛,
վախ, էեզ ի՛նչ արին...
Ու վերադարձաւ հոգն իր հայրենի,
Որին առյաւէտ կորցրած կարծեց —
Եւ հէնց ա՛յդ, հէնց ա՛յդ միտքը վայրենի
Որդի պէս նրա ուղեղը կրծեց...

Ու վերադարձաւ Արարատներին,
Արագածներին իր քառակատար,
Իր հող ու ջրին՝ անարատներին,
Իր տաճարներին ու պալատներին,
Իր արտին, այգուն եւ արօտներին,
Անցեալ, ապառնի ու յարակատար
Բոլորանուէր ա՛յն կարօտներին,
Որ մնում էին յաւէտ անվթար,
Որ կիտուել էին քանդհի՛նգ տարի
Իր մթար սրտում,
վթար մտքի մէջ —
Ա՛յն դժբախտ օրից, երբ Մայր տաճարի
Գաւիթը թողած, ցաւած ու խռով,
Զուգելով — դժկամ — ակամայ — դառով
Նա դնաց Պոլիս
Եւ ապա... Փարիզ...
— Ա՛հ, գալդ լինէր,
Գնա՛լ չլինէր...

Ու վերադարձաւ մեր սուրբ հեռական...

Ամառը մտքից լինքը խելագար՝
Զգիտէր թէկուզ, որ քսան տարում

Իր վերածընուած ու նոր աչխարհում
Վառ ղօղանջումը իր ընդունն զանդի
Արձագանգել էր խեղաթար թափով,
Լացով հիացման,
Որոտուն ծափով
Ելել էր, հորդել
Եւ նոր մի ափով
Հասել, խառնուել ուրիչ հոսանքի.
— Ումո՛ւդ ջան, նաևիին
Քո ցաւը տանի...

Ու վերադարձաւ, որ էլ չըգնայ,
Որ մրսած հոգին տաքանայ
Ժողովրդական սիրոյ տաք օդով,
Որ չիմանալով՝ զառնայ սէգ կոթող՝
Ողորկ դրանիտ ու բըրոնզ հաղած,
Եւ այնտեղ... նրա հերքը ճերմակած
Առաջուայ նման — ընդմի՛չտ — մղանայ,
Հայեացքի մուժը այնտեղ չքանայ,
Աչքերը փայլեն իրենց հին ցոլքով,
Ու նորից ցրեն
ու փռեն
չորս կողմ.
Մարդեղացումը աստուածայնութեան,
Եւ սուրբ բերանի մնջախաղ երգով,
Շարժումով ձեռքի
Կրկին տայ դասեր՝
Դասեր մեննբրկի,
Բագմաճայնութեան...
— Աչխերդ՝ պայծառ
Բերաևրդ՝ տաճար...

Նա վերադարձաւ —
Եւ ո՛ղջ մի երկիր,
Ժողովո՛ւրդ մի ողջ սրտով վըչտառուռ

Ելաւ հերթ ի հերթ,
Եկաւ չար ի չար՝
Իր խաղ ու պարի, իր տաղ ու երգի
Կախարդիչ մոգին հրաժեշտ տալու...
— Իմ կանա՛չ արեւ,
Ի՞նչ մնաս բարեւ...

ՂՕՂԱՆՋ ՀՐԱԺԵՇՏԻ

Ընդարձակ, Արարատի
Հայեացքի դէմ սպասուր,
Սեւ տուֆակերտ մի պալատի
Տրամահանդէս դահլիճում
Պառկած էր նա՝
Որպէս անթափ
Բայց յիրաւի թաղասուր,
Որ ունի դահ, բայց ոչ երբեք
Իր սէգ դահից վար իջում:

Եւ դահատեաց մի ժպտուրդ,
Որն իբր արդար հատուցում,
Յեղափոխել մի ողջ աշխարհ
Ու ջարդել էր հին դահեր,
Հիմա ուրիշ մի արքայի
Ծով յարգանք է մատուցում, —
Եւ փղձուկն են հպիւ պահել
Կին, տղամարդ, ծեր, ջահել:

Քարացել են ակնածանքից
Յեւ երիզով դրօշներ,

Հա՛յ պետական դրօշները,
Լսո՞ւմ ես դու վարդապե՛տ:
Եւ մի ամբողջ մայրաքաղաք,
Մայրաքաղա՛ք, ո՛չ պակուճ,
Իր հոգու մէջ, վերջի՛ն անգամ,
Աչխատում է դրոշմել
Կերպարանքը քո սիրելի,
Քո դէմքը թանկ, որ թէպէտ
Երբեմն պէս չի չոլչոլում,
Որ ցոլուն չէ եւ ջղուտ,
Բայց դունատ է ո՛չ որքի պէս,
Այլ մի արդար սրբի՛ պէս...

Ու կանգնում են պատուոյ պահակ
Մասի՛ս, Սիփա՛ն, Արագա՛ծ՝
Ձեռնակահեր դրուհն իրենց
Աճլունիկ դէմ վար հակած...
Ու կանգնում են պատուոյ պահակ
Հայ աչխարհի մեծերն ամէն,
Ամէն երէց ու աւագ...

Եւ քեզ ծնած մի ժողովուրդ՝
Հիմա դարձած քեզ դաւակ,
Հրաժեչտի խոր տրտմութեամբ
Մխաժոդով ու հաւաք,
Կքուած ցաւից հայրակորոյս,
Կիպուած վշտի խոր տապից՝
Գալիս է լուռ, դալիս հերթով,

Որ հոգու մէջ խոր տալէ
Մասունքներով սրբոցն առաքէ
Ու դէմքը քո,
Դէմքը սո՛ւրբ...

ՂՕՂԱՆՋ ԹԱՂՄԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Թաղման թափօրն անվերջ ձգուեց
Աբովեանից մինչեւ Պանթէոն,
Որտեղ արդէն, ամէնից վաղ,
Հրապէսն էր նրան կոծում՝
Եղերամօր եղանակով:
Եւ մարդկային ծովի վրայ հանդարտ ճօճուեց
Պսակներով առատաստուած մի նաւը նաւակ...

Դարձել էին յուղարկաւոր
Բազմահազար երեւանցիք,
Եւ... ո՛չ միայն վերջին ու նոր մեր ոստանի
Բնակիչներն արտասուաթոր,
Եւ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ փոուած էր իր պետութեան սահմաններում,
Եւ ո՛չ միայն մի ժողովուրդ,
Որ փրուած էր ողջ աշխարհի լայնքի վրայ,
Այլեւ... բոլոր մեր զոհե՛րը միլիոնաւոր,
Մեր բիւրաւոր մեռելնե՛րը, որ մինչեւ իսկ
Զարժանացան թաղման ծէսի, —
Բոլո՛ր նրանք, որոնց բախտից ահաղարհուր
Կորաւ եւ սա՛,
Այո՝ զոհը մեր ամենամե՛ծ...

Հայաստանեան լեռներն էին յուղարկաւոր
Եւ զերեվար լեռները մեր՝

Կարսից Զէյթուն...
Բուրվառում էր հայրենաշունչ բուրիչ քամին...

Զանգակաձայն իր դուստրերից նա՛, որ ունէր
Հայկից առած անուշ անուն,
Շիրիմ կոչուած այն փոսի մօտ,
Որ յիւրաւի պիտի կոչուէր
Նոր Ծով Վիրապ,
Անմարդկային լռութեան մէջ սկիզբ առեց
Պահիպատչաճ Զինւոր եա–ին.
— Կեռանա՛լ մի...
Ու կեռացան–խոնարհուեցին բիւր դլուխներ...
Արցունք կաթեց պսակներին,
Լսուեց փղձուկ համատարած՝
Իբրեւ երկի մի իւրատիպ նուագակցում...
Եւ չէր ճարուի բոլորի մէջ մի անձ գոնէ,
Որ ակամայ եւ մեկուսի չըմտածէր.
— «Ձի՛ կեռանայ» —
Վկան, նաեւ առհասարակ՝
Արաբատան էր — երկնաձիգը,
Արագածն էր՝
իր չորս անկոր կատարներով,
Ինչպէս նաեւ այս երկը նոյն,
Որ հայցում էր.
— ...Հեռանա՛լ մի:

Հեռանում էր: Բայց հեռանում
Ահաւասիկ այս իրիկուայ արեւի պէս,
Արեւի՛ պէս,
Որ ընաւ էլ մայր չի մտնում,
Այլ իր լոյսով ողողելու
Ուրիչ ու նոր կողմեր գնում:

Հեռանում էր: Բայց հեռանում,
Որ մօտիկից հեռանալով՝

Հեռուներում լայն ծաւալուի ու տարածուի,
Որ կիսատը նոր լրացուի
Եւ տարածուած ու լրացուած՝
Երբեւիցէ չմոռացուի:
Եւ ի զո՛ւր էր երդը խնդրում.
— ...Մոռացա՛լ մի...

...Երբ սկսեց աճիւնն իջնել
Շերիմ կոչուած այն փոսի մէջ,
Որ յիրաւի պիտի կոչուէր
Նոր Խոր Վիրապ,
Նոյն այդ պահին հայ երկնքից
Ցանկարծակի անձրեւ տեղաց,—
Զարմանալի դուզադիպո՞ւմ,
Թէ՞ խնկապէս երկինքն անդամ
Ողբում էր քեզ՝
Վաղարշապատ–տրտում–հանդուստարար
Իր անձրեւով...

...Երբ սկսեց աճիւնն իջնել
Շերիմ կոչուած այն փոսի մէջ,
Որ յիրաւի պիտի կոչուէր
Նոր Խոր Վիրապ,
Այդ վայրկեանին ո՞վ չլսեց,
Որ բովանդակ աշխարհով մէկ
Փռուած բոլոր եկեղեցիք հայահաւատ
Իրենց բոլոր զանգակներով ու զանգերով
Դէպի երկինք զօդանջեցին.
— Դռներըդ բա՛ց...
Եւ հայկական տաճարների բիւր բեմերից
Կոմիտասեան Պատարագ–ով
Ժամերգեցին քե՛զ, Կոմիտա՛ս:

— Երբեմն էի լոյս — եւ այժմ
Խաւար եմ եւ ստուեր մահու...
Ո՛չ, այս անգամ սխալուեցի՛ր, պատարագիչ.

Ձա լոյս էր վառ ու լոյս է արդ,
Ու կը մնայ միշտ լոյս գուարթ,
Լոյս՝ աչքերում հայ մանուկի,
Լոյս՝ մտքի մէջ հայ պարմանու,
Հայ հարսների պոպած ծոցում,
Հայ թոռնօրօր նանիների
Ինքնամոռաց ժպիտի մէջ, —
Հայ այրերի ու հայ կանանց
Ջեմ սրտերում սիրատըրոփ:

Քեզ, վարպապե՛տ,
Անփուտ հոգին ի պահ տալիս
Ի գո՛ւր էին պատարագում թաղման երգով.
— Ի վերինըն երուսաղէմ...
Ո՛չ թէ թաղման երգն էր պատշաճ,
Այլ յարութեան վառ մեղեդի՛ն.
— Փառք ի բարձո՛ւնս...
Օրհնեա՛լ ես դու...
Օրհնեա՛լ ես դու —
Եւ չես թաղւում ու հոգ պառնում,
Այլ թաղուելիս
Յարութի՛ւն ես կրկին առնում...

— Օրհնեա՛լ ես դու —
Գո՛ռն Աստուծոյ...

Ա՛խ, գո՛ռն արդար, որ գոհ գնաց
Եւ անդանա՛կ գոհուեց չարին —
Արհաւիրքի այն սեւ տարին,
Երբ հայ երկրում հայ չմնաց...

— Ելն ի բարձունս... էառ աւար,
Բաշխեալ պարգեւս որդւոց մարդկան...

Պարգեւ բաշխեց՝ որդիներին
Իր տարաբախտ ժողովրդի
Եւ... մարդկութեա՛ն:

Պարզեւ բաշխեց՝
Աստծոյ նման՝ չռայլօրէ՛ն,
Եւ բաշխելով հարստացա՛ւ...

— Գովեմ զքեզ,
Բարեբաւեմ զ...

Բայց դրուատման ի՞նչ խօսքերով
Բարեբաններ ու քեզ գովեմ,
Թէ աղքատ է յանկարծ Թուրմ
Բառարանը մեր հայկազեան:
Ի՞նչ խօսքերով բարեբաններ
Քե՛զ, վարդապե՛տ...
. . . . . .
Դո՛ւ — վարդապե՞տ:
Դու Ամենայն Հայոց Երկի վեհափառն ես,
Դու՝ մեր երկի Մեսրոպ Մաշտոց —
Գիրն ու տառն ես մեր մեսրոպեան:
Հայոց երկի
Անծիր հերկի
Ե՛ւ ակօսն ու խոր.ունկ տառն ես,
Ե՛ւ մատնընտիր սերմը նրա,
Ե՛ւ խոստումը գալիք բերքի...

Անզուգական՝ աղի նման —
Դու երբեմըն նաեւ գառն ես՝
Դարեր ի վեր ոտնահարուած
Մեր վարունգի թաղի նման...

Եւ ծիրանի այն ծառն ես,
Որ ինչքան էլ ձղակոտոր՝
Շըտկուել է ու բար տուել,
Ու... մեր դարդը իրար տուել...

Եւ հայրենի այն ծիծառը,
Որ յաւիտեան բուն է դրել

Մեր հողու մէջ,
Մեր կիսաւեր ու դեռ կանգուն տաճարներէն
Եւ մեր երկրի դմբէթի տակ...

Դու՝ մեր տաւիղ —
Եւ քո լարը
Մինչեւ անգամ եւ հառուելիս
Հայերէն է նորիդ ճնշում:
Դու՝ մեր սրտի ձայնալարը —
Մինչեւ անգամ վհատուելիս
Հայերէն ես դարձեալ տնքում...
Դու ես քարը
Եւ սրբատաշ մեր պատչարը,
Հայը օրուայ
Եւ նեղ ժամի մեր պաշարը,
Մեր փակ հոգին, բայց աչխարհը,
Սրբագործուած մեր նչխարը.
Եւ մեր ճարը՝
Օտարամուտ ազգի դիմաց,
Ինկածաւալ մեր տաճարը՝
Օտարահոտ ազգի դիմաց,
Վերապարձի մեր պատճառը՝
Մեր հակադիր դպրի դիմաց,
Համահաւաք մեր հանճարը՝
Աղգասբիւռ բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝
Վստահելի թիկունքն ես մեր,
Մեր երկերի Ծովասարը
Ու բինդեոլեան ակունքն ես մեր,
Մեր արնոտուած հաւքի լեզուն,
Մեր կարօտած ֆլուգն եարը,
Մեր լեփլեցուն հոգիներէն ձայնատարը,
Մեր երգերի խա՛զը—նոտա՛ն—ձայնատա՛ռը,
Ձայնասբիւ՛ռը կենդանի

Ու ձայների թանպարա՛նը,—
Մեր հայկական երգարա՛նը...

Արտը մեղնից՝ դու ես մաճկալ,
Յարդը մեղնից՝ ցորենը դու,
Հարթը մեղնից՝ կառար դու սէգ.
Ձարդը քեղնից՝ մե՛նք վեղեցի՛կ,
Խարտը քեղնից՝ մե՛նք սուր սուսեր,
Մարտը քեղնից՝ մե՛նք յաղթական.
Երթը մեղնից՝ դու ես վարորդ,
Բերդը մեղնից՝ դու բերդակալ,
Շերտը մեղնից՝ նըստուածքը դու.
Խորթը մեղնից՝ դու հարազատ,
Ձորտը մեղնից՝ դու մի՛շտ ազատ,
Որթը մեղնից՝ դու թունդ գինի.
Բիրտը մեղնից՝ դու նըրբակերտ,
Դիրտը մեղնից՝ մինչ դու դուրս՛լ,
Սիրտը մեղնից՝ մինչ դու հոգի՛ն,
Լուրթը մեղնից՝ երկի՛նքը դու,
Շուրթը մեղնից՝ դու համբո՛յրը,
Ցուրտը մեղնից, իսկ դու՝ կրա՛կ,
Իսկ դու՝ օջա՛խ,
Իսկ դու՝ թոնի՛ր...

Եւ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչբո՛ւռը,
Այս խաչբուռը՝ քո՛ւ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ,
Դո՛ւ՝ մեր երգի
Մշտահնչուն նուագարան.
Ընդունիր դու՝
Մեր ցաքուցիր
Մասունքների հաւաքարա՛ր.
Դու՝ խաղերի մեր քերական,

Դու՝ հոգեւոր մեր չարակաս.
Դու՝ սրբազան
Մի աւազան,
Որ մեր հոգին ախտահանեց,
Դու՝ բիբլիական մի գաւազան,
Որ ուր դիպաւ՝ աղբիւր հանեց.
Դու՝ մեր կարօտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մըչտահունչ ու մըչտարթուն
Անլռելի զանգակատո՛ւն...

11· 9· 57—21· 11· 58 թ·
Մոսկուա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յայգալոյսի համագիգ

Ղօղանջ աւետիսի 10
Ղօղանջ որբութեան 13
Ղօղանջ ցնծութեան 17
Ղօղանջ յուսոյ 20
Ղօղանջ ներման 23
Ղօղանջ արթնութեան 27
Ղօղանջ խլաճայն 32
Ղօղանջ մեղսական 41
Ղօղանջ յայտնութեան 43
Ղօղանջ օծումի 49

Արեւագալի համագիգ

Ղօղանջ ամառնօրեայ 56
Ղօղանջ աշնանաչունչ 61
Ղօղանջ ահագնացող 65
Ղօղանջ բնաչխարհիկ 70
Ղօղանջ բողոքի 73
Ղօղանջ պանդխտական 80
Ղօղանջ կոտրածի 86
Ղօղանջ զարթօնքի եւ կենսատման 89
Ղօղանջ զարմանքի 101

Միջօրէի համագիգ

Ղօղանջ ուխտատեղւոյ 105
Ղօղանջ խաղկապի 114
Ղօղանջ ամենամուտի 117
Ղօղանջ հարսանեկան 133
Ղօղանջ մրմուռի 269

Ծաւալուող համագանգ

Ղօղանջ հրաշագործման 141
Ղօղանջ յաղթութեան 144
Ղօղանջ միջակութեան 151
Ղօղանջ հարցումի 158
Ղօղանջ փախուստի 165
Ղօղանջ պալատական 167
Ղօղանջ նուաճման 171
Ղօղանջ մրցաւարտի 179

Եղեռնի համագանգ

Ղօղանջ ընդհատուած 183
Ղօղանջ վերջին պարնան 185
Ղօղանջ նախճիրի 188
Ղօղանջ եղեռնական 199
Ղօղանջ աքսորի 203
Ղօղանջ մթագնումի 215
Ղօղանջ ցնորման 232
Ղօղանջ անանց սուգի 235

Ամագնացող արձագանգ

Ղօղանջ վերածնման 241
Ղօղանջ մարմնաւորուած երգի 249
Ղօղանջ վերապարձի 252
Ղօղանջ հրաժեշտի 257
Ղօղանջ թաղման եւ յարութեան 260

Printed by
SEVAN PRESS
P. O. Box 2669
BEIRUT - LEBANON

Այս գիրքին տպագրութիւնը աւարտեցաւ 1963, Ապրիլի 20-ին, տպարան ՍԵՒԱՆի մէջ:

Archbishop
Vicken Aykazian

Գին՝

Լիբանան՝	400 Լ. Գ.
Սիւրիա՝	500 Ս. Գ.
Աւտոսահմանի՝	2 Տոլար

Ապապրաւիֆի համար դիմել՝

SEVAN PRINTING HOUSE

P. O. B. 2669

Beirut

Lebanon

HAGOP GULOYAN

Imm. Halwani

Rue Maarad

Beirut

Lebanon

PRINTED IN LEBANON **SEVAN PRESS**